

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)


Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԱՆՐԻ ԹՐՈՒԱՅԱ

ՍԳԱԿՈՐ ԶՅՈՒՆԸ



ԱՆՐԻ  
ԹՐՈՒԱՅԱ

ՍԳԱԿՈՐ  
ԶՅՈՒՆԸ

"ՀԱՅԱՍՏԱՆ"

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 1974



ներկուք ու լայնաթիկունք. նա ասես ժայթքել էր երկրի ընդերքից, քարերի ու արմատների գալարումներից: Երկար սրունքներին քաշած տաբատը ուռչում էր ծնկների ներքևում: Մուգ գույնի կոպիտ գործվածքից բաճկուն էր գցել ուսերին: Բարձր էր պահել գլուխը. դիմագծերը հստակ էին, մաշկը ճաքճքված էր կաշվի կտորի նման: Արևախանձ հոնքերի տակ՝ մանկական հրճվանքով փայլում էին կապույտ ու կլոր աչքերը: Երբ նա ժայտում էր, այլևս տարիք չուներ: Նա մրմնջաց.

— Անա և դուք, ահա և դուք, շրջմոլիկներ:

Խոսք չկա, մայր ոչխարը լավ տեղ էր ընտրել: Մացառապատ փոսում ձյուն չէր նստել:

Խճաքարերի ու մամուռների վրա ցրված, անխող արածում էին տասնհինգ գառ: Մեկը սնունդից ուռճացած, աղոթողի նման չոքել էր առաջին երկու թափի վրա: Ուրիշ երկուսը ճակատ ճակատի տված որոճում էին երանությամբ: Մի գանգուր գառնուկ ցատկեց, արտինգ տվեց, կպավ մոր կողին: Իգային խորասուզված համրում էր իր ունեցվածքը:

— Տասնչորս մաթի, մի խոյ, երեք գառնուկ: Սրանցից մեկը երևի ծնվել է անցյալ շաբաթ:

Այդ ամենը նա սուսց բարձրաձայն, ապա իրանը ձկեց ու երեք ուսյունով հասավ հեղեղատի կենդրոնը: Կեղտոտ բողի փոփուրի մեջ կորած գառները նայում էին հովտի տիրոջը, որ սնտեկում էր իրենց: Հպարտության զգացումը ակնհայտ լցրեց Իգայու սիրտը: Նա ձեռքը խոթեց աղով լի մաղախը: Մունեթը՝ ամենապատավ ոչխարը, նրան դիմավորեց հարգալից մայրնով:

— Ուրախացա՞ր,— մրմնջաց Իգային:— Երևի վախենում էիր չգամ..

Մուկեթը անհարթ ու տաք լեզվով շոշափում էր նրա մատները: Մյուսներն էլ մտտեցան, հրասյուրված աղի ակնկալիքով: Իգային մինչև ապրիլը պարուրվել էր բրդի ամպով: Անասունների մորթը տեղ-տեղ ծածկված էր բարակ սառույցով: Կոծոճը, խոտի ծեղն ու սատկած միջատը նրանց բրդի գերին էին:

Իգային լիաթոք շնչեց ոչխարների կծու հոտը: Մի գառնուկ կպել էր անուշադիր մորը, կաթ էր ծծում և երբ թողեց պտուկը, կաթի բարակ թելիկ կախվեց շրթունքներից: Նորածինը՝

ականջները կախ, դունչը հուպունքից թաց, կանգնել էր քիչ հեռվում՝ իրեն հապիվ պահելով թույլ առտիկների վրա:

— Քեզ գրկած կտանեմ,— ասաց Իգային... Դու ուժ չունես բաղելու...

Նա ոչխարների միջով հասավ միայնակ գառնուկին:

— Եկ, եկ ինձ մոտ...

Գառնուկը մի կողմ ցատկեց, շոջանաձև վապեց, ցնցելով գլուխը: Իգային, գետնին չոքած, նրան էր պարզել լայն սփը:

— Եկ, դմբո, ես քո բարեկամն եմ...

Սա տատանվում էր: Իգային ձևացրեց, թե գնում է: Գառնուկը անմիջապես մոտեցավ, երկչուտ հոտոտեց նրա կռիկները: Իգային հանկարծ թոցրեց գառնուկին, սեղմեց կրծքին: Փոքրիկ, ջղուտ, մի տաք վանգված խփվում էր նրան, բեկբեկվում, աղեկաուր մայում: Իգային ծիծաղում էր և ձախ ձեռքով շոյում նրա մետաքսե փորը, քնքուշ ու ցնցվող պարանոցը, որտեղից վախվորած մայուն էր եկնում: Այնուհետև նա աչ ձեռքով քաշեց ուսի խուրջինը, բեռը մեջը դրեց: Թակարդն ընկնելով, գառնուկը մի քիչ բողոքեց կճղակների թույլ հարվածներով: Մի ոչխար առանձնացավ հոտից:

— Դու մա՞րն ես,— հարցրեց Իգային:— Մի վախենա, այստեղ է...

Եվ փոքրիկին մոտեցրեց մորը, որ սա հանգստանա: Գառնուկը ծամում էր խոտի մնացորդը: Բերանից մեղմ գոլորշի էր բարձրանում:

Երկնքի մշուշում փայլում էր արեգակը՝ կարմիր և հեռավոր: Չյունը փոխել էր բարձրաբերձ լեռների պատկերը: Ասես պատառոտված, ձերմակ սավան էր կախվել ծերպերից: Գլորված ժայռաբեկորները ծածկվել էին այլուրի թանձր շերտով: Կուռիները շարավել էին նուրբ արծաթափոշով: Միայն ներքևում, մարդկանց կացարանների մոտ չէր փոխվել հողի գույնը: Իգային խուրջինն ուսովը գցեց և ասաց.

— Օն, անար:

Օղը մաքուր էր և սառը: Կիսաշոջանակ կազմած լեռները ասես ճանիտ էին դնում հեռացող հոտին: Իգային քայլում էր առջևից: Անասունները հետևում էին նրան՝ միմյանց սեղմված, օրորելով բրդոտ մեջքները և կորյթարդ դեչները: Նրանց մեջ

էր կենդանոջ, կծու հոտ արձակող խոյլը. դռնըսը գրել էր մի ոչխարի գավակի և ծոյլ ու երակկոտ քջիլում էր ընթացքի հետ: Երբեմն-երբեմն Իգային շուռ էր գալիս նայելու հոտին: Երբ գառները ձյունոտ տեղով էին անցնում, սուկալի կեղտոտ էին երևում: Նրանք տրտինգ էին տալիս, մայրու, աչ ու ձախից պոկոտելով մի-մի ձառնան ռափիկ: Նրանցից հետո երկար, կեղտոտ հեռք էր մնում սպիտակ տաքածության վրա, արտեղ քամուց փշաքաղվում էին ցանցառ խոտի վնջիկները:

Իգային ուսարունով անցավ փոփրուն հեղեղատը: Ոչխարները հետևեցին նրան: Նա թիկունքին պզում էր նորածին գառնուկի կշիռն ու շերտությունը: Գառնուկը չէր շարժվում, արդեն վատահոսություն էր ձեռք բերել: Իգային նորից ափսոսեց, որ եղբայրը մերժեց սար գնալ: Դա նշանավոր օր էր, բայց եղբայրը՝ Մարսըլենը, չէր հասկանում: Նա գնացել էր քաղաք: Ի՞նչ անելու: Ի՞նչ խմանա: Երևի հարմար աշխատանք գտնելու հույսով: Իրենց կյանքը հեշտ չի գյուղում: Իհարկե, ո՛չ Իգայու պատճառով. Իգային ուժեղ է, համբերատար և կարող է մենակ երկու մարդու գործ անել, իսկ Մարսըլենը միշտ փախչում է դժվարություններից, կռվում, բողբոլում, պահանջում հասանելիքից ավելին: Վատն է նրա բնավորությունը, բոլորը գիտեն: Անցյալ շաբաթ սողոցարանի տերը գործից հանեց նրան: Իգային նույնպես դուրս եկավ. եղբորից հեռու, նա ոչ մի հաճույք չի ստանում աշխատանքից ու վատասկից: Կյանքն անխնայառ է թվում, եթե իրեն չի ղեկավարում Մարսըլենը: Աշխատանքի վարձվելիս, եղբայրներն ասում էին. «Վերցրեք երկուսիս, կամ ոչ մեկիս»:

— Նա ճարպիկ է, այնպես կրասավորի, որ մեկ վարձեն: Զարհանքում կամ փայտավաճառի մոտ: Իպուր չհարցրի: Թեև բան չէր ասի: Նա երբեք ինձ բան չի ասում:

Երբ Իգային ոչխարների հետ մենակ էր մնում, նրան թվում էր, թե մտածում է արտակարգ պայծառությամբ: Իսկ արագախոտ Մարսըլենի առջև կորցնում էր մտքի թելը, բառերը թռչում էին գլխից, ջփոթվում էր ու անխնայառ-անխնայառ կրկնում. «Այո, այո»: Այն դժբախտ պատահարից առաջ ապրպես չէր: Նա գիտեր, որ գյուղում ոմանք իրեն տխմար են

համարում: Նա հոնքերը կիտեց: Մտքերը զանգի մեջ լողում էին ամպերի ալարկոտությամբ. «Գառները... տունը... Մարսըլենը... Մարսըլենին հանեցին սողոցարանից... Մարսըլենը հոգս ունի, ջղային է, լեզվանի, կովարար»: Թերևս ամարիքի տարբերությունն է պատճառը՝ ինքը 52 տարեկան է, Մարսըլենը՝ 30, որ Իգային եղբոր նկատմամբ տածում է գաղտնի բնքություն, երկյուղած պաշտամունք և ոչինչ չի մերժում նրան: Նրանց հայրը՝ Վոդան լը Դրյուն, գանգուր այտանբուսաներով ծեր ուղեկցորդը, մեռել էր լեռներում. մի ալպինիստի հետ կայծակնահար էր եղել ծայրի վրա, Մարսըլենի ծնունդից քիչ առաջ: Երբ բռնեցին մայրիկի երկունքի ցավերը, ձյունը փակել էր ճամփաները և գյուղը կտրել աշխարհից: Տասներեք պարզված էր ուրիշ տեղ: Իգային նոր էր վերագարձել պինվորական ծառայությունից և տատուր փոխարեն իր ձեռքով ապատեց իր եղբորը: Ապատեց, լողացրեց, բարուրեց: «Նա՛ր՝ օճառով բլաց մոր ալյուրնոտ և ուռած մարմինը: Երբ տատները եկավ, սենյակն արդեն մաքուր էր, մայրն ու երեխան հանգրտանում էին կողք-կողքի: Նավթի ճրագը չէր ծխում: Երկու տարի անց, գողերոցքից հանգավ Վոդան լը Դրյունի այրին՝ այտերը ցամաքած, վառանցանքի անկապ խոտերը շուրթերին:

«Որ նման ուղեկցորդ դառնալով, Իգային եղբորը մեծացրեց առանց կողմնակի օգնության, մեն-մենակ: Մարսըլենը դպրոց էր գնում, բայց ուսման սեր չունեց և կարգ ու կանոնի չէր ենթարկվում: Ոչինչ չօգնեց, ոչ խրատ, ոչ սպառնալիք: Սովորում էր լույ ասն, ինչ դուր էր գալիս իրեն: Բացակայում էր կրոնի դասերից, իսկ կիրակի օրերը փոխանակ պատարագ լսելու, հասակակից տղաների հետ փախչում էր անտառ՝ խաղալու: Այդպես անբան էլ մեծացավ Մարսըլենը այն լեռնական տղաների նման, որոնք ոչ շինական են, ոչ բանվոր, ոչ աղոթք գիտեն, ոչ վար ու ցանք: Փայտահատ են ըստ ցանկության, նրբեմն՝ սահման անցկացնող և անպայման՝ որսագող: Եղբորը գեթ մի քիչ կարգապահության վարժեցնելու համար Իգային. ալպինիստներին ուղեկցելիս, նրան հետը տանում էր լեռներ, որպես բեռնակիր: Այդ կանոնավոր պրոսանքը մի քիչ մեղ-

մեց Մարսըլենի հախուռն բնավորությունը: Բայց այն դըժ-  
բախտ պատահարից հետո վիչացավ նրանց կյանքը:

Գառնուկը մայեց խուրջինում: Մայր ոչխարը բաժանվեց  
ընկերներից, եկավ հոտոտելու ձագուկին, նա մեկնում էր  
պարանոցը, շարժում պոչը, և նրա հեպ ու խելացի բիբերի շեյ  
ծիածանաթաղանթում փայլում էր մի կաթիլ յուս: Իգային կանգ  
առավ, բացեց խուրջինը, գառնուկին թևերին առավ:

— Տե՛ստ՛ում ես: Կարող ես հանգիստ լինել...

Ոչխարը երախտագիտությամբ խոնարհեց գլուխը, ապա  
գնաց միացավ բռնացող հոտին: Նրանք մտնում էին շեկ փշե-  
րով ծածկված, ցեխոտ անտառակը: Չնակոյտների մեջ տեղ-տեղ  
ցցված էին սև կոճղեր: Չառիթափ արահետը իջնում էր սևա-  
մած սաղարթների միջով: Կուռնիների բարձր ճյուղերը դեռ մի  
քիչ ձևրմակություն էին պահել: Երկինքն ամպում էր:

Իգային գառնուկին տանում էր գրկած, ինչպես մրսկան  
երեխայի:

— Այս երեկո Մարսըլենը կվերադառնա, կտեսնի, որ  
անասունները գտնում են, քաղցր խոսքեր կասի: Կասի «Իգա-  
յի... Իգայի...»:

Գլուխը բարձրացրեց և աշխատեց պատկերացնել, թե ինչ  
կասի եղբայրը: Բայց նորից մտքերը շաղվեցին ուղեղում: Նա  
շշուկով կրկնում էր «Իգայի... Իգայի...»: Եվ մի լայն ժպիտ էր  
բացվում նրա շուրթերին:

Ս

2

Արեգակը թաքնվում էր լեռան ետևում, երբ Իգային հասավ  
սայիտակ բարեբով ցանկապատված հերկած դաշտերին: Գյուղը  
գտնվում էր ճամփի ծայրին՝ բլրակի լանջին և տնակներն  
իրենց ողջ ծանրությամբ խրվել էին հողի մեջ, ասես վախենում  
էին գլորվելուց: Աղյուսաշար տանիքները գլխարկի նման հով  
էին անում պատիկ ու անկյանք լուսամուտներին: Հատած  
բուրգի ձևի փայտյա բարձր ծխնելույզները հանդարտ ծխում  
էին իրիկնամուտում: Այս վայրը այն վերջին կետն էր, որտեղ  
մարդիկ համարձակվել էին տուն կառուցել և հատիկ պահ

տալ հողին: Բայց քարքարոտ ու դաժան հողում հաճարն ան-  
գամ կարգին բերք չէր տալիս: Ծերունիները մեռնում էին  
առանց մի բան ետ գցելու, ջահելները հերթով փախչում էին  
այդ անիծյալ անկյունից, որտեղ ձյունը վեց ամիս շարունակ  
իրենց կտրում էր աշխարհից: Նախկինում բարգավաճ ու  
մարդաշատ գյուղը այժմ ընդամենը տասնութ ծուխ ուներ, և վե-  
րևում՝ լեռներում կորած մի քանի ապաստան պլպիկիտների  
համար:

Որքան մոտենում էին տներին, ոչխարներն այնքան հա-  
մառ էին մայում, ուրախացած, որ ճանաչում են իրենց ձեռ-  
նավայրը: Իգային գոհ էր նրանց բարձրաձայն աղմուկից,  
որովհետև ուզում էր մայրկանց հիացնել իր անասուններով:  
Ճանապարհը խեղդվում էր երկշար տների արանքում: Ծեր  
Ռուբին, որ հովտի էլեկտրագործարանում էր աշխատում, իր  
տան առջև կանգնած փոքրիկ կացինով փայտ էր ջարդում  
կոճղի վրա: Իգայուն տեսնելով, նա օրորեց մազվկոտ ականջ-  
ներով գորշ գլուխը և ասաց.

— Ամեն ինչ կարգի՞ն է:

— Այո, — պատասխանեց Իգային, — մի բան էլ ավելի, երեք  
ամիկ գառ...

Եվ հապացքով ցույց տվեց ձեռքի գառնուկը: Ռուբին կա-  
ցինը խրեց փայտի մեջ: Գառնուկը սարսռաց, փակեց աչքերը:  
Իգային ասաց.

— Մարսըլենը կուրախանա:

— Անշուշտ կուրախանա, — ասաց Ռուբին: — Ե՞րբ է վե-  
րադառնալու:

— Այս երեկո:

— Ինչո՞ւ չսպասեց, որչխարներին տեսներ, հետո գնար:

— Կարևոր գործ ուներ:

— Աշխատա՞նք, — հարցրեց Ռուբին:

— Իհարկե աշխատանք, — պատասխանեց Իգային: Նա  
չուպեց խոստովանել, որ Մարսըլենը երբեք չի պատմում իր  
գործերից:

Հուրը դոփում էր տեղում:



— Խոյը թող,— ասաց Ռուբին: Մի ժամանակ կմա ինձ մտտ, հետո կհանձնեմ Բելակկին: Մեկ է, հերթն խն է...

— Պարան ունե՞ս, կապես:

— Ունեմ: Խոյը բեր այս կողմ:

Ռուբին գրպանից պարան հանեց: Օղակ արեց, հանգույցը գցեց խոյի վզովը: Իզային ճամփա ընկավ: Խոյն աղեկաուր մայում էր, դուևը ձգում էզերի կողմը, իսկ այդ երախտամուտները գնում էին օրոր-շորոր, առանց նրա կողմը նայելու:

— Շուտ, շուտ, փոքրիկներս,— ասում էր Իզային,— մուռացեք այդ կոտորվածներին: Հիմա նա Ռուբինեց տանն ավելի լավ կզգա իրեն, քան մեկ մտտ...

Քիչ ետևո հանդիպեց Մարի Լավալուն, Իզայու մանկության ընկերուհին: Մարին հարցուփորձ արեց.

— Վերադարձա՞ր: Տեսեալությունդ բերեցի՞ր...

Մարիի դեմքին փոփած էին բարի կնճիռներ, կորացած էր մեջքը, իսկ ուռած ձեռքերը գործիքների պես կախված էին պզտառի վրա:

Իզային կանգ առավ, որպեսզի Մարին պնայլի իր ոչխարներով:

— Ինչքան քիչ խնամես, այնքան լավ,— ասաց Մարին: Իզային ծիծաղեց.

— Այո, այո, դու իրավացի ես:

Նրան թվում էր, թե ողջ գյուղը նախանձում է, որ իր ոչխարները այդքան գեղեցիկ են ու հեկ:

— Ինձ մանեղու բուրդ չե՞ս տա, Իզայի,— հարցրեց Մարի Լավալուն:— Թեղը կբաժանենք կես առ կես, ինչպես անցյալ տարի:

— Ինչպես անցյալ տարի,— կրկնեց Իզային:

— Եվ չմոռանաս, խնդրեմ, խոստումդ ձեռունի մասին: Չմեղ մոտիկ է, իսկ ձեռունս կաթում է: Վաղը կզա՞նս նորոգես:

— Խոստումս խոստում է, Մարի: Տեսաւթը՞ն:

Նրա հանգած դեմքի վրայով սահեց մանկական ժպիտ, անցյալի մի հիշողություն:

Իզային մատը մոտեցրեց սնկաձև գլխարկին: Գառները գլխի թույլ հարվածներով փափիկ հրմրում էին նրան: Մի քանի քայլ էլ արեց: Ժուլեֆի սրճարանի առջև խնրված մարդիկ

փակել էին ճանապարհը, ինքը՝ Ժուլեֆ հորեղբայրը, գյուղապետ Բելակկին, ոստիկան Կոլոլը և Բարդուև՝ համայնքի նշանավոր որսագողը:

Բոլորը նայում էին լեռան կողմը: Գառների ձայնն առնելով, նրանք շուռ եկան:

— Սիա և Իզային,— գոչեց Կոլոլը:— Արդեն բերո՞ւմ ես:

— Նո քան չե՞ն գողացել քեպանից:

— Ինչո՞ւ պիտի գողանամ,— ասաց Իզային:— Ես ոչ մեկից, ոչինչ չեմ գողանում, որ...

— Դե՛հ, դու հատուկ մարդ ես:

Բոլորը քրքջացին: Իզային շփոթվեց: Տեսնես հաճոյախոսություն էր, թե՞ ծաղր: Առանց պարսկելու այդ, նա մի ոտքից մյուսն էր փոխադրվում, թևերը՝ թույլ, գլուխը՝ կախ:

Վերջապես մրմնջաց.

— Իմ գառները կտրիճ են: Առանց շունչ առնելու երեք ժամ քայլել են և ոչ մեկը չի կաղում:

Ոչ ոք չպատասխանեց: Ոչ ոք այնու չէր հետաքրքրվում նրանով: Բոլորը նայում էին լեռան կողմը:

— Ի՞նչ եք նայում,— հարցրեց Իզային:

— Ինքնաթիռ է ընկել լեռան վրա անցյալ գիշեր,— խոսեց Կոլոլը:— Ժուլեֆի ռադիոն ասաց: Ուզում ենք տեսնել: Բայց երևի մյուս կողմում է:

— Ինքնաթիռ,— ծոր տվեց Իզային:— Որտեղի՞ց էր գալիս:

Ոստիկանը պաշտոնական կեցվածք ընդունեց: Բեղերը խոլանալի պես ցցվեցին: Նա ծանր ու մեծ ասաց.

— Ինքնաթիռը գալիս էր Հնդկաստանից:

Իզային կկոցեց աչքերը, ինքն էլ նայեց:

— Պատկերացնո՞ւմ ես,— ասաց Ժուլեֆը:— Հնդկաստանից թռել են, եկել մեկ մտտ ջախջախվել:

Ոչխարները մայում էին: Իզայու աչքերը հոգնեցին ձյունոտ ու շլացուցիչ լեռնալանջերին նայելուց:

— Բան չի երևում,— ասաց նա:— Մինչև զազաթը համատարած ալիտակ է:

— Դժբախտություն է,— հառաչեց Բարդուև:— Ես միշտ արհամարհեմ եմ ինքնաթիռը... Նախընտրում եմ մի կույզ լավ



կոչիկը: Ավելի դանդաղ տեղ կհասնեն, բայց հաստատ կհասնեն: Վաղն ի՞նչ եղանակ կլինի, Իպայի:

Իպային հպարտ էր, որ Բարդուղի իր կարծիքն է հարցնում եղանակի մասին: Ծերունիները, համենայն դեպս, իրեն մարդատեղ են դնում:

— Քամին կփոխվի,— առաց նա:— Գիշերը մի քիչ ձյուն կգա:

— Մարտըլենն ո՞ւր է: Տա՞նն է:

— Ոչ: Քաղաքում... աշխատանք է որոնում:

— Չես վախենո՞ւմ, որ ձանձրանա,— առաց գյուղապետը:

Նորից խուսրը քրքջաց: Իպային էլ ծիծաղեց, ինքն էլ չմանալով, թե ինչու:

— Ոչխարներս չեն համբերում, գնամ:

Նա հրածեշտ ավեց, ծլպացրեց լեզվով և ճամփա ընկավ, ոչխարները՝ ետևից: Նրա տունը գյուղի ետևում էր, ութ հարյուր մետրի վրա, Ծեր ամուրիների ավանում: Այդ ավանում կար ընդամենը չորս խրճիթ: Ոչ ոք այլև չէր սպրում այնտեղ, բացի իրենից ու եղբորից: Մյուս երեք օջախները հանգած էին, կին չկար: Աղպես էր պատահել: Չէր եղել ամուսնություն, չէին եղել երեխաներ: Տղամարդիկ ամուրի էին մնացել, ծերացել: Ոմանք հեռացել էին, ոմանք մեռել տեղում, և նրանց տները դարձել էին ցուրտ քարանձավներ: Փված կառուրներից, հորանջող դուռ-յուսամուտներից քամին ներս էր լցնում հապար տեսակ կեղտ ու փոշի: Խորտակված շեներին ժանգագույն խոտ էր աճել: Այդ կմախքնցած տների մոտ Իպայի Վոդանի տնակը դեռևս ամուր և գրավիչ էր թվում:

Անտաշ քարով շարված և կրով ծեփված տան վրա կռենոս գերաններով ձեղուն էր կառուցված: Լայն ու թեք տանիքի անկանոն դասավորված գերանները ծածկված էին թերթաքարով: Փայտյա ծխնելույզի բուրգը խրվել էր երկնքի մեջ: Դռան աջ կողմում, քիփ տակ բարձրանում էր խնամքով դարսված վառելափայտի շիկավուն պատը: Քառանկյուն սարայը, որի տախտակները սևացել էին հնությունից, հողեփի վախից կառուցված էր տանից հեռու: Չորս կունաձև ուղք-հենարաններ սարայը մեկուսացնում էին գետնից, մկների ու առնետների արջավանքներից պաշտպանելու համար: Ներսում կուտակված

էին ապխտած մսի, վարսակի և հաճարի պաշար, մեռածների հին հագուստներ, ապրողների նոր հագուստներ և անլիոխարինելի հիշատակների մի ողջ հավաքածու: Քիչ ավելի վեր, լեռան դիմաց բարձրանում էր մի քարեղեն պատվար՝ ձևախուսների դեմ: Վտանգը միշտ այդ կողմից էր գալիս: Սովորականի պես, տուն մտնելուց առաջ, Իպային հայացքը գցեց գրանիտյա լեռան սրածայր գագաթներին, որոնք ասես ետ էին մղում երկինքը: Արեգակի շողերը լքել էին հովիտը և ապաստանել ժայռածերպերին՝ կարմիր ու շողողուն: Բոսոր մի անպ էր լողում լեռան ձյունածածկ գմբեթին: Ներքևում մուլը սև սեպեր էր խրում ապառաժի սպիների մեջ: Ջրվեժի փայլվուն երակները փոխվում էին գորշ վարսերի: Արծաթյա շեղքերը ցցած սառցադաշտը հետպիտետ տեղի էր տալիս, դառնում տարտում ու հարթ դանգված: Լեռան ստորոտում անտառները բերնե-բերան լցվում էին խավարով: Արոտավայրերը կերպարանափոխվում էին, խոտերի մեջ սուլված ծանր գետաքարերն ընդունում էին կտր ու մտածկոտ գանգերի տեսք: Իպային օրորեց գլուխը:

— Ինչ վատ է վերնում... Ասես փոտում է երկինքը...

Նա բացեց դուռը: Ոչխարները հրմշտոցով լցվեցին գոմ: Իպային եղևնու ձյուղերից և ցարասու չոր տերևներից անկողին էր պատրաստել նրանց համար: Մտորը չոր խոտ էր լցրել: Առավուսակից փոխել էր տաշտակի ջուրը: Բուրումնամվետ ու գաղջ կիսախավարն ընդունեց ճամփորդ գառնուկներին, որոնց առտիկները դողողում էին հոգնածությունից: Գոմի խորքում երկու այծ մկկոցով բողոքեցին հորդայի դեմ, որ վեց անսվա բացակայությունից հետո դարձյալ խուճում է իրենց տիրույթը: Սայրում ծնված գառնուկները, չիմանալով նստակյաց կյանքի սովորույթները, պատեպատ էին վարկվում, ահաբեկված մայրն էին և որոնում իրենց մայրիկների փեշը:

— Հանգիստ, հանգիստ,— գոչում էր Իպային ծիծաղելով,— Բոլորի համար էլ տեղ կա:

Ամենաշտապ գործը այծերին կթելն էր: Ծանրացել էր նրանց կուրծքը: Իպային մոտեցրեց փայտե դուլը, կթեց: Հաստ մատների արանքից ծայթթում էր սպիտակ ու փրփրուն կաթը: Այնուհետև Իպային հրեց խարխուլ դուռը, որ խոհանոցը բա-

ժամում էր գոմից և լիքը դուրը դրեց սեղանին: Մեծ սենյակը լույս էր ստանում մի փոքրիկ քառանկյուն լուսամուտից ու օրդիկից, որ մի խորունկ փոս էր տանիքին բացված և կիսովին ծածկված էր շարածական կեւարիչով: Մրտա պատերով այդ բացվածքը լայնանում էր ներքնի մասում: Մի թերթ թուշ էր չրված գոգարփոր, քարե պատվանդանին. օջախն էր: Օջախի վերևում ապիտակեղեն էր փռված: Ծղոտի մի քանի շուղ էր ցլվել առաստաղի գերանների արանքից: Մառանից փչում էր ընկի ու թթված կաթի հոտ: Իզային մի բաժակ կաթ խնեց, կրակ վառեց և տաքացրեց կաթնապուրի մնացորդը: Քամին ծովքը ետ էր բերում, լցնում սենյակը: Հապաղով ու քրթննջաղով, Իզային պտտեց ծխնեւոյւլը կարգավորող ձողիկը. մրի սև շերտեր սրվվեցին, անձրևի պես մաղվեցին վառարանի վրա: Հետո քիչ-քիչ օդը մաքրվեց: Իզային բավաբարված սեղան նստեց: Նա ինքնաբերաբար կուլ էր տալիս տաք ապուրը: Նրա մշուշված աչքերը հերթով ընկնում էին ժամացույցին, որ այլևս չէր հնչում ծաղկազարդ, փայտյա բարձր տուփի միջից, կաղ պահարանին, որ բեռնված էր պռունկները թռած ամանեղենով, երկու բրդեղենի միջև կախված օրացույցին և դռան սուտի գրադարակին, որի վրա դրված էին տարեցույցներ, հին լրագրեր, մի թանաքաման և Մարսելենի բառարանը: Աղջամուղջն աստիճանաբար շնջում էր այդ հանգստաբեր առարկաների ուրվագծերը: Երբ սենյակը լրիվ մթնեց, Իզային ելավ, վառեց նավթի ճրագը: Գյուղն էլեկտրականություն բերվել էր, բայց թաղապետարանը հարմար չէր համարել գիծը շարունակելու մինչև Ծեր ամուրիների ավանը, որը լոկ երկու բնակիչ ուներ: Փոքրիկ բոցը ծխում էր ապակյա ծածկույթի մեջ: Մի սառը շունչ էր գալիս դռան տակից: Քամին սուվելով փշրվում էր տան անկյունաքարերին: Իզային ինքնամոռաց մի կտոր պանիր էլ կերավ, դանակի ծայրով քչփորեց ատամները, ապա կաթի դուրը կանթերից բռնած տարավ մառան: Վաղը կաթը կցնի պղինձը, պանիր կեփի: Հետագա օրերին, այլ գործեր էին սպասում իրեն: Փայտ սղոցել, մորթել ու աղը դնել մի ոչխար, մի նոր կողով հյուսել... Երբ նա մառանից վերադարձավ, դավակացել էր լամպի լույսը: Թույլ պատրույզը ծծում էր նավթի վերջին կաթիլները: «Հիմա ի՞նչ

եմ անելու» — ինքն իրեն հարց տվեց Իզային: Բեմ<sup>1</sup>, թե սարսուղ եղբորը: Առավոտյան, գնալիս, նա ասել էր. «Մինչև այս կրեկո»: Եթե ընկերները պատահած լինեն, ճաշի կվերադառնու կնազիջերին: Երկու ժամկա ճանապարհ է ուղքով: Ճանապարհը դժվար է: Եթե Մարսելենը քաղաքից վերադառնա ձեռնուհայն, զգվելի տրամադրություն կունենա: Նրան դեպքում ավելի լավ է նրան մենակ թողնել: Նրա պայրույթը իջնում է առանձնության մեջ: Համենայն դեպս Իզային անհամբեր ապաստում էր Մարսելենին, որպեսզի ցույց տար ոչխարներին և տեղեկանար, թե ինչ արդյունքով է հասել քաղաքում: «Եթե պճոն լինի, չի խոսի: Եթե բարի լուր ունենա, կուրախանա, որ չեմ քնել և սպասում եմ իրեն: Մենք սեղանին կոթնած բարեկամաբար կպրուցենք: Ճաշած լինի թե ոչ, միևնույն է, մի ունան ապուր կուտեցնեմ: Մի բաժակ սպիտակ գինի կտամ վրայից՝ վերադարձը նշելու համար: Անկողին մտնելուց առաջ կղնանք կնայենք անասուններին...»: Իզային նախօրոք հրքձվում էր հանդիպման ուրախությունից: Մտքերը ցրելու համար նա գրադարակից վերցրեց տարեցույցը, գրիչ և թանաք: Արդեն շատ սերունդներ ի վեր Վոդանները սովորույթ էին դարձրել տարեցույցում գրանցելու իրենց կյանքի նշանակալից դեպքերը: Սեղանի առջև նստած, Իզային թերթեց կրոնական պատկերներով պարզարված եռագույն գրքույկը, ապա հասնելով օրվա ամսաթվին, խոշոր տառերով խորվեց հետևյալը.

«Գառները վերադարձան: Մի ինքնաթիռ է ընկել»: Մի քիչ սարսուղ, ապա սև գիծ քաշեց այդ երկու նախադասության տակ: Թուղթը ձռուց ու խալվեց: Դանդաղ չորանում էր փայլուն թանաքը: Իզային շրջեց էջը: Մտովի հետևելով տարվա դեպքերին, նա դրոնում էր օրոշ հիշողություններ: Այդ պրազմունքը քաղցր էր, որովհետև նրան թվում էր, թե իր անցյալի ամենատխուր, ամենաուրախ և ամենածանր ժամերը կորած չեն անհետ: Նա կարդաց. «29 հոկտեմբերի. փայտի իջեցում» և նրա աչքերի առջև հայտնվեցին կոճենու բները՝ մերկ, ճյուղակուտոր, մածուցիկ, կաչուն, գլխապտույտ արագությանը գլորվում էին, ճաքելով ցատկոտում, ապա խռնկխռնկ տապալվում պառիթափի ստորոտին՝ փոշիացող կեղևի կարմիր ամպի մեջ: Կամ՝ «17 մարտի, փլուզում, կամքն աստծո,

վերջին քարերը կանգ առան ոլորանի ստա: Նա խելոյն մտա-  
րերեց այն գարնանային գիշերը, քարերի դրդողն ու իրար  
գալը և տուն լցվող խոնավ ծծմբահոտը: Գրված էր նաև սատ-  
կած այծի մասին. պտուկները փտել էին, կաթը՝ դեղնել. քահա-  
նայի կապմակերպած ուխտագնացության մասին՝ դեպի նոր  
աղոթարան: Ահա գրանցված է նաև, որ Մարսըլենը հրացա-  
նով ցախաջրոյ է խփել:

Իգային կարմացել էր, որ այդքան հիշարժան դեպքեր է  
ապրել: Հաճելի ջերմություն էր խրտում որովայնում: Էջերը  
շրջելու համար նա թքոտում էր մատը: Տարեթվերը հաջորդում  
էին միմյանց՝ հակառակ ընթացքով: «15 մարտի, 2 փետրվա-  
րի...»: Վերջապես տարվա սկիզբը. «1 հունվարի. Մարսըլենը  
գովեց պառերը»: Նա բավականությունից ժպտաց, վեր կացավ,  
տարեցույցը տեղը դրեց: Մի պահ ուլեց թերթել նախորդ  
տարիների տարեցույցները: Չեղքն արդեն շոյում էր ծռւմված  
շապիկներով փոշոս թղթակույտները: Բայց գիտեր, որ կարիք  
չկա դրանք բացելու, եթե ուզում է գիշերը հանգիստ քնել:  
Անտեղ էին քնած բոլոր ցավերը: Ինչո՞ւ Մարսըլենը չի գալիս:  
Երբ եղբայրը տանն է լինում, Իգային մտածում է միայն սո-  
վորական, անվնաս բաների մասին, բայց մենակ մնալիս չի  
կարողանում չանդրադառնալ իր դժբախտությանը: Քամին  
սուր ոռնում էր. ջռռում էին տանիքի գերանները: Մթնոլոր-  
տում մի անբնական բան կար. «ինչ-որ ներկայություն, ինչ-որ  
տնօրինություն: Իգային մեկնեց ձեռքը: Ոչ թե ուրիշ տարե-  
ցույց վերցնելու: Ոչ, նա սիրտ չէր անի, պարզապես ուզում էր  
գրքերի ետևից վերցնել դեղնած ու ձաքձաք լուսանկարը՝ մի  
խուճ ուղեցույցներ և նրանց մեջ՝ ինքը: Բոլորը նստած էին:  
Քամահար. ժպտուն դեմքեր, ձեռքերը՝ ծնկներին, ծխամորձերը  
բերանում, աչքերը՝ սևեռուն: Ոտքերի մոտ՝ ուսապարկեր,  
պարաններ և մակագրություն: «1938»: Իգային կարող էր  
տալ նրանց անունները. Նիկոլա Սերվոյ, Պոլ Բլանդո, փոքրիկ  
Վերնիե: Սիրտը ճնկվեց:

— Այս, ես գիտեի, գիտեի, որ պետք չէ... ո՞ւմ է հարկա-  
վոր...

Նա լուսանկարը սահեցրեց տարեցույցների ետևը: Բայց  
միտքը շարունակում էր աշխատել լուսանկարի ուղղությամբ:

Եղել է իսկապես այդպիսի մարդ, որից լուսանկարիչը կորվել  
է երջանիկ ու կատարյալ մի պահ: Երջանի ամենահամար-  
ձակ ուղեկցորդներից էր ինքը: Իր գործունեության ընթացքում  
վեց հազարանակ է ունեցել: Հաճախորդները՝ նշանավոր տի-  
կիներ ու պարոններ, իր վկայականում գոհունակություն էին  
արտահայտել: Երբ անցնում էր գյուղով, որպեսզի գնա քա-  
ղաք՝ ընկերության գրասենյակը, բոլորը հարգանքով ողջու-  
նում էին իրեն: Երիտասարդները հետևում էին իր խորհուրդ-  
ներին: Ծերերը որոնում էին իր բարեկամությունը: Մարսըլենն  
իր բեռնակիրն էր և երբեք չէր համարձակվում ձայնը բարձ-  
րացնել և հակառակվել: Բայց հանկարծ ամեն ինչ փոխվեց:  
Կարծես միանգամից խավեցին հոգին մարմնին կապող թելերը:  
Կարիք չկար բացելու այն աղետալի ժամանակվա տարեցույ-  
ցը, տեսնելու էջը, որի վրա մի սև խաչ էր քաջված: Այդ օրը  
նա սիրտ չարեց որևէ բան գրելու: Հալիվ ուժ ունեցավ գծելու  
սր նշանը: Պոկվել էր ժայռի ելուստը, որից պարանն էր կապ-  
ված և տակնվն արել այսինիստին: Նա ցնցեց գլուխը, որպես-  
վի ջնջի սոսկալի սլատները: Հարյուրավոր անգամ կրկնված  
բառերը հայտնվեցին շուրթերին:

— Ես մեղավոր չեի: Բոլորն էլ հաստատեցին, որ անուր  
էր հենման կետը:

Տասնհինգ օրից իր գլխավորած մի ուրիշ խմբի և Մարսը-  
լենի հետ հանդիպեցին ձևախուճի: Երեսին պալով սառը  
ձևախուճին, Իգային բարձրաձայն կարգադրեց սեղմվել թեք  
մույթին: Ոչ էր: Վերևից ձյան վիթխարի, շողողուն վանգվածը  
առնվեց դատարկության մեջ և ծածկեց երկինքը: Ձևախուճը  
սուրկլաչին շղթան գլորեց սառցադաշտ տանող թեքությամբ  
և մարդիկ, դեմ առնելով ժայռելուստին, թաղվեցին ձյան մեջ:  
Մարսըլենն ու Իգային դուրս եկան ձյան տակից և անմիջապես  
փորեցին սպիտակ ու թանձր սփռոցը, որ գերել էր հաճախորդ-  
ներին: Նրանցից մեկին ձյունը թեթև էր ծածկել. նա ողջ էր  
մնացել: Մյուս երկուսը ճնկվել էին չորս մետրանոց թանձր  
ձյան տակ, խեղդվել: Իգային հիշեց իր անպոր կատաղությու-  
նը այդ անշունչ մարմինների առջև: Ամեն ինչ արեց, ռոմ լցրել  
սևողնված բերանները, արհեստական շնչառության շարժում-  
ներ արեց, ապտակներ իջեցրեց նրանց ուռած ու թույլ այտե-

րին: Փրկվածը՝ խամաճիկի դեմքով մի շահեղ անգլիացի. նյարդային ծիծաղում էր և ձեռքերը շարժում խամաճիկի նման: Իպպոն թվաց, թե լսում է այդ ծիծաղը, որ գալիս էր դռան ետևից՝ քամու սուլոցին խառնված:

— Լռեցի՛ք:

Նա գուցե ինչպես առաջ: Քրտինքի էությունները մարգարեափ նման շողում էին ճակատին: «Գեթ Մարսըլենը չուշանար: Ինձ չի կարելի մենակ թողնել: Հենց որ մենակ եմ մնում, ամեն ինչ վերսկսվում է»:

Իպպին նայեց պառարանին դրված վարթուցիչին: Ինն էր: «Միդիի պանդուկում կլինի, Պիերեթի մոտ, այն անկյանի, որ ատամները բաց նայում է մարդու ուղիղ աչքերի մեջ: Անուսին ունի, բայց լիքը է: Անուսինն էլ ամեն ինչ թույլ է տալիս կնոջը, որ սիրաշահի հաճախորդներին: Նրան տեսնելիս՝ Մարսըլենը գլուխը կոբցնում է: Նրանք խմում են իրար հետ. իրար հետ էլ սչառկում: Երբ Մարսըլենը գնում է, նա խմում է պառուկում է ուրիշների հետ: Բոլորը գիտեն, բայց Մարսըլենը ծիծաղում է: Նա ծիծաղում է ամեն ինչի վրա: Ոչ աստծուց վախ ունի, ոչ աստանայից: Ուրիշի կին, ուրիշի քարիք, միևնույնն է նրա համար: Նա քաղում է իր օգուտը, որտեղ պատահի՝ առանց վզուշանալու նրա ամուսնուց կամ ուստիկանից: Մարսըլենը որսագողություն է անում: Որսագող է: Այսպես է նրա կյանքը: Թեև վատ տղա չէ, բայց քնած է խիղճը: Ես եղբայրն եմ, բայց չեմ կարողանում բախտավորեցնել նրան»: Փեղկը ճռռաց. ասես մի ձեռք հենվեց դռանը: Իպպին փշաքաղվելով շնչաաց. «Ո՛վ է», սպա գնաց, բացեց դուռը:

Կատաղի աղաղակ դիպավ երեսին: Շենքից այն կողմ կարծես փվվում էր աշխարհը: Իպպուն թվաց, թե ինքը կանգնած է սև անդունդի եզրին: Անտեսանելի գազաթներից պոկված մորիկը գրոհում էր ուղիղ ավանի վրա: Սրբիկի մերթ խուլ, մերթ սուր ձայնը բազմապատկվում էր լեռան արձագանքներից: Իպպին ականջները սրած, աչքերը չռած, մեջքը դեմ էր տվել պատին, մնացել: Մի քար գլորվեց տանիքից, ընկավ գետնին, իրենից երկու քայլ հեռու: Առաջ նա չէր վախենում փոթորիկներից: Նա լավ հարաբերության մեջ էր ամպ ու ծայրի, ձյան ու բքի հետ: Իր և վերևի աշխարհի միջև կար սիրո

և վստահության փոխըմբռնում: Բայց մի օր վերևի աշխարհը նրան արկեց վստահությունից: Նա շատ էր եղել լեռնայանջրին՝ բրիչով և ուսապարկով: Նա շատ բան գիտեր: Բամին մի պահ լռեց, որպեսզի ջուհչ աննի: Շուրջը ծանրացավ անձուկ լուսություն: Գիշերը թանձրացավ, քարացավ: Եվ չարագույժ երգը վերսկսվեց, այս անգամ ավելի խուլ: Իպպին ոռնգնեցով հոստոեց օդը. մեղմ էր ու մաքուր և ձյուն էր ավետում... Մեկը միուսին հաջորդած բոլոր այդ սուկայի մահերը... Ինքը չէր հասկացել նախագուշացումը: Նա համառել էր, ինչպես հայարտ ռազմիկ, որ չի ուզում համակերպվել պարտությանը: Եվ ճակատագիրը հակառակվեց նրան, երրորդ անգամ: Նա գուցեց.

— Մարսըլեն... օհոհո՛, Մարսըլեն...

Պատասխան չեղավ: Դատարկ էր գիշերը:

Իպպին ետ դարձավ սուռ:

Երրորդ անգամ: Շատ տարիներ են անցել դրանից: Շատ տարիներ... Որոշակի թվական չէր հիշում: Եվս մի սև խաչ տարեցույցի էջին: Կողքին՝ մի պարոնի անուն: Ի՞նչ էր պարոնի անունը: «Գողեն... Գողո... նստել է պետք...»: Որպեսզի հավատարկի ձգողական ուժին, նա նստեց և մեջքն արեց զրրկրով ծանրաբեռնված գրադարակին: «Շուտով կգա Մարսըլենը, և ես ամեն ինչ կմոռանամ»: Այն ի՞նչ ձայն է դրսում: Ոչ, դա քամու վերջին հեծեծյունն է: Այն օրը լեռան վրա քամի չկար: Մարսինը շեղորեն ընկել էր մի ձեղքվածքի մեջ: Չափ կողմում դատարկություն էր: Աջում թույլ ու դեղին, արեգակից տաքացած ժայռապատ: Պարոնը ներքևում էր, ապառուժի ձեղքում, ինչպես ձգնալորը քարանձավում: Իպպին, ժայռը շրջափելով և հենարան որոնելով ոտքերի ու ձեռքերի համար, սուսեց դժվարության ցատկեց: Հինգ մետր վերևում ելուստ կար, որ իր կարծիքով կարելի էր օգտագործել, ապահովել հաճախորդին և վզուշորեն դուրս բերել նրան: Լամայի լույսը ճրթալով իջնում էր: Շուտով մթության մեջ նրանից կմնա մի կարմիր կետ: Արեգակը հարեցնում էր լեռնակատարի ձյունը և գիշերային սառնամանիքից առաջացած սառցակոշտերը: Ականջին հասավ մետաքսյա կտորի խշշոց: Ապակիաջած սառույցի մի շեղք սուր դանակի պես սուլելով անցավ

դենքի առջև, ապա՝ մի ուրիշը: Բնապարար նա գլուխը մտցրեց ժայռի խոռոչի գաղջ խամարի մեջ: Մի փոքրիկ հարված քունքին: Նույնիսկ ցավ չզգաց: Մի փոքրիկ բերձվածք: Սառցաշեղդերի անկումը դադարեց: «Այս ի՞նչ աղմուկ է»: Գոմում մի գառնուկ է մայրն: Երևի փոթորկից է վախենում: Իգային ուզեցավ վեր կենալ, գնալ անասունների մոտ, բայց չկարողացավ շարժվել: Նա ուրիշ տեղ է: Պարոնի հետ է: Կոշիկները քերծում են ժայռը: Իգային բարձրանում է ելուստից ելուստ, ծնկները դողում են, ձեռքերը թուլանում: Արյուն է հոսում այտի վրայով: Մի քող է վեռվետում աչքերի առջև: Մի փոքրիկ վերքի պատճառով: Դատարկ բան է: Ոչ, ոչ, ճոճվում է լեռը, հրում է իրեն, ուտնում: Նա կորցնում է հավասարակշռությունը: Եղունգները ճանկում են գրանիտը: Ահա ինքը տարածության մեջ, թռչունի պես, քարի պես: Նա տեսնում է պարոնին: Սա բացուխտի է անում բերանը, ձեռքերն առաջ պարպում: Եվ հանկարծ իրենք՝ երկուսով գլորվում են, խճճված պարանոսի թուփով գահավիժում անդունդ: Իգային ձեռքերը խելահեղ պարպում է լեռնալանջի կողմը, բայց ոչինչ չի բռնում: Ականջները դժժում են: Սիրտը դադարում է բաբախելուց: Իրենցից չորս հարյուր մետր ներքև սոսկալի սառցադաշտը ցուցադրում է իր երկար սատկած օձի շապիկը: Մի քանի վայրկյանից ամեն ինչ կվերջանա: Ոչ, լեռը ուռեցնում է փորը և մտտեցնում մի սպիտակ գոգնոց: Չյունոտ, սահուն ժայռակող: Սև գիշեր: Հանգել է լանպը: Իգային ելավ, խարխալիերով հասավ պահարանին, դարակից մոմ հանեց, տնկեց դատարկ շշի բերանին: Այս ծծմբալուցկի չրթացրեց կրունկին, վառեց մամը: Բամին, դռնից ներս սահելով, տատանում էր բոցը, սովերներ խաղացնում պատերին: Իգային մտտեցավ սեղանին, մամը դրեց դեմը, նստեց և, արմունկներով ծնկներին կռթնած, գլուխը հուսահատ առավ ափերի մեջ: Փրկարար խումբը իրենց գտավ հաջորդ առավոտյան՝ կողք-կողքի ընկած: Սառած ձյան շերտը թուլացրել էր հարվածի ուժը: Պարոնի ողնաշարը փշրվել էր նա մեռավ հիվանդանոցում, գիտակցությունը կորցրած:

Իգայու գանգոսկրն էր շարժվել: Նա ավան վերադարձավ հյուծված ու թույլ: Պատերապմ: Մարսըները գերության մեջ: Վերքի պատճառով իրեն չտարան: «Օգուվիր առիթից, — ասել

էր Ժուլեֆը, — վերսկսիր արհեստդ, հիմա ուղեկցորդ չկա»: Իգային չցանկացավ: Նա գիտեր, որ անբեկանելի է լեռան դատավճիռը: Կամոքն չար ձակատագրի, նա պիտի գոհանար ստորոտներով: Եվ իրոք, նա այլևս չէր տանջվում այդ անկուսից: Տարիների հետ մարել էր բարձունքի կարոտը, իսկ Մարսըները գերությունից վերադառնալով համակերպվեց եղբոր որոշմանը: «Հոգու խորքում Մարսըները բարձունքի սեր չունեն: Նա բեռնակիր էր մոտս, որովհետև ստիպում էի, իսկ երբ հասկացավ, որ ես այլևս ոչնչի պիտանի չեմ, կարծես հանգստացավ...»:

Փոթորկին հաջորդած թուրթունքը տրամադրում էր մտորել: Մամի բոցը վառվում էր ուղիղ, երբեմն ճրթում էր պատրույզը: Հոգու ամբողջ ուժով Իգային ցանկացավ, որ Մարսըները բացի դուռը, մտնի շենից և հարցնի. «Ինչպե՞ս եք տանը»: Ժամանակին Իգային էր տանը կարգադրում: Հիմա ինքն ավելի շատ է պոռն Մարսըների կարիքը, քան Մարսըները՝ իր: Այդ բնական էր: «Տե՛ր աստված, շուտ տուն ուղարկիր նրան: Նույնիսկ կթե դեռ աշխատանք չի գտել, նույնիսկ եթե քարշ է եկել Պիեթթի հետ, նույնիսկ եթե գալապած է...»: Չեղունում առնետներ շարժվեցին: Իգային գլուխը բարձրացրեց, աչքն ընկավ մեծ գերանին, որի վրա փորագրված էր. «Կառուցել է Յաք Վոդանը, 1853 թվականին: Օրինալ է աստված»: Նա կամացուկ կրկնեց.

— Օրինալ է աստված:

Սիրտը քնքշությունից փափկեց: Արցունքներ երևացին կուպերին: Այն պատահարից առաջ նա երբեք լաց չէր եղել: Թուրթունքը հայտնվել էր հիվանդության հետ, երբ բժիշկները ձեռք էին տվել գլխին: Լուսամուտի սև ապակիների ետևում հանդարտ ձյուն էր իջնում՝ նոսր ու խոշոր փաթիլներով: Չարթուցիչը ցույց էր տալիս 10 անց 5 րոպե: Իգային կորացրեց ուսերը, կզակը կրծքին հակեց. «Շուտով կգա, շուտով կգա... Համբերել է պետք...»: Օրվա հոգևությունը կուտակվում էր ծոծրակին: Կուպերը փակվեցին: Նա երկտակված քնեց:

Սառնաշունչ քամին ցնցումով արթնացրեց նրան: Դուռը բաց էր: Մուլթ գիշերի մեջ կանգնած էր ձյունոտ Մարսըները: Ուտքից գլուխ եղյամով շարված, դեմքը դաժան, պսպղուն,

նա դրվում էր գետինը, որպեսզի ոտնամաններից պակվի ձյան կեղևը: Նա ոտքով ծածկեց դուռը, բերետը գցեց մի անկյուն և երեբարով մոտեցավ սեղանին: Մարսըլենը կարճախուսակ էր, ճակատը՝ նեղ, շրթունքները՝ բարակ: Նա հեռու էր և ձեռքերն իրար էր շփում, որ տաքացնի: Իզային ոտքի ելավ, կամացուկ ասաց.

— Եկե՛լ ես:

Ապա կարծես լրիվ ընթծեց, որ Մարսըլենը իրոք եկել է բարձրաձայն կրկնեց.

— Եկե՛լ ես:

Արախությունից շունչը կարվում էր: Թերևացել էր հոգին: Նա Մարսըլենի ձեռքից բռնած քարը տվեց աթոռի մոտ, ուժով նստեցրեց և նայելուց չէր կշտանում, ասես վաղուց, շատ վաղուց չէր տեսել եղբորը:

— Ճաշե՛լ ես:

— Այո, — ասաց Մարսըլենը:

— Ոչինչ, ապուր կտաքացնեն:

Մարսըլենը չպատասխանեց: Գո՞հ էր արդյոք: Անհնարին էր հասկանալ: Չյան փաթիլները հալչում էին հոնքերին: Մոմի լույսը արտացոլվում էր նրա ճակատի տակ ծվարած սև, փոքրիկ բիբերի մեջ: Նեղ շուրթերը շարժվում էին, ասես որոճում էր: Հոգնած ու մտապեղ էր երևում: Իզային վառեց օջախը, ապուրի կաքսան դրեց կրակին: Չնայած անհասկերությունը, ձայն չէր հանում ոչխարների մասին, թեև խոսքը լեզվի ծայրին էր: Նա ապուր լցրեց ավանն:

— Գիտե՞ս, — վերջապես ասաց Իզային, — ոչխարներին տուն եմ բերել, երեք գառնուկ էլ ավելի: Գոմում են, կուզե՞ս տեսնել...

— Հետո, — ասաց Մարսըլենը:

Նա եղբոր ձեռքից առավ ափսեն և վրան կոացած, չաչպացնելով կերավ ապուրը: Իզային հրձվում էր եղբոր ախորժակով:

— Գյուղում, — ասաց նա, — ծեր Ռուբին. Մարի Լավարուն, Բելակկին, Բարդյուն, Կոլոլը...

— Ի՞նչ, — հարցրեց Մարսըլենը:

Իզային լռեց: Մոռացավ անելիքը: Բայց այդ հազարումը անեց մի պահ միայն: Արագությունը հավաքեց մտքերը:

— Նրանք կուզենային ունենալ մեր ոչխարների նմանը, գոչեց ուրախ-ուրախ: — Այդպես էլ ասացին: Հետո մենք խոնկիկնք այն ինքնաթիռի մասին, որ ընկել է լեռներում...

— Քաղաքում էլ էին դրա մասին խոսում, — ասաց Մարսըլենը: — «Մրդիի» պանդոկը լի էր լրագրողներով: Ասում են մարդ չի փրկվել:

— Ի՞նչ գիտեն:

— Օղաչու է թռել այնտեղից: Պատմել է, որ բեկորները բռնված են կատարին: Ոչ մի բան չի շարժվում: Ինքնաթիռը դուրս է եկել Կալկաթայից: Պատկերացնո՞ւմ ես:

— Այո, — ասաց Իզային, — հեռո՞ւ է: Կալկաթա... Կալկաթա...

Նա այդ բանն արտասանեց ակնածանքով, անվարժ, աչքը շրամ:

— Ուղեկցորդները շարունակ վիճարանում են: Խոսք կա փրկարար արջավախումբ կապվելու մասին:

— Ինչի՞ է պետք, էթե փրկվող չկա:

— Փոստը վերցնելու համար:

— Փո՞ստը:

— Այո, նամակները:

— Ա՞հ, — հարեց Իզային:

Նա այնքան էլ լավ չհասկացավ նամակների հարցը, բայց ասվեց ցույց տալ շփոթանկները:

— Մինչդեռ մարդիկ մեռել են, — ասաց նա:

— Մոտ երեսուն հոգի, — խոսեց Մարսըլենը: — Բայց թողնե՛ք այդ: Ամեն մարդ իր ցավն ունի, իր ուրախությունը:

Իզային ծյալացրեց լեզվով: Նրա շուրթերը խոնավ էին: Խանդաղատանքից պայծառացել էր դեմքը: Նա շոյում էր սեղանի տախտակը երկայն, բարակ մատներով: «Կարծես սողա լինի» մտածեց Իզային, և մի բան խլրտաց կրծքի տակ:

— Ապուր կուզե՞ս էի:

— Ոչ, — ասաց Մարսըլենը:

— Կա՞թ:

— Չի խանգարի:

Կաթ լցնելով գավաթը, Իգային աջխատում էր հիշել, թե եղբորը ի՞նչ էր հանձնարարել գնելու քաղաքում:

— Դու Ռիվիերի հետ խոսեցի՞ր պողող գործիքի մասին,— վերջապես հարցրեց նա:

— ժամանակ չեղավ,— ասաց Մարսըլենը:

— Ո՞ւմ հետ ես տեսնվել:

— Մարդկանց:

Իգային սպասեց, որ Մարսըլենը տեղեկություն տա իր ընկերներից՝ Նիկոլա Սերվոլից, Բյանդոյից, փոքրիկ Վերսիեից, լուսանկարի մյուս տղաներից: Անշուշտ, եղբայրը տեսած կլինի նրանց: Ինչպես կարելի է քաղաք գնալ և նրանց չտեսնել սրճարանում, ուղեկցորդների գրասենյակում, փողոցում...

— Ունկերություն մտա՞ր:

— Ոչ:

— Իսկ տղանե՞րը...

— Ի՞նչ տղաներ:

Մարսըլենի ձայնը չոր էր: Իգային կախեց գլուխը: Նրան թվաց, թե քայլում է վառ արահետով: Պետք էր շտապ վերադառնալ ճանապարհ: Բայց Մարսըլենը ծխախոտ վառեց և Իգային մխիթարվեց: Երբ Մարսըլենը ծխախոտ է վառում, լավ նշան է:

— Ոչ,— ասաց,— ես ընկերությունից մարդ չտեսա:

Ծուխը բարձրանում էր այսն ի վեր, կծկում աչ կոպը:

— Բայց,— հարեց նա,— ինչո՞ւ պետք է տեսնեի նրանց: Ես դրա համար չեի քաղաք իջել:

— Իսկ ինչի՞ համար էիր իջել:

— Գործ ունեի:

Նկատելով, որ եղբոր տրամադրությունը բացվում է, որ ծպտում է, որ կուշտ է ու վկարթ, Իգային սիրտ առավ:

— Դու գո՞հ ես,— շնչաց:

— Դժգոհ չեմ,— փնթփնթաց Մարսըլենը, սիգարեթի մոխիրը թափ տալով դատարկ գավաթի մեջ:

Իգային մի լավ շունչ առավ և շարունակեց.

— Գուցե աջխատա՞նք ես գտել:

— Չեմ էլ որոնել,— նկատեց Մարսըլենը:

— Ո՞չ:

Մարսըլենը քրքջաց:

— Հոնքերդ մի կիտի, Չայի: Ես ե՞րբ եմ ասել, թե գնում եմ աշխատանք որոնելու...

Նա իրեն Չայի անվանեց, ինչպես երեխա ժամանակ: Այդ հիշողությունից շփոթված, Իգային բացեց բերանը, թարթեց աչքերը: Նորից կոճքի տակ մի քաղցր բան շարժվեց: Հաճույք! Խոսեց մինչև մատների ծայրը: Եղբայրը վեր էր կացել, չափում էր սենյակի լայնքն ու երկայնքը: Փոքրիկ և արագաշարժ, նա հայտնվում էր մերթ այս, մերթ այն անկյունում. Իգայու աչքերը հոգնեցին նրան հետևելուց:

— Շատ, շատ պիտի փախսահառարանում գործ լինի կամ սրոցարանում, էլ ուրիշ որտե՞ղ: Նույնը և քաղաքում: Ես միտք չունեմ մի երկու գրոշի համար կյանքս խորտակել: Դա լավ է անձարակների և թշվառների համար: Ես ալվելի հեռու եմ նայում: Ես ուրիշ ծրագրեր ունեմ:

Հոպսի մի շող դիպավ Իգայուն, ցրեց նրա մտքերի մշուշը: Նա բեկբեկուն ձայնով ասաց.

— Դու միտք ունես, միտք ունես ուղեկցո՞րդ դառնալ:

Մարսըլենը կանգ առավ: Խիստ էր հայացքը:

— Որպեսզի մի գեղեցիկ օր քեզ նման կործանվե՞մ: Խելքդ հո չե՞ս թոցրել:

— Ես ասացի... ես կարծեցի... — մրմնջաց Իգային:

Նա ափսոսում էր, որ բարկացրեց Մարսըլենին և չզիտեր ինչպես արժանանա ներողամտության:

— Դու իրավացի ես,— ասաց: — Դա քեզ հարմար արհեստ չէ:

— Այդ արհեստը ոչ ոքի էլ հարմար չէ,— պատասխանեց Մարսըլենը: — Առաջ՝ դեռ ոչինչ, իսկ հիմա՝ քննություն, փորձ... Եվ հետո ուղեկցորդ շատ կա, իսկ հաճախորդ...

— Բա ի՞նչ ենք անելու: Ապրելու համար փող է հարկավոր: Մենք փող չունենք...

Մարսըլենը ոտից գլուխ չափեց եղբորը, ինչպես ճամփին հանդիպած արգելքի:

— Դու չե՞ս ուզում ասել, թե ինչ ենք անելու,— մրմնջաց Իգային լացակումած:

— Ոչ այսօր,— պատասխանեց Մարսըլենը:



- Ինչո՞ւ:
- Ես պետք է էլի մտածեմ: Հետո կտեսնենք:
- Ե՞րբ:
- Վաղը, թերևս...

Եվ որպեսզի վերջ տա խոսակցությանը, հանկարծ հարցրեց.

— Իսկ ոչխարները ցույց կտա՞ս...

Այդ կարծես Իգայու ուղեղից սրբեց բոլոր հոռի մտքերը: Մարսըլենն ինքն էր առաջարկում տեսնել ոչխարներին:

— Արի,— առաջ Իգային:— Շուտ արա:

Նա վերցրեց մուրը, որի նրեք բառորդը այրվել էր, և ճարպը հոսել էր շիջն ի վար: Լույսը տեղափոխվեց: Մարսըլենը բացեց գոմի դուռը: Չոր խոտի և ճարպի գաղջ հոտ էր փչում մուտքից: Խաղարում տարտամ այիքվում էր բրդի դժգույն շերտը: Մի գառնուկ մայեց, և մայրը պատասխանեց հանդարտ ձայնով:

Շնամին կանգնած Իգային նախանձեց անասունների իմաստությանը. լինել նրանց պես առանց հույսի և առանց հիշողության: Բանխարսրվելով լոկ կերի պաշարով և խշտյակով:

— Կուպե՞ս մոտենանք,— հարցրեց նա:

— Ո՛չ, բավական է: Փակիր դուռը:

Նրանք վերադարձան սենյակ:

— Հիանալի ոչխարներ են,— բացականչեց Իգային,— և ծախս էլ չեն պահանջում:

— Եվ օգուտ էլ չեն տալիս:

— Ինչպե՞ս թե, հապա ճարպը, հապա բուրդը...

— Գու բան չես հասկանում: Արի քնենք,— առաջ Մարսըլենը:

Իգային ձեռքը քսեց դեմքին: Մորուքի մազը ճրթաց, կարճ հնձած խոտի նման:

— Բայց դու սիրում ես ոչխարներին, չէ՞,— հարցրեց նա անհանգիստ:

— Իհարկե, սիրում եմ:

Նրանք իրար ետևից մտան ցուրտ սենյակը, որտեղ դրված էին փայտյա երկու բարձր մահճակալ՝ փետուրե ուռուցիկ բարձերով: Մոմի բոցն արտացոլվում էր պատի ձվաձև ապա-

կու մեջ, որի տակ դրված էր Հիսուսի սուրբ սիրտը: Այդ կարմիր կետից ճառագայթներ էին բեկվում: Դրա մոտ դրված էին չորացած ծաղիկների մի փնջիկ և երկու փոստային բացիկ, որոնցից մեկի վրա պատկերված էր Լիպոյի «Սուրբ Թերեզ» եկեղեցին, մյուսի վրա՝ Էյֆելյան աշտարակը: Մարսըլենի մահճակալի մոտ դրված էր հին թերթերի մի կույտ: Քնելուց առաջ նա երբեմն կարդում էր: Եվ երբ Իգային տեսնում էր, որ եղբայրը խոնարհվել էր այդ տպագիր թերթերի վրա, վնասվում էր նրա համբերությամբ:

Այսօր Մարսըլենը ձեռք չսովեց թերթերին և պանդելուն պես հանգցրեց մուրը: Լուսամուտից ներս էր ընկել լուսնի թույլ շողը: Իգային բարձի վրա տեսնում էր եղբոր կիսադեմը: Խռպուտ, անկանոն շնչառությունը բարձրացնում էր լուրջան ծանրությունը: Տախտակները ճոռում էին ձյան ճնշումից:

Մեջքին տարածված, բաց աչքերով Իգային որոնում էր քուկը խոնգարող ուրախության շարժումից: Նա մոռացել էր տարնցույցները, ամբողջ չարագուշակ անցյալը, մեռելներին: «Իմ եղբայրը վերադարձել է: Նա պռակած է ինձ մոտ: Եվ վաղը, անհողջ օրը մնալու ենք միասին»: Այդ միաջը նրան ուղեկցեց իրեն բարի լուր, մինչև որ թմրած գլուխը և ընդարմացած անյուսմները սուսվեցին քնի մեջ:

### 3

Մարսըլենը դեռ քնած էր: Իգային վեր էր կացել, դռան առջև տախտակ էր տաշում: Չախ ձեռքով նա դանակն ուժեղ սեղոնում էր կռեմու կոճղին: Աշով բռնել էր թակը: Մի հատուկ կարված և դանակի ապրը խրվում էր փայտի մեջ, առանց փոքր իսկ շեղվելու: Նրա ջուրջը փռված էր գորշ հովիտը: Գիշերը եկած ձյունը խառնվում էր հողին: Հեռվում լողում էին մշուշված, ջպարված լեռները: Լսվում էր բոժոժների ձայնը: Գյուղի փոքրիկ այժարածը հոտը քշում էր ցածրադիր լանջերը: Անենաչնչին ձայնն անգամ կրկնում էր հավատարիմ արձագանքը: Իգային վերցրեց տախտակներից մեկը և բժախտի դնեց, մատով շոշափելով անհարթությունները: Նա մտածում

էր առօրյա բաների մասին: Նա երջանիկ էր: Մարսըլենի ձայնը նրան հանեց ինքնամոռացումից:

— Իգայի, քնա՞ծ ես, ինչ է:

Եղբայրը կանգնած էր տավրված, սանրված, շազկի օձիբն արձակ, վզին՝ կանաչ, մետաքսյա թաշկինակ:

— Չեմ պագցկ, թե երբ ես մտնեցկ,— ասաց Իգային մեղավոր ժպտալով:— Գոնե սուրճ խմե՞՛ր ես:

— Այո, ի՞նչ բանի ես:

— Հեչ, մանր-մունր գործեր: Տախտակ եմ տաշում: Անասուններին կթել, խնամել եմ, օջախ եմ վառել, կոշիկներին ճարպ քսել:

— Դու հրաշալի տղա ես,— ասաց Մարսըլենը:

Հաճոյախոսությունը վարմացրեց Իգայուն, կարծես այտը համբուրած լինեին: Նա ուղղվեց: Դեմքը շատագու՛նել էր հուպ-մունքից: Նա մտածեց. «Մենք շատ ենք կապված»:

— Քո աշխատելու ընթացքում ես էլ ժամանակս վուր չվատնեցի:

— Դո՞ւ էլ աշխատեցիր:

— Ես մտածեցի:

— Ինչի՞ մասին:

— Իմ ծրագրի: Եթեկ երեկոյան առիթ չեղավ խոսելու, բայց պսօր արդեն հասունացել է: Հույս ունեմ, որ դու հավանություն կտաս:

Իգային տախտակը շուռումուռ էր տալիս:

— Իհարկե, հավանություն կտամ, Մարսըլեն,— ասաց նա:

— Թող այդ տախտակը:

— Լավ, Մարսըլեն:

— Տուն մտնենք, խոսենք:

Իգային եղբոր ետևից մտավ մեծ սենյակը, նստեց աթոռին, լուսամուտի մոտ և ձգեց վիպը, որ ընդգծի իր ուշադրությունը:

— Չշարժվես,— ասաց Մարսըլենը:— Ուշադիր լսիր, աշխատիր հասկանալ: Բարդ չէ...

Նա խոսում էր մեղմ, համուկիչ:

— Ի՞նչ կարծիքի ես մեր՝ քո և իմ վարած կյանքի մասին:

— Կյանք է, էլի,— ասաց Իգային:

— Մենություն և թշվառություն: Ժամանակին, երբ դու

տղեկցորդ էիր, կարելի էր ասել, որ երկիրը սնում էր իր վավակին: Բայց այն պատահարից հետո լեռներն այլևս գոյություն չունեն քեզ համար: Իսկ ես այդ արհեստը երբեք չեմ սիրել:

Իգային գլուխը թեքեց, կարծես սավելի լավ լսելու համար: Եղբոր տուփց հասկացել էր, որ խոսակցությունը լուրջ է: Ինքը պիտի ուշադիր լինի, որպեսզի Մարսըլենին հուսախաբ չանի որևէ չմտածված խոսքով:

— Շարունակիր,— ասաց նա:

— Եթե որևէ բան չհասկանաս, անմիջապես հարցրու:

— Կհարցնեմ:

— Ուրիշ տեղերում,— շարունակեց Մարսըլենը,— մարդիկ առաջ են գնում, պլարճանում են, հարստանում: Ինչո՞ւ ենք մենք այդ բոլորից կուրկ՝ ցեխի ու ձյան մեջ, նավթի ճրագով ու ոչխարներով:

— Ճիշտ է,— մրմնջաց Իգային, մեր կյանքը հեշտ չի,— և անմիջապես գուշակեց, որ Մարսըլենին դուր եկավ իր պատասխանը:

— Հեշտ չի, և ես վզվել եմ այս ծանր կյանքից:

— Չվզե՞՛ր ես:

— Այո, ուզում եմ գնալ այստեղից:

Խոսքն այնպես առվեց, կարծես քար գլորվեց ջրիտը: Իգայուն թվաց, թե ինչ-որ օղակներ են լայնանում զանգուկրի տակ:

— Գնա՛, ինչպե՛ս թե գնալ:

Մարսըլենը, ձեռքերը գրպաններում, կանգնել էր նրա ուղև և ժպտում էր ինքնավստահ:

— Պարզապես գնալ: Տեղավորվել քաղաքում: Առևտուր քացել: Ինչպես Օգադուի որդին: Հիշո՞ւմ ես Օգադուի որդուն:

— Այո, Մարսըլեն:

— Սովորական տղա է: Ոչ առանձնապես խելոք է, ոչ էլ՝ հիմար: Բայց երեք տարի է խանութ ունի կայարանի մոտ: Այրում է: Դահուկի դասեր է տալիս, սպորտապրանք է վաճառում...

— Դու էլ ես ուզո՞ւմ սպորտապրանք վաճառել:

— Ինչու չէ... Օգադուի որդին ինձ առաջարկեց միանալ

իրեն: Լավ կլիներ: Հեշտ գործ է, շահույթը՝ ապահով: Բայց ես պետք է մուծեմ իմ բաժինը...

— Ո՞ւմ:

— Օգադուի: Եթե ուզում եմ շահաբաժին ունենալ, պետք է փող դնեմ:

— Դու փող չունես:

— Չունեմ, բայց կարող եմ ունենալ...

Իգային չէր հավատում, որ ինքը լրիվ արթուն է, որ տանն է, և որ դա եղբոր ձայնն է: Եվ որքան ըմբռնում էր Մարսըլենի ասածը, այնքան ուժեղը լքում էին նրան: Նա նայեց քարե օջախին, որպեսզի կառչի որևէ ամուր, անխորտակ բանից:

— Լսո՞ւմ ես, — հարցրեց Մարսըլենը: — Կրկինի՞ր ասածս:

— Դու ուզում ես գնալ, և փող է հարկավոր:

— Բարի: Այդ փողը, ես գիտեմ որտեղից ձեռք բերել:

— Որտեղի՞ց:

— Տունը:

— Տունը ի՞նչ:

— Մի բան արժի:

— Անշուշտ:

— Երեկ քաղաք էի իջել, տեսնելու նոտար Պտիֆոնին: Ես նրան բացատրել եմ իմ հանգամանքը: Նա նույնիսկ գնորդ է գտել...

— Գնո՞րդ, — հարցրեց Իգային:

— Գնորդ... լուրջ անձնավորություն է: Հարուստ: Արդյունաբերող է հյուսիսում: Վեց տարի է արձակուրդներն անց է կացնում լեռներում: Այժմ որոնում է մի հին, գյուղական շինություն. ուզում է ամառանոց դարձնի: Պարոն Պտիֆոնը համոզված է, որ մեր խրճիթը նրան դուր կգա: Մենք կվաճառենք լավագույն պայմաններով: Եվ ինձ հառանելիք գումարով կդառնամ Օգադուի գործընկերը:

Նա շատ արագ էր խոսում, և Իգային ընկալաբար կռացրել էր մեջքը, ասես տեղափոխված պաշտպանվելու համար: Բառերը հոսում էին ականջներն ի վար. «խրճիթը... կվաճառենք... Օգադուի գործընկերը»: Այնուհետև մի բան ծակեց կրծքը:

— Տունը չի կարելի վաճառել, — ասաց նա:

— Ինչո՞ւ:

— Մենք այստեղ ենք ծնվել, դու և ես, մեր հայրն էլ է այստեղ ծնվել, և հայրիկի հայրը...

— Այո, — ասաց Մարսըլենը: — Նրանց կյանքն այսպես է, որ այս անիծյալ երկրում, նույնիսկ տաժանակիր աշխատանքով չի կարելի ապրել: Իսկ տունը, նայիր, ինչի՞ է նման:

— Մեր տունն է, — ասաց Իգային:

Նա այնքան չէր պարմանա, եթե Մարսըլենն իրեն խնդրեք կտրելու թեղ կամ ուտքը: Տունը կարծես իր մարմնի մասնիկը լիներ: Ինքը ոչինչ էր առանց տան, և տունը ոչինչ էր առանց իրեն: Մարսըլենը մի քայլ առաջ եկավ: Պատուհանից լույս ընկավ դեմքին: Չայրույթ չկար նրա աչքերում:

— Գիտեմ, — ասաց նա, — ես էլ եմ ցավում տան համար: Բայց երբ մարդ ուզում է առաջ գնալ, պետք է ապաստի ավելորդ բեռից:

— Տունը ավելորդ բեռ չի:

— Ավելորդ բեռ է, որովհետև բանի պետք չի:

— Հապա ես որտե՞ղ կապրեմ, եթե տունը չլինի:

— Ուրիշ տան մեջ:

— Քե՞զ հետ:

— Ո՛չ, ես արդեն ասացի, որ կտեղափոխվեմ քաղաք:

Իգային օրորեց գլուխը:

— Ինչպե՞ս ապրեմ առանց քեզ:

Եվ կամքից անկախ, նա հիշեց Մարսըլենի ծննդյան գիշերը, իր ձեռքերում ճչացող, թույլ վանգվածը, հեծեծացող մորը՝ փորը իջած, մերկ՝ կեղտոտված օտվանների մեջ:

— Եթե չես ուզում մենակ ապրել, ամուսնացի՛ր, — ասաց Մարսըլենը:

Իգային դեռ տեսնում էր նորածին մանուկին: Մի՞թե նա է խոսում այդպես անողորմ և հրամայաբար:

— Հիսուններկու տարեկանը այնքան էլ ծեր չէ, — շարունակեց Մարսըլենը: — Համենայն դեպս ես ճանաչում եմ մեկին, որ թիթ ու մուռ չի ծռի... Դա Մարի Լավալունն է...

Խոսքն այնքան արագ ասվեց, որ Իգայու շունչը կտրվեց: «Ետո մարմնի ամբողջ արյունը խուժեց գլուխը:

— Հանգիստ թող Մարի Լավալունին, — ասաց նա:

Մարտընը խոսքն առաջ տարավ.

— Նա հինգ տարով մեծ է քեզից, բայց դեռ դուրեկան է: Նա գյուղի ամենավայելուչ տունը: Մենակ չի կարողանում նա գյուղի ամենավայելուչ տունը: Մենակ չի կարողանում բարեկարգել: Նրան մարդ է հարկավոր: Դու առաջ պտուղել ես նրա շուրջը: Երեսուն տարի առաջ, ինքդ ես պատմել...

Ճիշտ էր: Իգային ժամանակին սիրել էր Մարի Լավալուին: Բայց կանանց նկատմամբ ունեցած երկչոտությունը նրան խանգարել էր խոստովանելու սերը: Մարին ապրում էր ծնողների հետ: Նա սպասում էր: Նա թառամում էր: Իսկ ինքը չէր համարձակվում: Մարիի հայրն ու մայրը մահացան մեկը մյուսից մի քանի օր հետո, իսկ Մարին տեղափոխվեց հոսիտ և որպես աղախին աշխատանքի մտավ քահանայի մոտ: Իգային երկար, լուռ տառապեց այդ բաժանումից: Հետո մոռացավ նրան: Լեռներն օրեցօր ավելի ու ավելի էին կլանում նրան: Քսանինը տարի հետո մահացավ քահանան, և Մարի Լավալուն վերադարձավ տուն, իր մեծ դատարկ տունը:

— Հենց հանդիպում էր Մարին,— ասաց Մարտընը,— անմիջապես քո մասին էր խոսում: Նրա հետ լավ կզգաս: Նա կխնամի քեզ: Դու ոչ մի բանի կարիք չես ունենա: Բո տարիքին և քո վիճակում դա իսկական բախտ է: Ես միշտ կգամ քեզ տեսության, շատ հաճախ...

Իգային վարմանում էր, թե առաջվա թմբիկ ու թարմ աղ-չիկը ինչպես է դարձել այդպիսի ջրուտ էակ՝ անփայլ աչքերով ու կախված կզակով: Եվ ամեն անգամ նրան տեսնելիս մտածում էր բախտի չար խաղի մասին...

— Ոչ, Մարտըն,— ասաց նա,— անցել է իմ ժամանակը, ես այլևս չեմ կարող մտածել ամուսնության մասին: Եթե դու գնաս, ես մենակ կմնամ և կմեռնեմ մենակության մեջ: Չէ՞ որ դու իմ վատը չես ցանկանում:

— Իհարկե վատը չեմ ցանկանում,— սրտնեղեց Մարտընը:

— Ուրեմն ես բավարարված եմ:

Մարտընը քորեց ծոծրակը:

— Մի ուրիշ լուծում էլ կա: Այո... քանի որ համառորեն

ուզում ես ամուսնի մնալ... Ես ամեն ինչ նկատի եմ առել... Ուզո՞ւմ ես բացատրեմ...

— Այո, Մարտըն:

— Երբ տունը վաճառենք, ես կմեկնեմ, իսկ դու մի քանի ամիս կապրես Ժուլեֆի մոտ, մինչև կարգավորեմ գործերս... Հետո քեզ կտանեմ... Եվ կվերսկսենք միասեղ կյանքը... Այդպես լավ կլինի... եղբայրաբար... Դու չես մերժի:

Ակներևաբար նրա համբերությունը սպառվում էր: Նա կռացավ եղբոր վրա, ասես ուզում էր իր սովերով, իր մտքով ծածկել նրան: Իգային տեսնում էր շողջողուն աչքեր, որոնք հրամայում էին համաձայնել: Տաք շունչը շոյում էր դեմքը:

— Էլ ի՞նչ ես սպասում, պատասխանի՛ր,— ասաց Մարտընը:

— Տան համար եմ անհանգստանում,— ջնջաց Իգային:— Ես ուզում եմ, որ դու հասկանաս ինձ, հենց որ հասկանաս, դու էլ ինձ նման կմտածես:

Մարտընի դեմքը քարի պես կարծրացավ.

— Դո՛ւ պիտի ինձ հասկանաս, ոչ թե՛ ես քեզ: Բայց ես շատ եմ քարի: Մի դատարկագլուխ թշվառականի համար...

— Այդպես մի խոսիր, Մարտըն,— աղաչեց Իգային:

— Ինչու չպիտի խոսեմ: Որովհետև դա քեզ խանգարո՞ւմ է: Ամեն ոք իր հերթին: Դու ինձ խանգարել ես տարիներ շարունակ:

— Ես ինչպե՞ս կարող էի խանգարել քեզ: Ես միշտ համաձայն եմ եղել քեզ հետ:

— Այո, ինչպես փայտի գնդակն է համաձայն, որ գլորեն իրեն: Գերությունից վերադառնալու օրվանից ապրել եմ փայտե գնդակի հետ: Վեր ենք կենում, ուտում, աշխատում, բնում, օրական փոխանակում չորս բառ: Կարծում ես հաճելի՞ է: Բայց ես հանդուրժել եմ այդ ամենը: Խղճահարությունից: Ոչ այլ կերպ: Խղճահարությունից: Ես կարծում էի փոխադարձ է բարեկամությունը: Ես քեզ վատ եմ ճանաչել: Անխելք ես, բայց հաստագլուխ: Հենց մի բան եմ խնդրում քեզանից, իսկույն հակառակվում ես... Այո կամ ոչ: Թույլ տալի՞ս ես վաճառել...

Մարտուռ անցավ Իգայու ծոծրակով: Ցավում էր գլուխը:

Նա դանդաղ մեկնեց ձեռքը, շոշափեց տան պատը: Նա պահանջ ուներ վզայու տունը՝ կանգուն, իրենը:

— Ոչ,— ասաց նա:

Մարսընը մի քայլ ետ գնաց: Ջղաձգորեն ցնցվեցին շուրթերը:

— Բարի,— ասաց,— բայց լավ իմացիր, ես տեղեկացել եմ, որ դու իրավունք չունես արգելելու իմ բաժնի վաճառքը,— և գրպանից մի թուղթ հանեց, մտտեցրեց Իզայու քթին,— պարոն Պտիֆոնը ամեն ինչ նշել է: Կարգա, քաղաքացիական օրենսգրքի 815-րդ հոդվածը. «Ոչ ոք ոչ ոքի չի կարող ստիպել ապրելու անբաժան, և բաժանումը միշտ կարող է տեղի ունենալ անկախ խոչընդոտներից և տարաձայնություններից»:

Ամեն ինչ պարզ է, կարծես:

— Չգիտեմ,— ասաց Իզային:

— Տունը պատկանում է երկուսիս: Եվ օրենքն ինձ թույլ է տալիս, եթե ուզենամ և երբ ուզենամ վաճառեմ և ստանամ իմ բաժինը:

— Եթե ուզենաս և երբ ուզենաս...

— Ընտրիր: Կամ համաձայնության ենք գալիս, և ես գնորդ եմ գտնում, որոշում ենք զինը և գումարը կիսում, կամ, ինչպես պարոն Պտիֆոնն է ասում, դատարանը աճուրդի կհանի:

Նա թուղթը շարժեց սեղանին:

— Գրված է, կարող ես կարդալ...

Իզայու ձեռքը շարունակ սառն ու անհարթ պատի վրա էր: Նա մատների ծայրով շոյում էր պատը, ինչպես կենդանի արարածի:

— Ոչ ոք իրավունք չունի մարդուն ստիպել լքելու իր տունը,— ասաց նա:— Ոչ դատավոր, ոչ նոտար, ոչ ոստիկան...

Մարսընը, աչքը կկոցած, փոթկած, մերկացնելով լնդերը:

— Տխմար, թշվառական, քեզ ո՞ւմ տեղն ես դրել: Եթե չենթարկվես, քեզ կփակեն: Եվ եթե ոչ բանտում, այլ գժանա-ցում: Հենց այնտեղ է քո միակ տեղը:

Կրակի մի խուրձ հայտնվեց Իզայու դեմքի առջև: Մտքերը խելահեղ պատվում էին գլխում: Մինչև ուղն ու ծուծը ցնցվել էր ինչ-որ արտասովոր ուժի խտացումից: Նա կանգնեց: Հսկա

բռունցքները սեղմվեցին՝ ծանր, հարվածելու պատրաստ: Նա անիմաստ մրթմրթաց.

— Թյո... թյո... թյո...

Մարսընը մի սուսպնով հասավ դռանը, գոչելով.

— Ի՞նչ պատահեց քեզ:

Գուլից մայուն լսվեց: Իզայու բռունցքները թուլացան: Նա հառաչեց.

— Դու այլևս չես սիրում ինձ, Մարսըն:

Մարսընը շտկվեց, շունչը տեղը բերեց: Ասես հեղեղ էր սնցել: Նա գունատվել էր: Այրվում էր կզակը: Արագ-արագ թարթում էր աչքերը:

— Ինչպես սիրեմ քեզ,— տրտնջաց թույլ ձայնով:— Քեզ նետ անկարելի է խոսել: Կորցրել ես դատողությունը: Մտածիր մի քիչ: Ասա, որ համաձայն ես, և ես ամեն ինչ կստանամ...

Լռություն տիրեց: Ասես տունը սպասում էր վճռի:

— Դու վաճա՞ր ես, որ ես չեմ կարող արգելել տան վաճառքը,— ասաց Իզային:

— Եթե ինձ չես հավատում, գնանք պարոն Պտիֆոնի մոտ: Ես քեզ կբացատրի, գրքով ցույց կտա...

— Իսկ վաճառքը ե՞րբ կլինի:

— Առաջիկա չգիտեմ: Այս երեկո նոտարը պետք է վանճա-րարի:

— Ո՞ւմ:

— Հյուսիսի պարոնին: Կխոսի գործարքի մասին:

— Հեռախոսո՞ւմ:

— Այո: Եվ վազն առավոտյան ինձ սրտտախան կտա:

— Վաղն առավոտյան կվաճառվի՞:

— Ոչ, հիմար,— գոչեց Մարսընը:— Վաղն՝ առավոտյան կտեսնեմ պարոն Պտիֆոնին, և նա կասի, թե իր հաճախորդն այսպեղ հետաքրքրվո՞ւմ է գործարքով:

— Եվ եթե հետաքրքրվի՞:

— Կսպասենք մինչև հաճախորդը գա պարնաւաւորվի: Ինչևէ, այդ պարունը ծննդյան տոնից շուտ չի գա:

— Իսկ եթե պարոնին չհետաքրքրի:

— Կորոնենք մի ուրիշի:

— Երկա՞ր կտևի:

— Անշուշտ:

Իպային թեթևացած շունչ քաշեց: Վտանգը հեռանում էր:

— Հիմա հասկացա՞ր,— հարցրեց Մարսըլենը:

— Հասկացա:

— Եվ համաձայն ես:

— Ոչ:

Մարսըլենը նրա կողմը նետեց արագ մի հայացք՝ թանաքի գայտքի պես սև: Մի պահ ցանկացավ շարունակել վեճը: Հետո ձեռքերը շարժեց, ասես սարդոստայն էր հեռացնում իրենից, և ասաց.

— Այսօր այլևս չեմ ուզում խոսել: Մտածիր մի քիչ: Հետպիտես կվարժվես այդ մտքին: Եվ երբ ամեն ինչ դասավորված լինի, դու երախտապարտ կլինես:

— Խուստանում եմ մտածել,— ասաց Իպային:— Բայց ի՞նչ օգուտ:

Մարսըլենը վերցրեց մեխից կախված պիջակը, գցեց ուսերին և դուրս եկավ: Իպային երկար մնաց անշարժ: Բերանը բաց ու խուսի էր անում: Արցունքներ էին հոսում պստերով: Հետո նա ոտքերը քարշ-քարշ տալով դուրս եկավ: Մարսըլենը չքացել էր կենդանի ետևում:

— Մարսըլեն, ո՞ր ես գնում,— գոչեց Իպային:

Պատասխան չեղավ: Նոսր փաթիլներ էին իջնում երկնքից: Դարերով անշարժ լեռները, որ նշմարվում էին մշուշի մեջ, ասես հերքում էին որևէ հնարավոր փոփոխություն երկրի ռելեֆում և մարդկանց կյանքում: Հանգստացնող էր նրանց ներկայությունը: Իրենց ժայռելուստներով նրանք ասես հավանություն էին տալիս Իպային: Նա մի փոքրիկ տախտակ վերցրեց և սրտնեղած սկսեց տաշել. «Երևի նոտարն է գլխի գցել»...

Նա տուն մտավ, վերցրեց սեղանի թուղթը և գիրկապ անելով կարդաց. «Ոչ ոք ոչ ոքի չի կարող ստիպել...» դա պարոն Պոսիֆոնի ձեռագիրն էր: Իպային ծալեց թուղթը, գրպանը դրեց.

— Մեղավորը ես եմ... Չկարողացա Մարսըլենին բացատրել... խոսքեր չգտա... Ես կարող էի ասել. «Այս տունը գեղեցիկ չէ, բայց մենք իրավունք չունենք վաճառելու, որովհետև եթե մեր հայրը կենդանի լիներ, չէր թողնի...»:

Այդ փաստարկն անժխտելի թվաց նրան: Այժմ ուզում էր անհապաղ տեսնել եղբորը, բացատրեր նրան: Ո՞ր է Մարսըլենը: Անպայման գնացած կլինի ժողովի մոտ՝ դժգոհությունը գինուն տալու: Դե նրա սովորությունն է, իսկ հետո ավելի կատաղած և ավելի հիվանդագին է դառնում: Իպային խղճաց եղբորը և գնաց նրա ետևից: Ոտքերը խոշոր քայլեր էին գծում փափուկ, մաքուր ձյան վրա: Թևերը ճոճվում էին կողքերից: Նա հեռւմ էր.

— Երեխա է, բան չի հասկանում:

Չլուսը դադարել էր: Երևացին գյուղի առաջին տները, որ սպիտակ ծածկույթի տակ ավելի սև ու ցածրիկ էին թվում, քան սովորաբար: Ճամփեկրին կծկվել էր Մարի Լավալուի տունը՝ բակի դռնակը բաց, ասես պատրաստ կուլ տալու շոգի ու ցուրտը: Մի կարմրաշեկ գամփռ հաչելով ընդառաջ եկավ Իպային:

— Իպայի, գալիս ես ձեզո՞ւնը նորոգես:

Մարի Լավալուն դուրս էր գալիս տանից, ուսին մի կողով, մեջքը՝ կոր: Նա ուրախ ծպտաց անատամ բերանով: Այտերը վարդագույն էին: Իպային աչքերն իջեցրեց: Ամոթի տարտամ վզացումը բարձրացավ մաշկն ի վեր, նա կարմրեց և ասաց.

— Ոչ: Այսօր ժամանակ չունեմ, վաղը...

— Շտապո՞ւմ ես: Երևի ժողովի մոտ ես գնում:

— Ի՞նչ իմացար:

— Բոլոր տղամարդիկ այնտեղ են:

— Բոլոր տղամարդի՞կ,— վախեցավ նա,— ինչո՞ւ:

— Երևի խոսելու բան ունեն: Իսկ ես գնում եմ անտառ՝ փայտի:

Իպային նայեց հեռացող կնոջը՝ կաղ, բայց առույգ: Համառոտաբար գորշույթյան մեջ սևին էր տալիս նրա կերպարանքը: Կարմրաշեկ գամփռը, պոչը ցցած, ճանապարհը հոտոտելով, հետևում էր նրան:

Գյուղն ամայի էր: Ժողովի սրճարանից աղմուկ էր գալիս: Իպային հրեց դուռը և կանգ առավ շեմին՝ կուրացած ներսի խավարից և բզկոցից խլացած: Չիբուխները ծուխ էին արձակում: Դեմքերը աշխույժ էին: Թրջված շներ էին կուչ եկել

գառարանի մտա: Մարսըները նստած էր մեծ սեղանի առջև, Բեկակկիի, Արուսի, Ռուբիի և Բարդուի հետ:

— Մտիք, Իզայի, ժամանակին ես եկել, — գոչեց Ժուլեֆը:— Տեղ բացեք Մարսըների մտա: Նրանց չպետք է անջատել...

Իզային ծպտաց բոլորին: Էսք տվեց արտառի վրայով և կրտսեղ եղբոր աջ կողմում: Մարսըները՝ ձակատը մթնած, աչքերը չարությունք լի, մատների մեջ շուռուտուտ էր սալիս գինու բաժակը:

— Հո չե՞ս բարկանում, որ եկել եմ, — փախաց Իզային:

— Դու ազատ մարդ ես, — նետեց Մարսըները:

— Ես մտածել եմ սառն համար...

— Իզայի, լսե՛ր ես նորությունք, — կարցնողը գրազայեան էր:— Այս առախոս, ժամք սառին, փրկեարար արշավախումք է դուքս եկել բարձրից, որ բարձրանա լեռներք, ինքնարթիթի մտա: Գնում են երկու շղթայով, ամեն մի շղթան կազմված է երկք հոգուց: Նրանց ուղեկցում է Նիկոլա Սերվուզը: Ի՞նչ կարծիքի ես:

Իզային եկել էր եղբոր հետ խոսելու: Նա կորցրեց մտքի թելը, խլշկաց, չհասկանալով, թե ինչ են ուզում իրենից այստեղ հավաքված մարդիկ: Վերջապես, իշխելով ջիոթանություն նա սասց.

— Եթե Նիկոլա Սերվուզը հասնծ է առև, ուրեմն փոստն է իր վրա: Նա իր գործը լավ գիտի...

— Այո, իր գործը լավ գիտի, բայց մեծ համարձակություն է, — սասց ոտտիկանը:

— Այո, մեծ համարձակություն է, — հարեց Իզային:

— Խենթություն է, — գոչեց գրողայեալը, — խաբար վեց ձարդու կյանքի հետ, նման սրայաններում: Եթե գոնե ողջ մնացած մարդ լինեք փրկելու համար: Բայց ոչ, սաղիոն պարզ սասց, միայն դիակներ և փոստ: Նրանք գնում են փոստի համար: Արժե՞ միթե թղթերի համար...

Օգտվելով ստեղծված աղմուկից, Իզային թեքվեց եղբոր կողմը և ակունջին փախաց.

— Դուքս գնաք, թեք սառն, թե ինչու չեմ ուզում վաճառել: Ես այնպես կբազարտեմ, որ դու չես խոռվի ինձանից: Երբ գնացիր, ես մտածեցի:

Մարսըները արմունկի հարվածով կրտսայեց թեք:

— Խոսե՛րք սառցաբաշտ կհասնի ժամք չորսին, — տասց Ժուլեֆը:

— Թեկուզ երեզին հասնի, — հառաչեց Բարդուս: — Ամենաթիվարը՝ վերելքը, կակալի վաղը:

— Նրանք կարող էին վերելքը կատարել ցերեկով, եթե դուքս գային գիշերը, — սասց գրողայեալը: — Ժամանակին դու մի օրում էիր բարձրանում, Իզայի:

Իզային ցնցվեց, կարվեց սեփական մտածումներից: Երկրորդ անգամ խզվեց նրա մտքի թելը: Նա վարձանցավ:

— Իզայի, թեք հետ են խոսում, — գոչեց Ժուլեֆը:

— Այո, — սասց Իզային: — Ժամանակին ես այդպես եմ արեց: Բայց դա ամառն էր: Հիմա նոյեմբերն է: Ամենազվկի ժամանակը: Երեք հարյուր մղոն վերևում սառն ինչ կորած է ձյան ու լառույցի մեջ: Եվ գնալով փառանում է...

Պետք է քայլն կույրի նման խարխալելով, մինչև այդրերը ձյան մեջ բաղված: Խարխուլ ձուակամուրջներ, մառախուղ, սառնամանիք...

— Սերվուզի տեղը լինեի, կանցների հարավային կողմից, — սասց Բարդուս:

— Խե՞նթ ես, ինչ է, այն կողմում ժայռերը լրիվ ողորկ են, — նկատեց Ժուլեֆը:

— Հետո ինչ:

— Այս եղանակին դուքս գալը, նույնն է թե՛ մեկնելուց առաջ մտաներդ կտրես...

Իզային անհամարձակ քաշեց Մարսըների թևից:

— Գնանք: Այստեղ չեմք կարողանա խոսել եղբայրների նման:

Պատասխանելու փոխարեն Մարսըները դատարիեց իր բաժակը և թեքով սրբեց բերանը:

— Թերևս ռադիոն միացնեիր, Ժուլեֆ, — սասց նա:

— Հիմա լուրեր չեն հաղորդում, — պատասխանեց Ժուլեֆը, — հինգ րոպեից:

Նա ձևորը դրեց առաջինընդունիչին, որ միակն էր գրողում: Բոլորի հայացքները ակնածանքով կանգ առան փայտյա, շագանակագույն արկղիկի վրա, որ վարդարված էր երոնիտե



կոճակներով: Խորհրդավոր և անթափանց, նա բազմել էր բուխարիկի մոտ, պատին մեխված տախտակին: Կեղտ ու մրի ծվեններ էին կախվել անտենայից:

— Համենայն դեպս, դեռ բան չէն իմանա,— ասաց գյուղապետը:

— Եկ, Մարսըլեն,— ասաց Իգային,— ինչ գործ ունենք ինքնաթիռի հետ: Գնանք տուն: Խոսելիք շատ ունենք...

— Թքել եմ ինքնաթիռի վրա,— միթմրթաց Մարսըլենը, ատամների արանքից:— Բայց գոնե այստեղ մենակ չեմ քեղ հետ: Դա միսիթարում է ինձ:

Իգային խոնարհեց թարթիչները: Նրան թվում էր, թե մշուշ է լցվում թուղերը, գլուխը: Նրա շուրջը բոլորը խոսում էին փլուպումների, հեղեղի ու ժայռերի մասին, գովաբանում էին Սերվոպին, նշում արշավի դժվարությունները: Հանկարծ գյուղապետն ասաց.

— Կեսօր է:

— Համոզվա՞ծ ես,— հարցրեց Ժուլեֆն անվստահ:

Ապա նայեց պատի ժամացույցին, գրպանից հանեց մետաղյա շրջանակով ակնոցը, դրեց խոշոր քթին ու փքված մոտեցավ ռադիոընդունիչին: Խոսակցությունները դադարեցին: Մասունների ծայրով Ժուլեֆը շոյում էր էրոնիտե կոճակները: Մի կանաչ աչք վառվեց արկղի ճակատին:

— Տարանում է,— ասաց Ժուլեֆը:— Համբերեցեք:

Վերջապես լավեց մի հեռավոր, բեկբեկուն ձայն:

— Քաղաքական նորություններ,— խոսեց գյուղապետը: Մարսըլենը սեղանից վերցրեց շիշը և իր բաժակը լիքը գինի լցրեց: Իգային փորձեց արգելել նրան խմելու:

— Գիտես, որ վնաս է քեզ:

— Ինձ վնասողը գինին չէ, այլ քո տխմար հաստակողությունը...

— Լռեցեք,— բարկացավ Ժուլեֆը:

Բոլորը սպասում էին՝ հայացքները ռադիոընդունիչին հառած, ջունչները պահած: Հաղորդավարը խոսում էր սահուն, առանց դադարների, պատրաստակամ, միապաղաղ:

— Ահ, վերջապես,— ասաց Կոլոպը:

— Չույսած սառույցին, մառախուղին և ձևափոխների վտան-

գին,— ասում էր հաղորդավարը,— փրկարար մի արշավախումբ, որ կապնված է վեց փորձառու ուղեկցորդներից, այսօր, առավոտյան ժամը 10-ին դուրս է եկել հայտնի ուղեկցորդ Նիկոլա Սերվոպի գլխավորությամբ, որպեսզի փորձի հասնելու Կալկաթա-Լոնդոն գծով թռչող Blue Flower ինքնաթիռի բեկորներին: Թեև չնչին հույս անգամ չկա, որ մարդ փրկված լինի, համենայն դեպս պարաշյուտով մթերք և դեղորայք է նետվել աղետի վայրը: Լավ հանդերձավորված արշավախումբը վերցրել է սահնակ, գրպանի ռադիոընդունիչ և հրթիռներ: Ըստ վերջին լուրերի, մարդկանց երկու շրթանները, լուրաքանչյուրում՝ երեք մարդ, ձյան թանձրության պատճառով դանդաղ են առաջ շարժվում: Երեկ Ֆրանսիայի ֆուտբոլի խմբի մրցումները Անգլիայի խմբի հետ...

Ժուլեֆը պտտեց կոճակը. ձայնը լռեց:

— Վերջացա՞վ,— հարցրեց Մարսըլենը:

— Էլ ինչ կուզեիր,— նետեց Ժուլեֆը հեգնանքով:— Վաղը նոր բաներ կհաղորդեն:

Տղամարդիկ ելան մեկը մյուսի ետևից, գլուխները տմբուրմբացրին, վճարեցին և ուղղվեցին դռան կողմը:

— Ցտեսություն, Ժուլեֆ:

— Անցեք:

— Եթե նոր տեղեկություն իմանա...

— Հիմա կարող ենք տուն գնալ, չէ՞, Մարսըլեն,— հարցրեց Իգային:

Նրանք վերջինը դուրս եկան: Մարսըլենը քաջում էր ձեռքերը գրպաններում կզակը կրծքին հակած: Իգային պզգաց, որ շփոթունքն աճում է: Նա մոռացել էր այն գեղեցիկ խոսքերը, որ պատրաստել էր եղբոր բացակայության ժամանակ: Ինչպե՞ս էր. «Հայրը ողջ լինելը, թույլ չէր տա...»: Հենց որ հասան տանը, նա կանգ առավ և ասաց.

— Նայիր, Մարսըլեն: Դու պզո՞ւմ ես, որ սա մերն է:

— Հետո ինչ: Եթե ուրիշի պատկանի, մենք ավելի երջանիկ կլինենք:

— Ավելի լավ կլինի սպասենք, տեսնենք...

— Ես արդեն ջատ, ջատ եմ սպասել:

— Վաղը պիտի գնա՞ս նոտարի մոտ:

— Այո, պետք է գործը վերջացնել:

— Իսկ եթե ես չեմ ցանկանում...

Մարտըները սեղմեց ծնուրը... Փոքրիկ, ոսկրոտ գնդիկներ խաղացին այտի մաշկի տակ: Նրանք տուն մտան, և Իվային սովորականի պես ձաջ պատրաստեց:

4

— Իվայի՛, Իվայի՛, ե՛կ, շուտ արա:

Որսագող Բարդուխ ձայնն էր: Երկու ժամ էր Իվային նորոգում էր Մարի Լավալուի ձեղունի ծածկը: Նա շուկվեց, մուրճը ցած դրեց և կանչեց.

— Ի՞նչ կա:

Չլուսխառն քամին անցավ տախտակների արանքով և խանգարեց լսելու պատասխանը: Աղջամուղջը լցվում էր ձեղունի խորքը: Դեռ շատ անելիք կար ձեղքերը չրիվ փակելու համար: Երկու գերանդի ու երեք փոցի էին կախված կռենու փայտի ցցերից: Իվային շոշանցեց խոտի կույտը, կռացավ փոքրիկ պատուհանից և նորից գոչեց.

— Ի՞նչ կա:

Փայտե դիք անդուղքով նա իջավ ներքևի սրահը: Ծրնկները դողում էին: Անհանգիստ էր սիրտը: Եղբոր հետ ունեցած վեճից հետո նա շարունակ վատ նախազգացում ուներ: Այս առավոտ Մարտըները շատ վաղ էր դուրս եկել տնից և քաղաք էր գնացել առանց բան ասելու: Գուցե վերադարձել է նուտարի, դատավորի ու ոստիկանի հետ: Եվ գուցե այդ պարտններն արդեն աճուրդի են հանում տունը:

— Գրողը տանի,— քրթմնչաց Իվային,— գրողը տանի... Եթե դա է...

Նա ցատկեց վերջին սանդղամատը և հայտնվեց Մարի Լավալուի և Բարդուխի առջև: Նրանք տխուր էին: Ծեր որսագողը օրորում էր գլուխը, որի ծալքավոր, ժանգագույն մաշկը ծածկված էր հատ ու կենտ սպիտակ մազերով:

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Իվային:

— Սերվուզը... Սերվուզը ջախջախվել է,— ջջնչաց Բարդուխ: Իվային այնքան հեռու էր Սերվուզի մասին մտածելուց, որ

անմիջապես չհասկացավ, թե ինչ են ասում և ինքնաբերաբար կրկնեց.

— Ջախջախվել է:

— Այո... Այո՞ր, առավոտյան... Չնախուր ծածկել է նրան: Մնացել է վեց մետր ձյան տակ: Մեռած են հանել...

— Սուրբ Մարիամ,— թոթովեց Մարի Լավալուն,— կյանքը ցոռ տվեց մի օտար ինքնաթիռի...

Նա հայացքը դարձրեց Իվայուն, ասես նրան հրավիրելով կարծիք հայտնելու այդ իրադարձության առթիվ: Բայց Իվային ոչ խոսում էր, ոչ շարժվում:

— Կին ու երեխա ունի խեղճը,— վերսկսեց Մարի Լավալուն,— ի՞նչ պիտի անեն...

Նրա թոշնած այտերը, կրոր ու անփայլ աչքերը թրթռում էին հուզմունքից: Նա մի ձեռքով դանակ էր բռնել, մյուսով՝ կարտոֆիլ: Իվային, աչքը դանակին՝ ու կարտոֆիլին հառած, աստիճանաբար համակվում էր ծանր աղետի կսկիծով: Սերվուզը՝ իր լավագույն տարիների վկան, հեռացել էր կյանքից: Թվում էր, թե այդ մարդու անհետացումով գյուղը պիտի որբանար:

— Դաժան հարված է,— մրթմրթաց Բարդուխ:

— Նիկոլա Սերվուզը իսկական մարդ էր... Միասին շատ ենք բարձրացել լեռները... Եվ ահա... Հինաբարբար... Նա չպետք է... Եթե ես այնտեղ լինեի, չէի թողնի, որ մեկնեն...

Բառերը բերանից դուրս գալով այլափոխվում էին:

— Քարավանը վերադառնում է,— ասաց Բարդուխ:— Դիակը բերում են: Կառավարությունը կարգադրել է դադարեցնել որոնումները: Վտանգի պատճառով: Անտուանտի տղան էր ասում. քաղաքից էր եկել:

— Ես կարող էի խանգարել նրա մեկնումը,— կրկնեց Իվային,— նա լսում էր ինձ... Մի քիչ կբարկանար... Հետո կասեր... «Դու իրավացի ես, Իվայի...»:

Հանկարծ նա գոչեց.

— Ոչ, այդպես չէր կարող ընկնել... Ինչո՞ւ չեն բռնել... Զե՞ որ շղթա կապմած են եղել... Կարող էին...

— Եթե ուզում ես մանրամասնություններ իմանալ, արի՛ ժողկեֆի մոտ,— ասաց Բարդուխ:

— Ահա հիմնիկա ուղեկցորդները, խնդրեմ, օրիորդ են դարձել... Գլուխները կորցրել են... Թույլ են տվել, որ սայթաքի...

— Գնա ժուպեֆի մոտ, Իգայի,— ասաց Մարի Լավալուն:

— Հասա ձեզո՞ւմ: Դեռ չեմ վերջացրել...

— Մուտն է արդեն: Մի ուրիշ օր կվերջացնես:

— Ինչպես են թողել, որ ընկնի... Եվ նա մեռած է արդեն:

Մարի Լավալուն նրա ուսերից բռնած մեղմիկ դուրս հրեց:

Դռների առջև ձյունը ցելի էր դարձել: Գլուղի տղամարդիկ հավաքվել էին ժուպեֆի տանը, որ քննեն նորոգությունը: Նույնիսկ քահանան էր եկել: Ոչ ոք չէր խնում: Սգավոր դեմքեր: Անես երապում, Իգայու ականջին էր հասնում խոսակցության պատահիկներ. «Հնդկաստանի դեսպանը քաղաք է եկել... Սերվուպին հողին կհանձնեն երկու օրից... Ազգային թաղում... Նա չէր կարող անցնել... Եթե կարողանար... Չախորդություն է... Իմ կարծիքով մեծ համարձակություն էր... Մեկ վրա թանկ կատեց դրանց ինքնաթիռը... Միթե քրիստոնեություն է, տե՛ր հայր, մարդկանց ուղարկել մահվան բերանը...»:

Իգային աննկատ դուրս եկավ: Նա հանկարծ կարիք էր զգացել լինելու մենակ, մաքուր օդում, ճանփի վրա: Ուզում էր հրաժեշտ տալ Սերվուպին: Նա դանդաղ քայլեց դեպի Ծեր ամուրիների ավանը: Կոշիկները թաղվում էին ձյան մեջ: Սառնաշունչ երեկո էր: Երկնքում մի քանի աստղ էր պլպլում: Իգային ասաց.

— Մասս բարով, Նիկոլա՛... Ոչինչ, Նիկոլա՛...

Բերանից ելնող գոլորշին նրա աչքին ոգու տեսք էր առնում, որ մեկ հայտնվում էր, մեկ երես դարձնում և պարելով հաչում օդում: Նա անցավ գերեզմանոցը, որ գտնվում էր գլուղից դուրս, մի բլրի վրա, հասավ եկեղեցուն, բացեց դուռը, սուպիեց քարերի սառը խավարի մեջ: Փայլում էին մերկ ու ողորկ նստարանները: Սրբարանի խորքում կայծկուտում էր պատկերների ոսկին: Իգային աղոթեց, մի անգամ էլ արտասանեց Սերվուպի անունը, խաչակնքեց և դուրս եկավ:

Նա կարծես հանգստացավ և հավաքեց իրեն, որպես մի մարդ, որ պետք է կարգավորի ընտանեկան մի ծանր հարց: Թանձր խավարի մեջ նա արդեն հայացքով դրո՞նում էր իր

տունը: Հանկարծ լույս նշմարեց: Կասկած չկար, իրենց տունն էր: «Մարսըլենը վերադարձել է, առանց ժուպեֆի սրճարանը մտնելու»: Իգային արագացրեց քայլերը, հետո սկսեց վազել՝ բերանը բաց, արմունկները իրանին սեղմած:

Դուռը կիսաբաց էր: Իգային հրեց փեղկը:

— Ողջո՞ւյն, Չայի՛,— ասաց Մարսըլենը:

Նա սեղանի մոտ նստած հաց ու պանիր էր ուտում: Առջեվում նախի լամպի մոտ, դրված էր մի բաց լրագիր և մի հաստափոր գիրք՝ կապույտ, թանաքուտ կապնով բառարանը՝

— Եկե՛՛լ ես,— ասաց Իգային,— ինձ թվում էր, թե կմտնեիր ժուպեֆի տուն...

— Ինչո՞ւ...

— Խոսելու...

— Չեմ սիրում չաչանակներին: Ինչքան էլ խոսվի, միևնույն է, Սերվուպի համար ոչինչ չի փոխվի: Ճի՞շտ է:

Իբրև համաձայնության նշան Իգային գլխով արեց, Մարսըլենը շրջեց լրագրի էջը: Նա կարդում և ուտում էր միաժամանակ:

— Քաղցած ես,— հարցրեց Իգային:

— Այո:

— Շուտ չե՞:

— Ուզում եմ վաղ պառկել:

— Հոգնած ես:

— Այո:

— Քաղաքն է հոգնեցնում քեզ: Քեզ համար չէ քաղաքը: Իգային նստեց եղբոր դիմաց, հանեց դանակը, խաչ քաշեց հացի վրա, կտրեց մի շերտ, բերանը դրեց:

— Կույ չի գնում,— ասաց նա,— Սերվուպի մահը սիրոստ տակնուվրա է արել:

Նա ծամում էր հացը և աչքի տակով նայում եղբորը: Լրագրին կոացած Մարսըլենի դեմքն արտահայտում էր հակասական պացմունքներ: Արդյոք Սերվուպի մահն է ցնցել նրան, թե՛ նուտարի պատասխանը: Անհանգստությունը հիվանդության պես բուն դրեց Իգայու մարմնում: Բայց չէր համարձակվում հարցեր տալ: Ժամանակ շահելու համար հարցրեց.

— Թե՛րթ ես առել:

— Այո:

— Ի՞նչ կա Սերվոսի մահվան մասին:

— Վաղը կլինի: Այ, նայիր լուսամկարին: Սա դեպքի վայրն է: Երեկ մի օղաջու է նկարել:

Սկարը տարտամ էր, անհաջող: Ցից քարածայրերով ծածկըված մի սպիտակ լանջ էր բարձրանում դեպի զագաթը վարագուրող թանձր մետախուղը: Այս ու այն կողմում բծեր էին ցրված, ինչպես բզկտված միջատներ:

— Ինքնաթիռի բեկորներն են,— ասաց Մարսըլենը,— կամ դիակներ...

— Մո՛ւրբ տիրամայր,— մրմնջաց Իգային:

Բայց նրա միտքն զբաղված էր պարոն Պոլիֆոնով:

— Եթե ինքնաթիռը տասը մետր ավելի բարձր թռչեր, կանցներ,— ասաց Մարսըլենը:— Ներքին գործոց մինիստրությունն արգելել է շարունակել որոնումները: Ժամանակն էր:

— Ասում են որտեղի՞ց էր գալիս այդ ինքնաթիռը:

— Կալկաթայից: Հնդկաստանից:

— Հնդկաստանը որտե՞ղ է մոտավորապես:

— Նայիր բառարանում, այ, հանել եմ, որ ստուգեմ,— պատասխանեց Մարսըլենը:

— Դու ցույց տուր,— ասաց Իգային, որպեսզի մի փոքր էլ հետաձգի եղբորը հարցուփորձելու ժամանակը:

— Գլուխս տարար,— մրթմրթաց Մարսըլենը:— Ինքդ գտիր: Տեղը նշան եմ արել...

Իգային թերթեց բառարանը, հայացքի առջևով փախչում էին տեքստի պունակներ և գորշավուն նկարազարդումներ: Վերջապես կանգ առավ մի էջի վրա, որի արանքում թղթի կտոր էր դրված: «Հնդկաստան»: Վարդագույն ու լայն մի լեպու էր կախված կտրտված ամերով մայր ցամաքից դուրս: Երկրի մակերեսը մաշկային հիվանդության պես այլանդակում էին ծուռումուռ գծեր, կետեր, շրջանակներ: Նա կարգաց մի քանի պատահական անուն. Բուրբեյ, Մադրաս, Հայդարաբադ, Կալկաթա...

— Կալկաթա,— ասաց նա և նայեց այդ կետին:— Այստեղի՞ց են դուրս եկել:

— Այո,— պատասխանեց Մարսըլենը:

— Իսկ մենք ինչքա՞ն ենք հեռու նրանցից:

— Պետք է նայել ընդհանուր քարտեզը: Տասը հազար կիլոմետր կլինի ուղիղ գծով: Մի խոսքով, աշխարհի վերջն է:

— Աշխարհի վերջը:

Իգային շրջեց էջը: Քարտեզի հակառակ կողմում տրված էին մանր նկարներ, որոնք ներկայացնում էին երկրի մի քանի տեսարան՝ արձաններով պարզարված տաճարներ, բացօթյա պուևաշարեր, բյուրավոր թներով ապրող աստվածներ, երապկուռ ծախսներով պապած աստվածներ, սրբազան փղեր, օձ հմայողներ, ավերված պալատներ, նոր պալատներ: Այս ողջ կախարդանքը մի խուրձ ճառագայթի պես դիպավ Իգայու աչքին: Նա փակեց գիրքը: Չքացավ կախարդանքը: Գոմում հանդարտ մայեցին գառները: Մարսըլենն ավարտեց ընթրիքը:

— Այո, սա բնավ նման չի մեր երկրին: Տեսնես նրանց եկեղեցիները նման են մերին:

— Ոչ:

— Մեծ է աշխարհը,— հառաչեց Իգային:

Նա վեր կացավ, կաթ լցրեց գավաթը և խմեց երկար ուսպերով: Մտաեցել էր եղբորը հարցուփորձելու պահը: Միայն հարկավոր էր տրամադրող խոսք գտնել:

Իգային ուղեղից դուրս էր քաշում բառերը, լավը վատից ջոկջոկում: «Եթե մի քիչ էլ ուշացնեմ, Մարսըլենը կգնա կքնի, և ես քան չեմ իմանա մինչև վաղը»: Այս փորձությունը նրա ուժերից վեր էր. ուզում էր իմանալ և վախենում էր իմանալ: Կարծես վիհի եզրին կանգնած լիներ: Դատարկությունը ձգում էր նրան:

— Մարսըլեն:

— Այո:

— Նոտարին տեսա՞ր...

— Տեսա:

— Եվ ի՞նչ:

— Չեղավ:

Հաջորդող լուսության մեջ լսվում էր տանիքից սահող հնազնդի ձայնը:

— Ինչո՞ւ չեղավ,— հարցրեց Իգային:

Նրա սիրուն արագ էր բարախում:

— Պարոն Պոփֆոնը պանգահարեց հաճախորդին:

— Հյուսիսի պարոնի՞ն:

— Այո, հյուսիսի պարոնին: Նա միտքը փոխել է, ուզում է ուրիշ տեղ գնել: Ասել է, որ մեր տունը քաղաքից շատ է հեռու...

Ուրախությունից երեքայուլ, Իգային կույզ ձեռքերով հենվեց սեղանին:

— Իսկապե՞ս:

Մարսըլենը դառը քմծիծաղեց և խաթեց:

— Իհարկե, կերճվես:

Հուսախաբությունից ասես թուլացել էին Մարսըլենի դեմքի մկանները: Երկու ծալք էին ակոտում այտերը: Տնցվում էր կպակը: Նա այնպես թույլ ու անմխիթար թվաց, որ Իգային ամաչեց իր ուրախությունից: Եվ խղճահարությամբ թեքվեց եղբոր կողմը, ձեռքը դրեց նրա ուսին:

— Մի վշտանա, Մարսըլեն, կրասավորվի, մի ուրիշին կգտնես...— ասաց նա և անմիջապես զգաց սեփական անհետևողականությունը:

— Ինքը էլ չգիտես, ինչ ես ուզում,— մրթմրթաց Մարսըլենը:— Առաջ չէիր թողնում վաճառենք, հիմա էլ, երբ ձախողվել է, խորհուրդ ես տալիս չեռուսահատվել...

— Ես չեմ ուզում, որ դու սրտնեղես,— ասաց Իգային:

Նա ցավում էր, որ Մարսըլենն սղթքան հուլաված է իր ձեռնարկի ձախողման համար: Եվ հանկարծ զգաց, որ եղբոր երեսին ժպիտ տեսնելու համար պատրաստ է հրաժարվելու իր ամենաթանկ ունեցվածքից:

— Միասին կզնանք նոտարի մոտ,— ասաց նա:

— Ի՞նչ օգուտ: Ես արդեն զգուշացրել եմ: Հենց որ հաճախորդ գտնի, իմաց կանի: Բայց այդ կարող է տևել ամիսներ ու ամիսներ:— Նա իր տասը մատներով ծածկեց դեմքը:— Ես վստահ էի, որ կհաջողվի: Ես ամեն ինչ դասավորել էի մտքումս: Օգադուն համաձայն էր: Ուրախ էր: Իսկ այժմ, ահ, անիծվի տունդ... Գրողի ծոցն անցնի...

Իգային խաչակնքեց:

— Հոգուդ մեղք մի անի, Մարսըլեն: Աստծո օգնությամբ կվաճառես:

Մարսըլենը բռնցքներով տրորում, ասես հայրենու էր ճակատը: Ջղային հեկեկոցից ցնցվում էին ուսերը:

— Գեղեցիկ խոսքեր: Բայց տակը բան չկա: Օրերն անցնում են: Եվ ես կատաղում եմ: Լսո՞ւմ ես... Գժվում եմ... Նորից աշխատել սղոցարանում կամ մի ուրիշ տեղ... Երբեք: Ես ուզում եմ գնալ, գնալ...

Նա ձեռքի ավերով հարվածում էր սեղանին: Դեմքին լույս ընկավ, մաշկին դժգույն բծեր կային: Կուպերը կարմիր էին: Նա դանդաղ ասաց.

— Այլևս անտանելի է...

— Հանգստացիր,— հորդորում էր Իգային:— Մեղանից ավելի դժբախտները կան... Խորտակված ինքնաթիռի ուղևորները... Սերվուզը... Սերվուզի կինը...

— Երանի Սերվուզի տեղը լինեի,— ասաց Մարսըլենը:— Նա այժմ ոչ մի բանի կարիք չունի:— Այս կանգնեց և շուրջը նայեց. կարծես համրում էր իրեն օղակած թշնամիներին,— կեղտոտություն, կեղտոտություն, կեղտոտություն...

Նա քաշեց թերթը, ձմրթեց և ոտքով հարվածեց աթոռին:

— Գնանք քնենք,— ասաց Իգային:— Վաղը հանգիստ գլխով կմտածես:

— Ոչ,— ասաց Մարսըլենը:

Իգային վերցրեց նավթի ձրագը և ոտքի ելավ: Մի ամբողջ գլխով ինքը բարձր էր եղբորից և դրանից իրեն ավելի ուժեղ և ավելի պատասխանատու էր զգում: Լույսի մի օղակ հայտնվեց առաստաղին: Վառարանն ընկավ սուլերի մեջ: Իրար ետևից նրանք մտան սենյակ, լույսը՝ հետները: Չույգ մահճակալների արանքում Իգային ծունկի իջավ՝ աղոթելու:

\*  
\* \*

Մեջքին պատկած, աչքերը բաց, Իգային լսում էր, թե ինչպես է եղբայրը անկողնում շուռուժուռ գալիս և շարունակ այն ու վախ անում: Դրսում ձյուն էր, լուռություն. ցուրտ: Իսկ ներսում խաղաղություն չկար: Այդքան խոսք ու կրուցից հետո Իգային այնև չգիտեր գո՞հ է, որ տունը չի վաճառվել, թե՞ պժգոհ է, որ չի կատարվել Մարսըլենի ցանկությունը: Տատանվելով երկու հակասական զգացմունքների միջև, նա հայչում

էր վշտից՝ սվտիանք որոնում զիշերվա միջ: Նրա աչքերը լողում էին խավարում, ականջները լցվում էին խավարով, նա ջնջում, լիաթոք կռւ էր տալիս խավարը:

— Քնա՞ծ ես, Չայի՛,— հառաչեց Մարսըլենը:

— Աշխատում եմ քնել, բայց ապարդյուն:

— Ուզում եմ մի բան հարցնել քեզանից:

Մթոթյան մեջ Մարսըլենի ձայնը նման էր անքնությունից տառապող պատանու ձայնի: Նա երեսուն տարեկան էր, բայց կարծես քսան, տասնհինգ տարեկան լիներ: Լավ էր:

— Ասա,— շշնջաց Իվային:

— Ի՞նչ ես կարծում, լավ չէ՞ր լինի, եթե Սերվուզը սառցադաշտից խուսափեր և անցներ հարավային կողմով:

Իվային հենվեց արմունկներին:

— Այո, համոզված եմ: Ես երեկ չուպեցա ժուլեֆի մոտ սանել, բայց համոզված եմ: Միայն թե այնքան ծանրաբեռնված են եղել, որ չեն կարողացել այդ կողմն ընտրել:

— Իսկ ի՞նչ իմաստ ունեն Իվային փրկության սահնակներ, տաք վերմակներ և դեղորայք: Ի՞նչ կարիք կար, մանավանդ, երբ մարդ չի փրկվել, որ խնամես:

— Ինչպե՞ս կարելի է համոզված լինել, թե մարդ չի փրկվել: Սերվուզը ամեն միջոց ձեռք էր առել: Նա պարտավոր էր խոսք չկա:

— Ես բան չեմ ասում: Իսկ եթե հարավից գնար, կարո՞ղ էր երեկոյան վերադառնալ:

— Այո, կարող էր: Այդ ճանապարհը կրկնակի անգամ ավելի կարճ է, քան սառցադաշտը, իհարկե, եթե գնաս քիչ մարդկանցով և քիչ բեռով:

Մի հառաչանք արկվեց, և Մարսըլենի ձայնը դարձավ հենավոր ու խուլ:

— Դու լավ՞ գիտես հարավային կողմը:

— Կարծեմ մի ութ անգամ բարձրացել եմ այնտեղով:

— Դժվա՞ր է:

— Այո:

— Բայց հնարավո՞ր է:

— Անշուշտ:

— Նույնիսկ անձն եղանակին:

— Այո: Քամին քշել է լեռնանցքի ձյունը: Ժայռը պիտի ուղտակալին մատչելի լինի, թեև մի քիչ սառցակալած կլինի:

— Ուրեմն կարելի՞ է անցնել...

— Նայած: Բայց Սերվուզը շատ էր բեռնավորված:

— Ես Սերվուզի մասին չեմ խոսում:

— Հապա ո՞ւմ:

— Քո և իմ:

— Ինչո՞ւ ես ասում քո և իմ:

— Ես ուզում եմ, որ երկուսով բարձրանանք այնտեղ, Իվայի:

— Հիվանդ եմ չե՞ս:

— Մենք պիտի գնացած լինեինք, Իվայի:

— Ի՞նչ գործ ունենք: Ի՞նչ կա այնտեղ: Դիակներ, ջարդված փայտի կտորտանք, նամակներ: Շտապ չե... Գարնանը արշավախումբ կգնա, կբերի:

— Ասում են ինքնաթիռը ոսկի էր տանում:

— Ոսկի՞:

Այո, ոսկի էր տանում Անգլիա:

— Չի կարելի ամեն լսածի հավատալ:

— Եթե անգամ ոսկի չլինի, Իվայի, կարելի է փորձել:

Ուղևորներն անպայման փող կունենային: Ինքնաթիռով ճամփորդելու համար պետք է հարուստ լինել:

— Մեզ ինչ, եթե անգամ փող են ունեցել:

— Կարելի է վերցնել:

— Դիակների՞ց:

— Ավելի լավ է, քան եթե վերցնենք ողջերից:

— Ոչ, Մարսըլեն:

— Դիակները փողի կարիք չունեն: Ի՞նչ պիտի անեն, ինչի՞ վրա պիտի ծախսեն: Չունը թրջում, ոչնչացնում, փչացնում է նրանց դրամը: Ինչո՞ւ թողնենք կորչի այդ հարստությունը: Նույնիսկ եթե դա արտասահմանյան փող լինի, կարելի է փոխել, իսկ վարդերը...

— Զգիտեմ, Մարսըլեն: Թերևս դու իրավացի ես: Բայց դա անազնվություն է:

— Իսկ եթե Սերվուզը գրախներ այդ փողը, էլի անազնվություն՞ն կհամարեիր:

— Սերվոյը չէր գնում փող գրպանելու:

— Համենայն դեպս եթէ մենք չանենք, մեկ ուրիշը կանի:

— Դա իրենց գործն է: Դիակը անաբաշտական է և նրան կարելի է ձեռք տալ միայն լողացնելիս և հողին հանձնելիս, ահա իմ կարծիքը:

— Դու սխալ ես մտածում: Մեզ ոչ ոք չի մեղադրի, որովհետև այդ փողը ոչ ոքի չի պատկանում...

— Այդ փողին դիպչել չի կարելի:

— Մի համատիր, Չայի: Լսիր, լավ լսիր... Եթէ փող ձեռք բերենք, մենք այլևս չենք վաճառի տունը: Պատկերացնո՞ւմ ես: Տունը: Այո: Տունը կմնա մեզ:

— Կմնա մե՞զ...

— Երգվում եմ... Չենք վաճառի տունը: Փգադուին չեմ միանա այլևս: Քաղաքում խանութ կգնեմ: Մի գեղեցիկ խանութ: Ամեն առավոտ կգնամ այնտեղ: Եթէ ուզենաս, դու էլ կգաս հետս, եթէ ոչ, կմնաս այստեղ, գառների հետ: Բոլոր երեկոները կանցկացնենք միասին: Դու ասում էիր, որ մեր հայրը ուզեցել է մեծացնել գոմը, բայց չի կարողացել: Մենք կանենք: Կկատարենք հայրիկի ցանկությունը: Կմեծացնենք գոմը, որ դու բազմացնես գառներդ:

— Ի՞նչ գառ:

— Կառնես փողի մնացորդով:

— Ես կկարողանա՞մ գառ առնել:

— Ինչքան ուզենաս: Տասնհինգի փոխարեն դա կունենաս հիսուն, հարյուր հատ...

— Հարյուր գառ...

— Թերևս ավելին: Մի իսկական հոտ: Դու սլաակերացնո՞ւմ ես քեզ՝ մեծ հատի գլխին:

Իզային ծկլթում էր հաճույքից:

— Մի քանի հատ էլ խոյ կգնեմ:

— Այո:

— Լավ կլինի...

— Հրաշալի կլինի... Դու կքայլես հովտում, և քո ետևից մի հարյուրակ ոչխար տրտինգ կտա. կմայի... Էլ այդպիսի առիթ չի լինի... Պետք է օգտվել:

Լուսթյուն տիրեց:

— Դեհ, ի՞նչ որոշեցիր, Իզայի:

— Կուպենայի, բայց չեմ կարող... Ես չեմ կարող լնալ քարձրանալ... Այլևս չունեմ առաջվա ձեռքերն ու գլուխը...

— Այդ քո կարծիքն է,— գոչեց Մարսըլենը,— ես ճիշտ հակառակ կարծիքի եմ: Քեզ շփոթեցնում է պատահարի հիշողությունը: Մոռացիր, և դու կապկի նման ձկուն կլինես:

— Հեշտ չէ մոռանալը, Մարսըլեն: Այդ չի ջնջվում:

— Ուրիշ շատ ուղեկցորդներ էլ են ընկել: Բայց ապաքինվել են և նորից շարունակել իրենց գործը:

— Իմն ուրիշ է... Իմ հաճախորդներից մեռնողներ եղան... Իմ գլուխը վիրահատեցին...

— Եթէ քեզ վրա վստահ չլինեի, չէի խնդրի, որ ինձ ուղեկցես: Ես գիտեմ շատ ուղեկցորդների, որոնք սիրով կհամաձայնեն: Բայց ես քեզ եմ ընտրում, որովհետև դու չավագույնն ես:

— Սերվոյից հետո:

— Սերվոյից հետո, եթէ կուպես: Քեզ հետ, վստահ եմ, որ ոչինչ չի պատահի: Դու ուժեղ ես: Դու գիտես ամեն մի դար ու փոս: Դու կարող ես մագլցել ուղղաբերձ, ողորկ պատի վրայով, կարծես մատներիդ տակ սոսինձ լինի...

— Խոսիր, Մարսըլեն, ես հաճույք եմ ստանում:

— Եվ հետո, դու իմ եղբայրն ես: Մենք առաջվա պես կընկերանանք: Հիշո՞ւմ ես այն լավ ժամանակները, Չայի:

— Այո:

— Դու կքայլես առջևից: Եվ ինչ կարգադրես, կանեմ: Դու կարող ես գոռալ վրաս, իսկ ես կասեմ, ջնորհակալ եմ: Եվ մենք կանցնենք, ինչ գնով էլ լինի, կանցնենք...

— Լամպը վառիր, Մարսըլեն:

— Կգա՞ն:

— Չգիտեմ: Լավ չեմ պզում:

— Ինչո՞ւ:

— Դողում եմ: Այն փողը, վստահ ես, որ ոչ ոքի չի պատկանում:

— Էլի: Ես քեզ բացատրեցի...

— Այո, այո, բայց վախենում եմ:



— Ինչի՞ց:

— Որ չկարողանամ: Վառի՞ր լամպը: Տառը տարի չեմ բարձրացել: Ծերացել եմ: Ժանգոտվել: Եվ հետո, լեռներն այլևս չեն սիրում ինձ: Եվ գուցե վաղը եղանակը հարմար չլինի: Վառի՞ր լամպը...

— Եթե մերժես, կգնամ մենակ:

— Դու չես հասկանում, թե ինչ ես ասում:

— Ես ասում եմ այն, ինչ պիտի անեմ: Եվ առածս կանեմ: Կգնամ մենակ:

— Աստված մի արացե: Դու մենակ գնալ չես կարող, Մարսըլեն: Դու չգիտես ճամփան:

— Մի կերպ կգտնեմ:

— Մենակ անհնարին է, Մարսըլեն: Դեռ չբարձրացած, կրնկնես, ջարդուփշուր կլինես:

— Միևնույն է: Եթե պիտի անփող ապրեմ, ավելի լավ է մեռնեմ: Կամ կմեռնեմ, կամ կհաջողեցնեմ: Դու մնա, ես կգնամ մենակ: Վաղը, դեռ լույսը չբացված...

— Չեմ թողնի:

— Այդ դեպքում կգաս հետո: Միասին կբարձրանանք միասին էլ կրնկնենք: Այդ է եղբայրների պայմանը, չէ՞:

— Այո, Մարսըլեն, վառի՞ր լամպը:

— Կգա՞ս:

— Կգամ:

— Դուրս կգանք գիշերը: Ոչ ոք չպիտի իմանա:

— Այո, Մարսըլեն, վառի՞ր...

Մարսըլենը վառեց լամպը: Եվ նրանք լույսով նայեցին միմյանց՝ պարմացած, անհանգիստ, ասես առաջին անգամ էին տեսնում իրար:

5

Իգային շրջվեց կողքի և դժվարությամբ բացեց կոպերը: Մի ձեռք ցնցում էր ուսը: Մի ձայն ասում էր.

— Վեր կաց, ժամը երեքն է:

Մարսըլենը կռացել էր վրան, ինչպես ծառը՝ դեռակին:

— Վեր կաց:

Նավթի լամպը լուսավորում էր քնատ սենյակը: Այակի-

ներին կպել էր գիշերը՝ տափակ ու սև: Չարթուցիչը կացահարում էր ժամանակը: Իգային բռունցքներով տրորեց երեսը, հորանջեց ու նստեց բարձին: Քունը գլխին էր: Նա հարցրեց.

— Ի՞նչ կա:

— Ժամանակն է դուրս գալու:

Նա մտացել էր գիշերվա խոսակցությունը: Հոգնած ուղե-  
ող պատրաստվում էր սովորական առօրյային:

— Դու արդեն մոռացե՞լ ես,— փնթփնթաց Մարսըլենը:—

Կատակ մի անի, Չայի:

— Այո, հիշեցի,— արագ վրա բերեց Իգային:

— Կատակ մի անի, Չայի, դու խոստացել ես:

— Այո, խոստացել եմ:

— Ի՞նչ ես խոստացել:

Իգային տանջահար քրքրում էր հիշողությունը: Թուլությունից, մեղավորության պագցումից նա պատրաստ էր լաց լինելու:

— Չգիտե՞ս, չգիտե՞ս, ինչ ես խոստացել,— գոռաց Մարսըլենը:

— Սպասիր,— ջնջաց Իգային:— Թող հիշեմ...

Նա կնճեց ձակատը: Ծանր էր ջնջում: Հանկարծ մանկական ժպիտ փայլեց դեմքին:

— Հիշեցի, Մարսըլեն: Խոստացել եմ քեզ հետ բարձրանալ հարավային կողմով:

— Փառք ասածո, սթաիվեցիր,— ասաց Մարսըլենը:— Վեր կաց, վեր...

— Տեսա՞ր, ոնց հիշեցի,— պարծեցավ Իգային:

Նրանք արագ ու լուռ հագնվեցին: Հագան հաստ գուլպաներ, լեռնագնացի կոշիկներ, բրոյա բաձկուններ, տաք վզնոց գցեցին, թասակ և ականջափոր փափախ դրեցին: Գիշերը, քնելուց առաջ նրանք այդ ամենը դրել էին աթոռների, սառուզի էին թոկերի ամբողջունը, բահ ու բրիչները, կեռերն ու գալափանները: Ուսապարկերում դրել էին տաք փոխնորդ և ստեղիք՝ հաճարի հաց, խոպաճարպ ու պանիր, տափաշշով զինի և օղի: Նրանք ոտքի վրա մի բան կերան: Իրենց գիշերային պատրաստությունները Իգայուն մի քանի տարով էս էին տարել: Նրան թվում էր, թե կյանքը վերակալում է այն

կետից, որտեղից ընդհատվել էր, պատահարի պատճառով և շփոթվում էր:

Ուտելուց հետո նա մտավ գոմ՝ ոչխարներին խոտ գցելու և այծերին կթելու: Անասունները վարմացել էին, որ այդպես տարածան անհանգստացնում են իրենց: Քնից թմրած նրանք բարակ ձայնով մայում էին: Հետո Իգային լսեց, որ նրանք չոր խոտ են ուտում: Մի հանգստաբեր, գաղջ հոտ էր բարձրանում ոչխարների տաքուկ մարմիններից: Խավարում տարտամ ծիփում էին նրանց բրդոտ կողերը, ինչպես փփին կապված մակուկներ, որ թեթևակի օրորվում են ալիքներից: Իգային, գառների մեջ պայպած, փխստանքով հիշում էր, որ ամբողջ օրը բաժանվելու է նրանցից:

— Երեկոյան կվերադառնամ, Մունեթ... Անպայման: Ասա, ասա մյուսներին...

Մարսըլենը հրեց գոմի դուռը:

— Շուտ արա, ծանանակ չունենք: Պետք է առավոտ վաղ հասնենք:

Իգային լիքը դուլը խոհանոց տարավ, մատների ծայրով վերցրեց կաթի երեսին լողացող մալը, պարկը ուտովը գցեց և ձեռքի լապտերի մեջ մոմ վառեց, որ լույս աներ ոտքի տակ:

— Ուրեմն հաստատ որոշել ես առանց դահուկի՞՝ գևալ,— հարցրեց Մարսըլենը:

— Այո,— ասաց Իգային: — Չյուն քիչ կա նախապետներում:

Իսկ խարակները մտնելիս դահուկները կկաշկանդեն մեր շարժումները:

— Կարելի էր թողնել հարթակին և վերադարձին...

— Ի՞նչ միտք ունի: Ավելի լավ է խզան վերցնել:

— Հիմա ով է խզան գործածում:

— Չուր ես վիճում, Մարսըլեն: Դահուկը երիտասարդի բան է: Դու իմ սովորություններին մի խառնվի:

— Լավ,— ասաց Մարսըլենը: Թող քո ասածը լինի: Փչի՛ր լամպը, Ջայի՛:

Իգային փչեց լամպը, դուռը բացեց և, հետևելով եղբորը, սուզվեց գիշերային ցրտության մեջ: Երկինքը ցածր էր: Ոչ լուսաշերտ կար, ոչ՝ աստղ: Փոփոխական քամին ադամանդյա փողի էր ցանում վառիվեր լանջերին: Իգային հոտոտեց օդը, վննեց երկինքը:

— Լավ չէ,— ասաց:— Հյուսիսային քամի և բարձրանալու:

Գյուղը մնաց ետևում: Ամեն մի քայլ նրանց հեռացնում էր մարդկանցից: Իգային գնում էր առջևից՝ լապտերը ձեռքին, անշուսայ ու կանոնավոր քայլերով: Թիկունքում լսվում էին Մարսըլենի շնչառությունը և նրա ոտնամանների ճռճուցը: ձյան վրա: Մոմի երերուն լույսի տակ հայտնվեցին ձերմակ ու անշարժ ալիքներ, մի քար՝ սկանջին թեքված բամբակյա գլխարկով և բուրեղյա մացառներ: Ավելի վեր, աչ կողմում, սպիտակ դարավանդից սև հեղեղ էր իջնում, ծածկելով փայտե կամրջակը: Օդը զով էր, թարմ և հագեցած էր խոնավ ժայռերի բուրմունքով: Այդ թանձր մթության մեջ Իգայու ուշադրությունը շարունակ ձյան ու քամու ուղղության վրա էր: Միօրինակ ընթացքը տաքացնում էր նրան և շեղում միտքը: Նրա գլխում տիրող լուրջությունը նման էր թնդանոթի համապարկին հաջուրդող լուրջանը: Ուտերը կորանում էին, ծնկները ծալվում: Նա հաճույք էր գգում, որ իր մարմինը վերստացել է նավակին համաշափությունը: Տեղանցի ամեն մի խոչ ու խուժ ծանոթ էր նրան: Գիշերվա և քամու կատարած վերափոխությունը չէր ապակողմնորոշում նրան: Մոտ երկու ժամ նա քայլեց այդպես՝ անշուսայ և առանց հոգնելու: Հետո գետինն աստիճանաբար բարձրացավ, թեքություն վերցրեց և պատի պես կանգնեց, ասես եակից ինչ-որ ձևեր էին պահում: Երկնքի թեթևակի սևության տակ հայտնվեց ավելի թունդ սևություն, կարծես տակառի խորքում նստվածք լիներ, անտառն էր: Նրանք մտան կուենիների անշարժ պունաշարերի մեջ: Խավարը քայլ առ քայլ նահանջում էր լապտերի առջև: Այդ թույլ լույսը մի անցք էր փորում, արահետի երկու կողմերում ի հայտ բերելով կարմիր և ուղիղ կատարները, որոնք ասես կտրվել էին մարդահասակ: Արմատների ուժեղ մկանունքը ձեռքել էր սպիտակ ճանապարհը: Ճյուղերը ձթթում էին ինչ-որ անտես կենդանու թաթերի տակ: Սուվորների լայն շրջանակներ էին սլտտվում ծառերի շուրջը և հովիտի նման փակվում նրանց ետևում: Երբեմն վերևից մի պտղունց ձևավորի էր սլապղալով թափվում Իգայու դեմքին: Եվ նա ազակորեն շնչում էր այդ անհուն թարմությունը: Քիչ հետո անհրաժեշտ եղավ փոխելու մոմը: Մարսըլենը կորցնում էր համբերությունը:

— Ե՛րևտ արա: Քնած հո չե՛ս... Ե՛րևտ, շո՛ւտ:

Նրանք շարունակեցին ճամփան: Նոր մոմն ավելի թույլ էր լուսավորում, քան նախորդը: Սովերի կամախ էր իջել կարճ կտրված կունկների վրա: Իգային ստեպ-ստեպ թարթում էր աչքերը: Հոգնել էր այս պզտու կանգնած ուրվականների անհատնում շարքերին նայելուց:

— Ես կարծում էի կարճ է այս ճամփան:

— Միշտ այդպես են կարծում մեկներու պահին:

— Դու վատա՛հ ես, որ ժամը 8-ին կհասնենք հարթակ:

— Վստահ եմ:

— Ինձ թվում է սխալվում ես:

— Ինչու պետք է սխալվեմ: Ուրիշ հարցերում կարող է սխալվեմ, բայց այս հարցում ոչ: Չեմ սխալվում... հարթակում կհանգստանանք, մի պատահ հաց կուտենք: Քաղցած չե՛ս:

— Ոչ, — պատասխանեց Մարսըները:

— Համենայն դեպս պետք է մի կտոր քան ուտել:

Պաղ քառու հոսանք անցավ Իգայու թիկունքով: Անտառը վերջանում էր: Եարժուն մի դավլություն չափում էր ծառերի ուրվածները: Ճանապարհը լայնացավ, շնչվեց, դեմ առաջ մի ձևաթմբի: Թմբից այն կողմ, խավարը լուծվում էր մշուշի մեջ: Գիջերվա մեջ օղեղեն շղարջներ էին վեհորեն սահում, խաչաձևվում, անջատվում, պատառոտվում անաղմուկ:

— Առայժմ ոչինչ չի երևում, — ասաց Մարսըները:

— Այնտեղ է, — ասաց Իգային: — Լավ նայիր:

Հեռվում նշմարվում էր մի տարտամ պանզված. կարծես քարացած մշուշ լիներ հորիզոնի վրա:

— Ժայռալատը, — ասաց նա:

Նրա աչքերը դուրս թռան բներից: Անգիտակից վիճակից սթափված լուսնոտի պես առջահար շուրջն էր դիտում:

— Ինչ պատահեց քեզ, — պարագավ Մարսըները:

— Տարօրինակ պացոդություն ունեմ:

— Եատ մի խոսիր, առաջ ընկիր:

— Լավ, Մարսըներ, լավ:

Իգային հառակներավում էր առանց զանգատվելու: Վայրկյան առ վայրկյան նա ավելի հստակ էր պատկերացնում իր ձեռնարկած գործի հանդգնությունը: Նա փշաքաղվում էր այն

փորձության հեռանկարից, որին համաձայնել էր: Մագլցել այս գլխատույտ առաջացնող սառցակալած դիք ժայռալատը: Եվ վերև հասնելուն պես վերցնել մտեղների վողը... «Ես պետք է մերժեի: Դեռևս առավոտյան կարող էի հակառակվել, բայց դատարկագլուխ եմ: Ուղեքս գնում էին ինքնաբերաբար: Գլուխս չէր աշխատում...»:

— Առաջ, առաջ, հաստագլուխ:

Մարսըները բռունցքով խփեց եղբոր մեջքին:

— Թերևս վերադառնալիք, հր՞. — մրմնջաց Իգային. —

դեռ ուշ չէ:

— Վերադարձիր, եթե ուզում ես: Ես կգնամ մենակ:

— Մենա՞կ: Ես քեզ ինչպես մենակ թողնեմ:

— Պիտի շարժվե՛ս, թե ոչ:

Իգային հառաչեց և կոացած շարունակեց ճամփան: Փողի սերը չէր նրան մղում այդ քաղին, այլ եղբայրական սերը: Տունը վաճառելու հարցում Մարսըները արդեն հուսախաբվել էր մեկ անգամ: Իգային չէր ուզում, որ նա երկրորդ անգամ հուսախաբ լինի և հրաժարվի ներկայացված այս առաթից ևս: Կան բաներ, որ եղբայրները չեն կարող մերժել միմյանց: Ինքն իրեն քաջակերելու համար, Իգային մտածեց ապագայի մասին, եթե արշավը արդյունավետ լինի. «Վերանորոգված գում... բազմացած հուս...», բայց ոչ մի կերպ չէին ցրվում նրա հոգու տխրությունն ու երկուզը:

Արևելքում երկինքը մոխրագույն էր դառնում: Դեռ լույսը չէր բացվել, բայց գիջերվա կտավի մեջ թույլ մաշվածք էր նկատվում: Քամու մի ծվեն ժապավենի պես փողփողաց Իգայու շրթունքներին: Հալածված ամպերի ետևում այժմ գուշակվում էր սարահարթի ալիքավոր մակերեսը, որ թեքությամբ բարձրանում էր դեպի ժայռերի առաջին փուլուկները: Լեռան հիմքը գետնից բաժանված էր գոլորշու ապարոշով: Վերևում, ասես սև ստվարաթղթի կտրվածքի միջով, կողք-կողքի գծազրվում էին զագաթները: Իգային կանգ առավ: Մինչև արունքները խրված էր ձյան մեջ:

— Պետք է խլանները հագնել, — ասաց նա:

Նրանք խլաններն ամրացրին ոտքերին և շարունակեցին ճամփան՝ ձեռքերն անցկացրած ուղեպարկի կապերի մեջ: Ցան-

ցալատ, ձվաձև խզանները ամեն քայլափոխի շաքարափոշու-  
անպ էին բարձրացնում: Երկու տղամարդիկ դժվարությամբ, քայլ  
առ քայլ առաջանում էին դեպի անորոշ ուրվագծերով աշխարհը:  
Ժամանակը կանգ էր առել: Ամենուրեք կորչում էին նշանա-  
կետերը:

— Դու վատա՞հ ես, որ ճիշտ ենք գնում, Չայի:

— Այո, Մարսըլեն:

Իգային շացել էր համատարած ճերմակությամբ ու մա-  
ռախուղով և ցանկանում էր, որ դրանք անվերջ լինեն: Ոչ մի  
վատ բան չի պատահի իրեն, քանի դեռ ձյան միջով կքայլի.  
այսպես վատահ: Այս լուռ աշխարհում ինքը կարծես տանը լի-  
նի: Նրա իշխանության ասիմանը հեռվում էր, գրանիտյա  
առաջին շերտերի մոտ:

— Փչիր լսպտերը,— ասաց Մարսըլենը,— այլևս պետք չի:

Իգային մեքենայաբար կանգ առավ, հանգցրեց մոմը, լապ-  
տերը ծպեց, զցեց ուղեպարկի գրպաններից մեկը:

— Քայլի՛ր, քայլի՛ր, ինչ ես ստեղծ:

Լուսաբացը մոտեցավ: Լեռը մոտեցավ: Քամի պացավ  
մշուշի միջով: Քայլողները կապույտ սովերներ գծեցին ձյան  
վրա: Ասես ինչ-որ լուծույթ հոսեց և մաքրեց երկնքի մուրը:  
Իգային խոնարհեց գլուխը: Նա չէր ուզում տեսնել, թե ինչ է  
կատարվում իր առջևում: Եվս մեկ քայլ. երկու քայլ, երեք քայլ:

— Հասնում ենք,— ասաց Մարսըլենը:

Իգային բարձրացրեց աչքերը. տեսարանը քամու պես  
խփվեց երեսին: Մի վիթխարի պարիսպ էր բարձրանում  
սպիտակ գետնի վրա:

Սրածայր գագաթները շեղակի սովերներից կտրատված,  
սառցափոծ, քանդակուն, ալակիացած, երկնքի մեջ էին մխր-  
ճել իրենց մարդակործան ճարտարապետությունը: Չառփկոյ  
խորշերի ձևակույտերը պսպղում էին հախճապակու բեկորների  
պես: Ցանցկեն ժանյակ էր կախված մի երուտի կողից, որի  
վրա սուր-սուր ատամներ էին շարված:

Չայի կողմում, ողորկ ու մռայլ ժայռապատի վերևում մի  
սառցե սաղավարտ ցիրուցան էր անում արեգակի շողերը:  
Այդտեղ էր պետք մագլցել: Երկնքում վարդագույն սպունգներ  
էին լողում դեպի վրոուխայա լճակը, որ չքացավ շուտով՝ նրանց

լույս ընկող վանգվածից ցամաքած: Գորշուց կապված ուրիշ  
կրեշներ՝ նետաձև լողաթևերով, շտապում էին ծածկելու լույսի  
վերջին շառավիղները: Մթնոլորտի քամիները գագաթների  
շուրջն էին հավաքում ինչ-որ շաղախ, որի ծորուն թելիկները  
կախվում էին պատմեջի ամենաչնչին քերծվածքից անգամ:  
Իգային սևեռուն դիտում էր այդ լուռ մարտը, որտեղ իրենց  
ուժերն էին չափում օդն ու քարը: Իր վատնած ուժի և դիտած տե-  
տարանի միջև խորհրդավոր հավասարակշռություն էր հաստատ-  
վում: Թերևս այդ ամենը տեղի չունենար առանց իրեն: Արե-  
գակը ծագում էր սուկ իր համար և սուկ իր համար էին  
լուռներն քնդունում արշալույսի գույները: Ինչ-որ ձևով նա  
պատասխանատու էր այդ շացուցիչ և անբարիշտ արարման  
համար: Նա հանեց ձեռնոցները և խաչակնքեց՝ հայացքը  
հառած երկինքը թրատող քարեղեն շեղբերին:

— Որտեղի՞ց ենք անցնելու,— հարցրեց Մարսըլենը:

— Այնտեղից,— ասաց Իգային և գլխով ցույց տվեց սալա-  
քարերի վիթխարի վանգվածը, որ ելնում էր ձյունոտ գագաթն  
ի վեր:

Այնտեղն էր նա աջ ձեռքի ցուցամատով ձախ ձեռքի  
ստիկն նկարեց իրենց երթուղին: Ուղիղ կտրված և սևացած  
եղունգը սահում էր ակոսված մաշկի վրայով:

— Հարթակը վատն է... Պետք է միջոց գտնել... Հետո  
կթեքվենք ձախ... Տասը մետր կանցնենք ծխանի անցքով... Ես  
սեպեր կխփեմ, որպեսզի անցնենք առկախ ժայռը:— Մարսըլենը  
ժայռին չէր նայում: Նայում էր եղբոր ափին: Լեռը Իգայու  
ձեռքում էր իր բոլոր ձեղքերով, տափարակներով և դարուփո-  
սերով:

— Ե՞րբ կհասնենք:

— Եթե ամեն ինչ հաջող լինի, չորս-հինգ ժամից,— ասաց  
Իգային:

Եվ փակեց ափը:

Եվ անդունդ բացվեց սրտում: Նրա ուժերը հոսում էին  
տարածության մեջ:

«Օգնական եղիր, տեր աստված: Օգնական եղիր մեզ»:

Նրանք նորից ճամփա ընկան, կողք-կողքի:

Լեռները թոթափում էին իրենց սովերը:

Չյունտո կածանը շեղակի կտրում էր ժայռի սյառնեջը: Ուղքերն ամուր դրած նեղիկ դարավանդին, ուսը հալած ժայռին, թևերը՝ կախ, Իգային շունչը տեղն էր բերում:

— Կարո՞ղ եմ բարձրանալ, — կանչեց Մարսըլենը:

Իգային առանց նայելու վիհին, որտեղից գալիս էր եղբոր ձայնը, պատասխանեց.

— Սպասիր... պատրաստվում եմ...

Մինչև այստեղ ամեն ինչ բարեհաջող էր անցել: Խորխորատը անցնելիս և նախալեռները մագլցելիս, Իգային ոչ մի դժվարություն չէր կրել: Միմյանց հաջորդող հենման կետերը սանդղմատերի պես նրան ապահով բերել հասցրել էին մինչև այս հարթակը, որի ամենաչնչին մանրամասնը ծանոթ էր իրեն: Իսկական մարտը սկսվելու էր հիմա: Իգային անձկությամբ դիտում էր բարձր, գրեթե ուղղահայաց սալաքարը, որի խոր-դուբորդությունները խույս էին տալիս կապույտ սառցաշերտի տակ: Կես առ կես նա մտովի որոնում էր իր երթուղին: Ամռանը լավ մագլցողն անշուշտ կարող էր գլուխ բերել անցումը: Բայց այս եղանակին սառցակալած սալաքարը, որը հենված էր մի խոշոր ժայռացցվածքի, բոլորովին հարմար չէր ելնելու համար: Իգային բնավդաբար հայացքը թեքեց ներքև: Իր ոտնամանների չափսի հարթակը ուղիղ հատվում էր մի հարյուր մետր ներքևում: Նրա հայացքը սուզվեց խորխորատի բաց երախի մեջ: Մի պահ պատկերացրեց մի սխալ քայլ և իր ճոճվող մարմինը՝ դատարկության մեջ: Ուժեղ հարվածը կտորել է ողնաշարը, մի ուրիշ հարված ձեռքել է գանգը: Ժայռի սուր-սուր քարերը ծեծված մսի մի փերթ են ուղարկում ետ մինչև վերջին կանգառը՝ խոռոչի խորքը: Երևակայության անօրինակ ուժով Իգային միաժամանակ իրեն տեսնում էր և այստեղ կանգնած և լեռան ստորոտին՝ արյունաշաղախ, ջախջախված:

— Պատրա՞սա ես, բարձրանա՞մ:

Մարսըլենի ձայնն էր: Պետք էր շարժվել: Իգային պարանը գցեց ձախ անութի տակով և աջ ուսով, պրկեց մեջքի մկան-ները և ասաց.

— Բարձրացի՛ր:

Նա դանդաղ քաշում էր պարանը, եղբորը օգնելով բարձրա-նայու: Արդեն լավում էր Մարսըլենի ծանր շնչատուփուները, նրա կոշիկների ձկլոցը գրանիտի վրա: Շարժվում էր պարանը, ծանրությունը մոտենում էր մակերևույթին: Կույր մատները շոջափեցին կածանի ելլը: Հայտնվեց Մարսըլենի լարումից կարմրատակած դեմքը, ապա շրջվեց, անհայտացավ, որովհե-տև փոխել էր ուղքի տեղը:

— Ինչպե՞ս ես, — հարցրեց Իգային:

Դատարկությունից դարձյալ երևաց Մարսըլենի գլուխը, ասպա՝ ուսերը, ծածկելով հորիպոնը: Քիչ հետո նա կանգնած էր հարթակին՝ հնասպառ, բերանը բաց, աչքերը եղյամուտ:

— Մինչև այստեղ դեռ ոչինչ:

— Այո, — ասաց Իգային:

— Որտեղի՞ց ես շարունակելու:

Իգային ձեռքը մեկնեց սալաքարի կողմը:

— Այստեղից:

Մարսըլենն իր հերթին վննեց անցումը: Անհանգստություն՝ շողաց աչքերում:

— Դու համոզվա՞ծ ես, որ ուրիշ ճանապարհ չկա:

— Ուրիշ չկա, — ասաց Իգային:

— Լրիվ ողորկ է:

— Գիտեմ:

— Կկարողանա՞ս պահել:

Իգային առանց պատասխան տալու օրորեց գլուխը: Նա խոշոր օղակներով փաթաթում էր պարանը, որպեսպի հետո հեշտ բացվի: Այնուհետև ստուգեց փոկի հանգույցները, պարանը փաթաթեց ժայռեյուստի շուրջը, գոտու արանքն անց-կացրեց մի քանի կեռիկ և բրիչը. ճշգրտորեն կատարված նրա ամեն մի շարժումը հետաձգում էր փորձության պահը:

— Եթե վատահ ես, որ կարող ես դիմանալ, փորձիր, — ասաց Մարսըլենը:

— Ինձ մի շտապեցրու, — պատասխանեց Իգային:

Առաջին հենակետին հասնելու համար հարկավոր էր կածանի երկայնքով անցնել մինչև այն մասը, որտեղ կածանը կորչում էր ժայռի գանգվածի մեջ: Պետք էր հինգ քայլ անել անդունդը ելներող ժայռապռունկով: Երեսը դատարկությանը

դարձրած, Իգային կարկամել էր երկյուղից: Պատը կարծես հիմքից խախտվել, ճոճվում էր թիկունքում: Պատի ակոսները կարծես թրթռում էին, երկտակվում, թեքվում, կանչում՝ հետևիլու իրեն: Ինչ-որ անտեսանելի թեղեր նրա ծնկները քաշում էին ներքև: Ցուրտը, ձյունը, լուսությունը նրա անկումն էին զուշակում: Մարսըննը աչքերով հետևում էր նրան: Հանկարծ նա ասաց.

— Գուցե անհնարին է, Չայի:

— Ոչ, անհնարին չէ:

— Ինչ է, մի երեք մետրի համար հո չե՞նք շախշախվելու:

Հստ՛մ ես:

— Լսում եմ:

— Ի՞նչ ես որոշում:

— Ես պետք է փորձեմ, — շնչաց Իգային:

Մարսըննը թոթվեց ուսերը.

— Տղայություն մի անի, խնդրում եմ:

— Տղայություն չեմ անում:

— Եթե անհնարին եղավ, կիջնե՞ս...

— Կիջնեմ: Արա պնայես, ինչպես ցույց եմ տվել:

Նա շրջվեց դեպի պատնեջը և երկչուտ ճիգով տեղափոխեց մի ոտքը, ապա՝ մյուսը: Նա շուրջը չէր նայում: Եվ ինքն իրեն արգելում էր մտածել անդունդի մասին: Այնուամենայնիվ, ամբողջ եռությամբ պզում էր անդունդի գլխապտույտ ձգողականությունը:

— Ստացվո՛ւմ է, — հարցրեց Մարսըննը:

— Օհ, այո, — պատասխանեց Իգային, — հիմա ավելի չավ է...

Թուլությունը կաշկանդում էր մարմինը: Առանց երկար-բարակ մտածելու, նա առաջ զցեց աչ ոտքը: Ռոքը դիպավ ինչ-որ անհարթության, սալաքսեց և թեքությամբ կառչեց մի ուրիշ, ավելի ընդգծված ելուստի: Մի մկան էր դողում բումբի՝ մեջ: Թուքը կուլ տվեց: Այժմ ձախ ձեռքը սահում էր սառցակալած պատնեջի վրայով, շոշափում էր, շոյում, ասես փոխարենը նրանից խնդրելով մի հնարավոր ձեղք, ապա մեկ ուրիշը՝ այ ձեռքի համար: Փակված էին հենակետերը: Հոգնածություն: Նա թևը թողեց, խփեց ազդեցիկ, որպեսզի հանգստացնի:

— Ինչպե՞ս է. — հարցրեց Մարսըննը:

— Ոչինչ... կան լավ մասեր... Բայց պետք է հենակետեր քանալ:

Նա բրիչով խփեց սառույցի շերտին, որ կեղևի ժայռ: Շատ կուպենար փոխել փորվածքները, բայց իր դիրքն այնպիսին էր, որ կարող էր խփել միայն ուղիղ գեպի վեր և չէր կայող թեքել հարվածների ուղղությունը: Պատի մեջ բացվեցին երեք բարակ շղեր: Երկրորդ անգամ բարձրացրեց մի ձեռքը, մատները գրեց փոսիկի մեջ և թեթևակի վեր ձգվեց: Պահում էր: Ստուգեց մյուսը: Նույնպես պահում էր: Այնուհետև պոռչոյախով բարձրացրեց ձախ ոտքը և մի ակնթարթ դույզ ձեռքերով և աչ ոտքով մնաց կախված, թիկունքը՝ անդրանդի կողմը: Վերջապես, քերծելով սալաքարը, ձախ ոտքը մտավ մի փոքրիկ ձեղք: Իգայու մարմինը խաչվել էր լեռանը: Դեմքը ճապաղել էր գրանիտյա պատին, որ դարերով հղկել էին քամին, ձյունն ու արևը: Նրա աչքերի ներքո փոփած էր անհարթ, ապակյա մի աշխարհ՝ սաես ռեդեֆ մի քարտեպ՝ թխավուն երակներով ակոսված և եղյամով աստղապարթված: Նա բերանով կուլ էր տալիս քարի տառը շունչը: Մի երկար պահ մնաց այդպես, հրձվանքից համրացած, որ իր ողջ ծանրությունը սուսնձվել է ժայռին. «Նա ջրնկա: Պինդ սահեցի առաջվա նման...»: Տարտում հույսը ուժ էր ներարկում նրա լայնորեն տարածված անյուսմների մեջ: Ռոքերով ստաշ հրելով և ձեռքերով քաշելով իրեն, նա վեր բարձրացավ, որսնելով ուրիշ հենակետեր: Հրաշք: Դեռ նոր էր պատին մակնել ձեռքը, որ ես երամյրեց ցանկափ հենակետերը: Սառույցը շերտատելով Իգային պոկում էր գորշ-կանաչավուն բեկորներ: Չկան թիփուկներ էին թռչկոտում շուրջը: Մի ձեղք բացեց, ապա՝ ուրիշը: Պարանը կանոնավոր քանվում էր: Հանդարտվում էր Իգայու շնչատությունը: Արյունը համաչափ շրջան էր կատարում: Նա հագնում էր թաթայունները, հանում, նորից հագնում և դժվար անցումներում նորից հանում: Թաթայանով ձեռքերը վատսեղի չէին: Իսկ երբ բաց էին, արագ սառչում էին և անզգայանում: Չնայած ցրտին ու հոգևածությանը, նա շարունակում էր մանրիկ շարժումներով, պոռչ ու հուշիկ մագլցել վեր:

— Ինչպե՞ս է՝ վերևում,— կանչեց Մարտընը:

— Համարյա թե լավ,— ասաց Իվային:

Խռպոտ էր ձայնը: Նա գտի էր: Գլխավերևում մի ժայռաբեկոր էր ցցված: Դրանից հետո սքողված էր ճամփան: Գետնին պիտի որ մնացած լիներ մի երեք մետր պարան: Չախ ձեռքը ամուր ձուլվել էր մի խոշոր ելուտի: Չույզ ոտքերը դրված էին մոտ-մոտ տեղադրված հենակետերին: «Կլինի... Պիտի որ լինի...»: Իվային կուրծքը հեռացրեց պատնեջից, կորացրեց մեջքը, ետ հրեց իրեն, ասես ձորն էր ընկնելու: Միտքը հանգիստ էր: Գլխապտույտ չուներ: Նա բացեց աջ ձեռքը, մեկնեց մինչև ցցվածքի ելուրը: Շատ էր բարձր: Ձեռքը հապճեպ վերադարձավ իր ելման կետը:

— Ի՞նչ կղավ,— բացականչեց Մարտընը:

— Ոչինչ... մի անհակգատանա...



Իվային բարձրանալով թաթերի ծայրին, կրկնեց գործողությունը: Այս անգամ մատները հասան ցցվածքի պտունկին, ճանկոեցին սպակիացած շերտը, փրաքար գալարվեցին սառցե խոռչներում: Չախ ձեռքն էլ իր հերթին ցատկեց և տեղ գրավեց աջի կողքին: Քարի սառնությունն ավերով թափանցում, անցնում էր թևերի միջով, բռնում ուները: Կարծես ստվերի և մահվան սարսուռ էր անցնում երակներով: Մարմինը դավաճանում էր կյանքի գաղափարին և ծառայում էր մեռած նյութին: Աջ ձեռքը թափով մոտեցրեց դեմքին: Մատները հրաժարվեցին շարժվել: Իվային հերթով կծեց մատները, որ կենդանացնի: «Մի ձիգ էլ: Ձեռքը նորից դնել տեղը, աջ ոտքի համար գտնել միջանկյալ հենակետ: Լավ: Իսկ այժմ ձախ ութք»: Գոբոտի պես կծկվել էր ցցվածքի տակ և երբ մեջքն ուղղեց, ծնկները դիպան սալաքարին: Մեծ ձիգով բերանքսիվայր պստկեց ժայռերուտին: Պետք էր շուկվել, շնչել մի պատառ օդ: Նա կանչեց.

— Կարող ես գալ, ես ամուր եմ:

Երբ եղբայրը վերևում էր, իր կողքին, դարավանդին, Իվային պարնացավ, որ նա այդքան թուլացած է և հոգնած: Մարտընի ծնոտները պարնվում էին իրար: Երեսին գույն չկար: Թրթռում էին կուպերը:

— Ի՞նչ պատահեց,— հարցրեց Իվային:

— Այս... այս անցումը,— հեկիև ասաց Մարտընը:— Նույնիսկ պարանով... Դու քեզ հաջիվ չես տալիս... Ինձ թվաց, թե երբեք տեղ չեմ հասնի... Հիմա ո՞ր ենք գնում:

Դիմացի պատնեջը խորգուրորդությունների մի շարան էր, ինչպես ստանաշունչ քամուց տառած հեղեղի հորձանը: Մարտընը ու ձյունով լեփլեցուն մի ուղղահայաց ձեռք տանում էր դեպի ինչ-որ անստանալի հանգստարան, որը տեղադրված էր հարյուր մետր վերևում, ամպերի տակ: Երկինքը պայծառ էր, բայց լեռանցքը, որ արևուտյան կողմում էր, ասես սուլվել էր բնեռային վերջապույտի մեջ: Աստիկ ցուրտը այրում էր նրանց, Իվային լայնացրեց ոտնգերը, որ պոկվեին թթում արաշացած եղյամի ասեղները: Երթուները նույնպես ծածկվել էին փխրուն շերտով: Նա գրպանից երկու կտոր շաքար հանեց, մեկը ուլեց Մարտընին, մյուսը բերանը գցեց, որ կուրորդ մի քիչ ջրտալի: Բրդի ծվեններ կպան լեպլին: Նա թքեց:

— Պետք է գրոհենք ծխանի վրա,— ասաց նա:

— Ծխանի՞,— գոչեց Մարտընը:— Չես տեսնո՞ւմ, խկական սահարան է:

— Ուրիշ ելք չունենք:

— Ավելի լավ չէ՞ աջակողմյան երկանիստ անկյունը:

— Ոչ: Ես գիտեմ այդ երկանիստը: Հիսուն մետր կարճ ու ծուռտիկ հենակետեր: Այսպիսի սառույցներում չի կարելի նման բան անել: Հավատա, ծխանն է միակ ելքը: Ես գիտեմ այնտեղի բոլոր հենակետերը: Ինչք էլ կհամոզվես:

— Երբեք էլ չենք անցնի: Սերվուրը չգիտե՞ր ինչ էր անում, որ սառցադաշտն էր ընտրել:

— Ես քեզ կքաշեմ: Դու միայն պետք է հետևես:

— Դա գժի ճամփա է:

— Ես գիտեմ, թե ինչը կարելի է և ինչը՝ ոչ: Վստահիր ինձ: Եթե եղանակը չփոխվի, մենք դուրս կգանք, խոստանում եմ: Մարտընը ձեռքերը մոտեցրեց դեմքին:

— Պատառոտվել եմ:

— Մինչև իմ բարձրանալը, դու կհանգստանաս,— ասաց Իվային:

Այնքան համոզիչ էր ձայնը, որ իրեն մի պահ թվաց, թե ուրիշն է խոսում: Նա իրեն չէր ճանաչում այս ուժեղ և վրձ-



ուսկան մարդու մեջ, որ պարան էր փաթաթում, կարգադրություններ անում, մի հայացքով հաստատում վերելքի ծրագիրը: Կարծես մաքուր օդը լվացել էր նրա ուղեղը: Թմրածությունը տեղի էր տվել թեթևության և պայծառաստուկության: Նա վստահորեն սկսեց ծխանի վերելքը: Քարի ասեն մի բեկոր դառնում էր նրա բարեկամը: Փորվածքը, որ սկզբում լայն էր ու խորունկ, այժմ նեղանում, վերածվում էր սառուցյով խցանված ձեղքի: Իվային ուղեպարկից հանեց կարճ կոթով բոխը: Չափված հարվածներով նա սառած զանգվածի մեջ ձեղքեր էր բացում: Ճառագայթներ էին ուստոստում շուրջը և կտորվող սպակուտ կրնգոցով դիպչում պատնեշին: Հարվածներից խախտված ձյունը թափվում էր նրա հագուստի թևքերի մեջ, լցվում օձիքի և վզի արանքը, խոնավացնում կուրծքն ու փորը: Չնախոշին կուրացնում էր: Իվային զնցում էր գլուխը, հայեցում, թքում և շարունակում աշխատանքը՝ կատաղությամբ ու ներքին հաճույքով: Հենակետերը, նույնիսկ սառուցից սպառովելուց հետո, շատ էին փոքր: Կոշիկները սահում էին: Իվային հոգյաբ րթել էր միայն ձեռքերի վրա, որայեսպի ամստի մետր սառ սանտիմետր հաղթահարեր բարձունքը: Նա բոխը նորից դրեց ուղեպարկը: Հավասարակշռությունն ստուգելու համար մի ծունկն ու մի թևը խցկեց մի խոռոչի մեջ: Նրա շուրջը տարածությունը կորչում էր շեղքերի, երկանիստ անկյունների, ճառագայթների, մշուշների քառսի մեջ: Ցուրտը կտրում էր կրեսը: Հարունակել: Որտեղի՞ց: Ինչպե՞ս: «Մարսելինն իրավացի է: Անհնար է»: Նա հանեց ձեռնոցները, որովհետև խանգարում էին աշխատանքին, և սկսեց եղունգներով քերել սառույցը և ապրրերով թիավարել, որ չկորցնի ոտքի տակից փախչող անհարթությունները: Միտոբ պարկում էր քարին հղկված: Հոգնածությունից փսխելու ցանկություն ուներ: Հասնելով մի ժայռի գնդաձև հիմքին, նա քիչ-քիչ դուրս եկավ ձեղքից, աչք ձեռքով հանեց հենակետը և թեղ թողեց մարմինն ի վար: Մատները խարխափելով խլեցին գոտուց կախված կեռերից մեկը: Հեռու պզուշությամբ, որպեսպի որևէ անխոհեմ շարժումով չկորցնի դիրքը, կեռը մտցրեց մի ձեղքի մեջ, մուրճի մի քանի հարվածով ամրացրեց և պարանն անցկացրեց կեռ օղակի միջով:

— Լարը քաշի՛ր, — գոչեց նա:

Կանեփաթելի բարակ պարանը, որ քաշում էր Մարսելինն, պրկվեց: Իվային յեթևացած հառաչեց: Երկաթյա կեռին կապված, նա իրեն ապահով էր զգում: Տասներկու մետր կար մինչև տափարակը: Չեռքերն անկենդան էին: Նա կծուեց մատները, ձեռնոցները հագավ, հանեց, նորից շոշափեց քարը: Բոխով արած աստիճանը նրան օգնեց բարձրանալու ծխանի վերին ելուղ: Գլխավերևում բացված երախից կարկտի հեղեղ էր թափվում: Նորից մի կեռ խփեց: Արձագանքը ուժեղացնում էր թխկթխկոցը: Պետք է երրորդ կեռիկը տեղադրել և հենակետ ստեղծել չեղած տեղը: Փխրուն էր ժայռը՝ ձոճվում էր կեռիկը: «Մի անգամվա համար, ոչինչ»:

— Որտե՞ղ ես, — կանչեց Մարսելինը:

— Անցնում եմ, — ասաց Իվային: — Կապի՛ր պարանը...

Կարծես երբևէ չէր ընդհատել ուղեկցորդի իր արհեստը: Մարմինը չէր մոռացել ոչինչ: Թերևս մի քիչ շունչն էր թուլացել: «Դա էլ կվերսկանգնվի»: Վատ դրված կեռիկը ձոճվում էր ոտքի տակ: Նա կույզ ձեռքերով ճանկեց հարթակի ելուղ, որտեղից սառույցի լեզուներ էին կախված: Նրա մկանները ցավագին պրկվում էին: Պատուկել էր թևի մաշկը: Չորեղ ճիգով նա բարձրացավ գագաթներից մեկը: Կեռը պոկվեց, քարի դիպավ և կրնգալով ընկավ ներքև: Բայց Իվային աչք ոտքով արդեն հենակետ էր գտել անկյունաքարի վրա և թեք էր ընկն առկախ մի ժայռի երկարությամբ: Փորը հպած ձյանը, նա առաջ գնաց՝ ձեռքերով ճանապարհ բացելով: Երբ համոզվեց, որ դիրքն ամուր է՝ սպիտակ ու թանձր անկողնում, շոկվեց: Բերանը ծիծաղում էր: Աչքերը մշուշվել էին եղամից:

— Մարսելին, գործի անցիր, — գոչեց նա:

Պատասխան չեղավ: Գունատ արեգակը, տաքացնելով բարձունքները, նրանցից մաեր խճեր էր կորզում, որոնք գնդակի սուլոցով ձեղքում էին օդը: Իվայու դեմքը սուլերի մեջ էր: Երբ նա շարժում էր ձեռքը, լույսի շեղ ճառագայթը բոցավառում էր նրա ձեռնոցները ծածկող բյուրեղիկները:

Դաշարեց քարերի անկունը:

— Գործի անցի՛ր, Մարսելին, — կրկնեց Իվային:

— Այո, այո, հիմա, — լավեց մի թույլ ձայն:

Իր պատվանդանին կամար կապած, Իգային պզու՛ւմ էր, որ պարանր մերթ թուրանում էր, մերթ ձգվում ձեռքերի մեջ: Սառուցից կոշտացած պարանին դողալողում էր եղբոր ներկայությունը: Այո, կանեփաթեի պարանը Մարսըլենն էր: Ծխանն ի վեր բարձրացող Մարսըլենը: Գլուխը հակած դատարկությունը, Իգային գոռաց.

— Կամա՛ց... աչեհանկը հենիր կեռին... Բարի՛... Մեկնի՛ր ձախ ձեռքը... լավ հենակետ կա...

— Չեմ տեսնում:

— Կա, կա... գլխիդ հավասար... Այդ չէ, մյուսը... Լավ է... Գու՛ մտա ես... շարունակիր, շտապելու կարիք չկա...

— Լա՛վ ես սրահել...

— Այո, մի վայելու...

— Այրքան մի ձգիր... Ուղեպարկիս փոկը բանի է դեմ առել... Հինա քաշի՛ր, քաշի՛ր, դեմ քաշի՛ր...

— Կեղծ տեսնո՞ւմ ես:

— Չեղբերս սառած են, Չայի... Չեմ կարողանում ինձ պահել... Կծկվում եմ...

— Դիմացիր... քիչ մնաց...

Նրան թվում էր, թե եղբորը քաշում է ոչ այնքան պարանով, որքան ձայնով, ոչ այնքան մարմնով, որքան հոգով:

Գաղար:

— Ի՞նչ եղավ.— գոռաց Իգային:

— Պարանը խճճվել է.— տրտնջաց Մարսըլենը:

— Որտե՞ղ:

— Քո և կեռիկի միջև: Թուլացրու:

— Կթուլացնեն, երե ամուր ես:

— Ամուր եմ, թուլացրու:

Իգային ալիքաձև թուլացրեց պարանը, որ ցատկեց քարաժայռի վրայով. երկարեց և սուրցով բացվեց: Նույն պահին խեղդված ճիչ բարձրացավ անդունդից: Իգային ետ ընկրկեց: Մարսըլենը, ուղեպարկի ծանրությունից կորցնելով հավասարակշռությունը, կորցրել էր նաև հենակետը: Պարանը ներքև էր սուրում սաստիկ արագությամբ: Մի վայրկյանից մյուսը Իգային կարող էր պոկվել ցցվածքից, կուլ գնալ դատարկությանը, ջահջահվել երկաթե կեռիկի վրա: Պարանը սահում էր նրա

կծկված ձեռքերի միջով: Հին ձեռնոցները շատուցով պատրվում էին: Մուկալի այրվածքը խայթում էր մերկ մաշկը: Իգային մատների ամբողջ ուժով սեղմում էր, խեղդում այդ սողացող կրակը: Կանգնեցնել պարանը: Սպանել պարանը: Արգեն ավելի դանդաղ է վազում: Հանկարծ սլարանն անշարժացավ: Իր մաշկից պոկված կարմիրավուն ծվմաներ էին կարգ պարանին:

— Տեր առաված, — մրմնջաց Իգային:

Միքսը բերանով դուրս էր գալիս: Չեռքերը՝ կրակ էին կտրել: Շուռը հավաքելով՝ նա գոռաց.

— Մարսըլեն:

Լուռությամբ: Անակնկալ տագնապը բառեց Իգային: Նա ավելի ուժեղ կրկնեց.

— Մարսըլեն, Մարսըլեն...

Ներքևում մի փոքր շարժում նկատվեց և լավեց Մարսըլենի վախից մարած ձայնը:

— Այստեղ եմ, Չայի:

— Հո վերք չունե՞ս...

— Կարծես դատարկված լինեմ...

— Ես քեզ հարցնում եմ հո վերք չունե՞ս...

— Չեմ կարծում... չգիտեմ... կարծես դատարկված լինեմ...

— Գունե ամո՞ւր ես կապվել:

— Այո:

— Կարո՞ղ ես բարձրանալ:

— Ոչ... ուժ չունեմ:

— Այդ գեպքում ես կբարձրացնեմ... Միայն օգնիր ինձ. ուրիշ բան պետք չէ...

Իգային սկսեց քաշել պարանը: ձեղքված, այրունուոված ձեռքերը սոսնձվել էին պարանին: Ահավոր ցավը կրծում էր միայն, անցնում մկանների մեջ, թափանցում ուկորները: Աչքերը փակ, ծնոտներն ամուր սեղմած, նա երեքում էր տանջանքից ու երջանկությունից. «Ես պահեցի: Մաշկս ծխալվեց, բայց պահեցի: Ես, Չային»:

— Քաշիր, քաշիր, Չայի՛, ինչո՞ւ ես կանգնեցնում:

Վերջ չկա նրա չարչարանքին: Կարծես ի վերուստ նա դատապարտված էր հավերժ վեր քաշելու մի հսկա ձուկ, որը

եղբայրն էր: Չեռք ձեռքի վրա, ցավ ցավի վրա: Պարանը փափկեց: Մի սամեր սյաակեց ժայռկուստը: Իգային բացեց աչքերը, թուլացրեց պարանը: Մարսընը իր դիմացն էր. կապարագոյն, այտր քերծված. բերանը բաց, լեզուն դուրս ընկած:

Երբ պարանն ուղղեցիր, ես ճոճվեցի... վարմացա... Մի շարժում արեցի... Ուղեպարկն ինձ ետ հրեց...

Պսաղուն գնդիկները էին պարում Իգայու բիբերի առջև: Ենթադրեց, որ գլխապտուտից է:

— Ուղեպարկդ ինձ կտա,— ասաց նա խլված ձայնով:

— Ուղեպարկդ թե առանց դրա, միևնույն է, ես այլևս չեմ կարող բարձրանալ,— գոռաց Մարսընը:— Ես հասկացա... Տապ մետր անկում... Մի քիչ էլ ավելի, և ես կմնայի տեղումս... Ես ուզում եմ իջնել... Իջնենք... Իջեցրո՛ւ ինձ, Իգայի...

Հանկարծ նրա կտկորդից հեծկտոցներ թռան: Աչքերը ողորմելի արտահայտություն ստացան: Չղաձգորեն ցնցվուս էին շուրթերը, ի հայտ բերելով արյունոտ բծեր:

— Անմիջապես իջեցրո՛ւ ինձ:

Դա հեշտ չէ,— ասաց Իգային:

— Ինձ ի՞նչ,— ճչաց Մարսընը:— Ես չեմ ուզում այստեղ շարվուփշուր լինել: Իջեցրո՛ւ ինձ:

— Ահա՛ս:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ամենադժվարը անցել ենք: Եվս մեկուկես ժամ, և մենք դուրս կգանք: Կանգառը լավն է: Կեսօրին կլինենք զագաթին: Մի կաթիլ օդի խմիր, լավ կզգաս:

Մարսընը եղբոր ձեռքից վերցրեց տափաշիչը և կուլ տվեց մի ունկ օդի: Արյան այրք բարձրացավ այտերն ի վեր: Դեմքն աշխուժացավ, ասես հոտանք անցավ բոլոր զգայարաններով: Բայց նա այլևս չէր խոսում: Մտածում էր: Խզվոցով էր շլչում:

— Ինկապես, ի՞նչն է մեզ ստիպում,— հարեց Իգային:— Կանենք այնպես, ինչպես դու ես ցանկանում: Բայց հասնելով այստեղ, ափսոս է ետ դառնալ ճամփից:

Մարսընը նրան վերադարձրեց կիսովին դատարկված տափաշիչը: Իգային շիջը գցեց իր ուղեպարկը:

— Դու վստա՞հ ես, որ անցումն այստեղից լավանում է, հարցրեց Մարսընը:

— Եթե վստահ չլինեի, չէի ասի:

Խուսելու ընթացքում Իգային նայում էր իր արյունվա ձեռքերին: Ասես մրջյուններ էին վազում նրա բաց կոսերի տակից: Լեզուն տենդի համ էր պղում, բայց ուժեղ ցուրտը մոռացնում էր ցավը:

— Աստված օգնական,— ասաց նա:

— Դու վերջե՞ր ունես,— հարցրեց Մարսընը:

— Մի քիչ:

— Ուրեմն դու չես կարողանա պահել պարանը:

— Մի անհանգստանա:

— Ինչո՞վ կարող ես ինձ համոզել:

— Կարող եմ, Մարսըն: Կհամոզեմ: Ես քեզ ցույց կտամ, թե ինչպես են դժվարության դիմանում, եթե հարկավոր է:

— Դու խոսում ես առանց մտածելու, ինչպես միջու:

— Ես խոսում եմ մտածելով: Բացի այդ, այլևս տարատոմ չկա մեր առջև: Խճաքարերը վերջացել են: Նայիր...

— Մեկ և կես ժամ,— մրմնջաց Մարսընը, ասես մեկուսի:

Նրա դեմքը բանական էր դարձել: Աչքերում կենդանի փայլ կար:— Հակառակ դեպքում կիջեցնե՞ս ինձ:

— Այո:

— Ես նայա կուզենայի մի քիչ շունչ առնել: Ուղեպարկս վար դնել:

— Դիր ուղեպարկդ: Ես կվերցնեմ:

Մարսընը հանեց ուղեպարկը, նետեց ձյան մեջ: Ներքևում ամեն ինչ սուսված էր մառախուղի մեջ: Լուռ էին լեռները: Ամեն մի քար սառույցով էր պատված: Իգային գոտուց մի կես հանեց: Չայն կողմում, վերևում հարմար տեղ գտավ և մուրձի հարվածներով սուր երկաթը մխրձեց ժայռի մեջ: Ապա մի կտոր պարան կտրեց և գցեց կետիկի արանքը, որպեսզի լրացուցիչ օդ ստեղծի:

— Միշտ այսպես եմ անում իջնելու համար:

— Հո չես կարող ամբողջ անցումը ապահովել,— ասաց Մարսընը:

— Որքան հնարավոր է, կանեմ... Քեզ ձե՞ռք է տալիս...

— Ձեռք է տալիս:

— Ես ուրախ եմ, որ դու համաձայն ես,— ասաց Իգային. Նա մի փոքր վարանեց, ապա ավելացրեց կանացուկ.

— Գիտես, կարող եմ ասել, որ սա հիանալի արշավ է... Առաջին ձմեռայինը: Ես ինձ ճանաչում եմ այստեղ... Եվ մենք միասին ենք, դու և ես... միասին, եղբայրսարար... Սա մեծ հաճույք է... Սա...

Մարտըները կարծես չէր լսում: Սառցալույս էր կախվել քթից: Իգային խանդավառանքով նայեց եղբորը: Այս լեռնային, գերազույն մենության մեջ, կյանքը գեղեցիկ էր ինքնին: Երջանկությունը ինքնաբերական էր: Ամեն ինչ անբացատրելիորեն պայծառ էր և հասակ: Յրաում էր: Բեկվում էր լույսը: Հովտի քաղցր շուկներով լի քամին հասավ մինչև այս կորած վայրը: Թողում զգացվում էր հեռավոր փանփանների ու մուրճերի ծրնգոց: Այդ ամենը մեղվապարսի նման պարում էր ականջի տակ: Անուկեռեռն աղմուկը աստանվեց: Իջավ, ետ դարձավ դաշտերը, ճապիճի վրա, կորած տների շուրջբոլորը: Իգային զգուշորեն դիպավ եղբոր ուսին.

— Մարտըներ, Մարտըներ:

— Ի՞նչ:

Իգային աչքով արեց:

— Ինձ թվում է, որ սա մեր վերջին արշավը չի...

\*

\* \* \*

Նորից երեք քառորդ ժամվա դժվարին վերելք՝ սառույցով ծեփված պատնեջի վրայով, մինչև որ հասան մի լայն, կիսաջրջանաձև դարավանդի: Այնտեղ, առանց ժամանակ կորցնելու, նրանք կոչիկներին գամեր անբացրին: Հինգ մետր իրենցից վեր, մի սառած ժայռացքվածք էր հանում դատարկության մեջ: Սառույցի ուժեղ սայրը, որ արմատներ էր ձգել հարթակի վրա, անթացուսի պես պահում էր այդ քիվը: Գորշ ժայռի և բլրերեղյա սյունի միջև, ինչ-որ սև անցք ուղղահայաց գնում էր դեպի մի ծածկ: Իգային սկսեց անցումը: Կոպիտ մի շարժում բավական կլիներ սասանելու սահմանանիշը և վրան շուտ-տուր ժայռի քիվը: Հավասարակշռությունը պահպանելու

համար պետք էր հենվելուց խուսափել: Կայել քարին: Փորել սառույցը: Բրիչն այլևս դեր չուներ: Ամեն մի շարժում կատարելիս, Իգային ուսը կամ արմուկը խփում էր արտաքին նեցուկին, որ ողորկ էր հայելու պես: Ծխանք լայնանում էր: Չրնկներու համար անհրաժեշտ էր մի սանդղանատ փողիկ սառույցի մեջ: Արունքները բացած, աջ ոտքը դեմ տված այդ փխրուն ապակյա աստիճանին, ձախ ոտքը կխտով մոցրած ժայռալուսի մեջ, նա բարձրացրեց գլուխը: Լեռնանցքը ծածկված էր սպիտակ տանիքով: Ինչպիսի՞ն էր նրա թանձրությունը, ամրությունը: Իգային պարզեց ձեռքը և բրիչով խփեց կարծր պանզվածին:

— Տեսնեսի պես կոշտ է,— մրմնջաց նա:

Համենայն դեպս շարունակեց հարվածել: Ծողոզուն տաշեղներ էին թռչկոտում երկաթի հարվածների տակ: Երբեմն ապակու պես նուրբ մի շերտ էր սուլելով գահավիժում:

— Չգո՛ւյշ,— գոռում էր Իգային:

Եվ երակվում էր գործը փայտահատի «ը-ը»-ներով: Հանկարծ գորշ փոշու մի առվակ հոսեց երեսին: Չյուն էր: Անշուշտ կարծրացած ձյուն էր, ոչ թե սառույց: Արտառոց հոգնածությունը զգվեցնելու աստիճան տանջում էր Իգայուն: Նա ասաց.

— Ինչպե՞ս ես, Մարտըներ:

— Հոգնե՞լ ես:

— Առայժմ ոչ...

Նա վերսկսեց կոցահարել առաստաղը: Վերջայես կատարի բրիչը խրվեց վերին շերտի մեջ: Փոքրիկ անցքից Իգային տեսավ մի կլոր, դալուկ լույս:

— Երկինքը երևո՞ւմ է,— գոռաց նա:

Շուտով փայլեցին ուրիշ անցքեր: Չյան ծիածանագույն տարափ մաղվեց: Իգային համառ հարվածներով միացնում էր բոլոր անցքերը, որոնցից ցայտում էր լույս և սառնություն: Նա լողանում էր կարկուտե ցնցուղի տակ: Հնում էր:

— Մի քիչ էլ համբերի, բացվածքը մեծացնեն, անցնենք:

Երբ երկինքը բավական լայնացավ, Իգային սառույցի եզրին հենված, զգուշությամբ վեր էլավ և հայտնվեց ազատ տարածության մեջ, տանիքի մյուս կողմում: Մարտըներն առանց մեծ

ձիգերի, դաստակների ուժով հասալ եղբորը: Նրանք ոչ մի խոսք չփոխանակեցին: Դիմացը փոխվել էր տեսարանը: Ժայռեր չկային այլևս: Համատարած կապարագույն պտիվերը տանում էր դեպի կատարը, որի ողնաշարը ավելում էր քամին:

7

Մորիկներից առաջացած ձևափոսում, ուղեպարկերին նստած, նրանք մի քիչ բան կերան: Ծնոտները քարացել էին, բերանները ցամաքել: Հաց ու պանիրը քարի նման կարծրացել էին: Խոլաձարպը կուլ չէր գնում: Գինուց երկաթահամ էր գալիս: Երբ նորից ճանապարհ ընկան, մառախուղի մի դեղնորակ քող գագաթն անշատում էր շրջակայքից: Երկու տղամարդիկ գտնվում էին մի սառցե կղզյակում՝ եզերված գոլորշու ալիքներով, որոնք փրփրում էին անվերջության մեջ: Նրանց գլխավերևում երկինքը ծածկված էր երկար կաթնագույն շերտով: Այդ երկու անթափանց սփռոցների միջև դեռևս հանդարտ էր մթնախորտը: Քամին բարձրակա ծվեններ էր ծածանում օդում:

— Եղանակը փչանում է,— ասաց Իգային:— Եթե գագաթը ծածկվի, գլխացավանք ունենք:

Մարսելնի շունչն այնպես էր սպառվել, որ չկարողացավ խոսել: Խզանները ուղքերին, նա հետևում էր եղբորը՝ ձյունոտ լեռնալանջն ի վեր: Գագաթն իրենց դիմացն էր, շատ մոտիկ, և, այնուամենայնիվ, սնիրական էր թվում: Իրար սեղմված երկու վերասլաց սպիտակ թեքություն: Մի մերկ եռանկունի: Աջաբրի ծայրագույն կետը, անդունդի դեմքը՝ վերևում: Այնտեղից կարելի էր ձեռք տալ երկնքին: Այդ միապաղաղ տեսարանից գյուղված, Իգային քայլում էր տիրաբար, երկու ուղեպարկի ծանրությունից իրանը թեքված, դեմքը ցրտից թրծված: Նա հաղթական բերկրանք է ըմբռնջնում, որ իր ոտնահետքն է թողնում անարատ գետնին: Ամեն ինչ նոր էր աչքին: Մոռացել էր ամեն ինչ: Ոչ ոք չգիտե, որ ինքը եղբոր հետ գտնվում է այստեղ: Եթե աշխարհում մնացած լինեին միայն երկու ողջ մարդ, նրանց մենությունն այսքան սուսկալի չէր լինի, և ոչ էլ այսքան փառավոր: «Եթե ամեն ինչ բարեհաջող վերջանա, մենք կիջնենք նույն ճանապարհով: Կեռերը լավ եմ դրել: Հեշտու-

թյամբ կիջնենք: Մի ժամից պետք է վերադառնալ»: Հեռուից գալիս էր Մարսելնը՝ քրթմնաչալով, հայիոյելով, ընկնելով:

— Վեր կաց, Մարսելն: Հասնում ենք:

Նա եղբորն օգնեց ոտքի ելնելու: Մարսելնն ապուշի արտահայտություն ուներ: Քամին նրա գլխանոցը կպցրել էր այտին: Ելյամի փշեր էին ցցվել բերանի շուրջը:

— Էլ չեմ կարող,— ասաց նա շնչահատ:— Էլ չեմ կարող:

Բաց շունչը տեղը բերելով, նորից գնաց եղբոր հետքերով: Երբ հասան գագաթին, արեգակը դուրս էր գալիս ամպերի տակից: Չյան վրա քննկվեց բյուրեղների հրդեհը: Հետո լույսը խառնվեց ինչ-որ գորշավուն լուծույթի: Գետնի ճերմակությունը հանգավ: Իգային մի հարթակի կանգնած նայում էր հեռու, ուրիշ լեռների առամների, որ ասես փրփրաբաշ ծովից հալածված, շրի երես էին ելել: Հաղթանակի պագուստից ուռչում էր կուրծքը: Նա վարձատրված էր: Նա խոսելու ցանկություն ուներ, բայց համապատասխան բառեր չէր գտնում, որ արտահայտեր հրճվանքը:

Պարանի փաթույթին պպկած Մարսելնը բավարարվեց միայն մի կերկեր քրթմնաչոցով: Ակնհայտ կերպով նրա միակ իոզաը իր ուժերը վերականգնելն էր: Տեսարանի վեհությանը անտարբեր, նա պատրված էր ինքն իրենով: Քիչ հետո ելավ, բացեց թևերը, ծալեց ծնկները: Հոգնածությունից անկենդան դեմքը հանկարծ աշխուժացավ: Կարծես լույս վառվեց մաշկի տակ:

— Թարմացա՞ր,— հարցրեց Իգային:

— Այո,— պատասխանեց Մարսելնը:— Ավելի լավ եմ: Այժմ պետք է իջնենք մյուս պտիվերը:

— Ի՞նչ կարիք կա:

— Ի՞նչ, դու ուզում ես ուրի՞շ կերպ անցնել: Մենք այնքան էլ հեռու չենք, ըստ այն տեղեկությունների, որ տրված են թերթերում: Բայց այստեղից բան չի երևում, պատենքը ծածկում է:

— Ինչի՞ մասին ես խոսում:

— Վա՛հ: Ինքնաթիռի,— ասաց Մարսելնը:

Իգային փռաբաղվեց: Վերելքի դժվարություններով տարված, նա մոռացել էր իրենց արշավի դրդապատճառը: Նրա

հոգևած ուղեղում քիչ-քիչ շնչվեց գագաթին հասնելու փառա-  
սիրությունն ու հայարտությունը: Նա կարծում էր գեղեցիկ ար-  
շավ է կատարել, և Մարսըլենը մի քանի խոսքով փչացրեց նրա  
հաճույքը: Նա մրմնջաց.

— Ինքնաթիռը, այո... անշուշտ... շա՞տ ես ուզում հասնել  
այնտեղ:

— Հապա ինչո՞ւ գրոխս փռանգի տակ դիմեցի, — բացական-  
չեց Մարսըլենը: — Ըարժվի՛ր, հասնել է պետք...

— Մի բարկանա, — ասաց Իգային, — գնում ենք:

Աչքին ամեն ինչ այանդակվում էր ու կեղտոտվում: Նա  
այլևս սիրտ չէր անում հայարտանալու, որ հաղթահարել է իր  
երկյուղը, հաղթահարել է վտանգները և բաց է արել իր ճամ-  
փան՝ անվրեպ, մինչև վերջ: Եվ այս դժվարին ջանքերը պետք  
է վարձատրվեին դիակների գրպանից կորսված գումարով: Այդ  
րույսի տակ, ամենադժվար պահերը, ամենավտնագավոր վերել-  
քը ստանում էին որդրմեյի նշանակություն: Նույնիսկ բնու-  
թյունն էր կորցնում իր վսեմությունն ու խորհուրդը, կարծես  
մարդկային միտքը կեղտոտել էր տեսարանը: Իգային կուպենար  
հակառակվել եղբոր որոշմանը: Բայց որովհետև խոստացել էր  
աջակցել նրան, չէր կարողանում առարկել, ոչ էլ ցույց տալ  
իր բարկությունն ու հուսահատությունը:

— Ես առաջ եմ ընկնում, — ասաց Մարսըլենը:

Իգային շալակեց ուղեպարկերը և հեռուեց եղբորը, որ  
ամեն քայլափոխի ճոճվում էր քամուց: «Գուցե սխալվել է:  
Չի գտնի ինքնաթիռը, կհոգնի որոնելուց: Եվ մենք կկերպա-  
նանք ձեռնուռայն: Տեղ աստված, այդպես արա: Դա հեշտ է  
քեզ համար»: Լեռնալանջը մեղմ թեթևությամբ հասնում էր մի  
սառած վառիվերի, որը պետք էր մագլցել: Մարսըլենը բրիչով  
ծակում էր կարծր պատը և ելնում անարգել: Նպատակին հաս-  
նելու ձգտումը տասնապատկում էր նրա հմտությունն ու  
եռանդը: Այդ աննշան խոչընդոտն անցնելուց հետո սկսեց  
վարչեջբը: Նա՛ միակ սև կետը այս սպիտակ անապատում,  
առաջանում էր համառ և անխոնջ դանդաղությամբ: Կարկտա-  
բեր մի ամպ էր պսակում նրա կարճ հասակը: Իգային հասա՛լ  
նրան և գոռաց.

— Մարսըլեն, վստա՞հ ես, որ այստեղ է:

— Վստահ եմ: Ինքդ տեսար լուսանկարը:

Չոր ձևահողմը խփում էր նրանց դեմքին: Եվ նրանց  
աչքերը այդ արծաթափայլ մծեղների պտույտից այն կողմ  
ոչինչ չէին պանապանում: Հանկարծ Մարսըլենը կանգ առավ,  
ձեռքը պարպեց.

— Նայի՛ր, դիմացդ, աչ:

Իգային թարթեց կուպերը: Մի քանի մետր ներքևում ինչ-որ  
ալյուրոտ պանզավածի շուրջը թափված էին թուխ, անորոշ ուր-  
վագծերով բեկորներ: Ցավալի էր այդ հոյակապ ձյունը սգա-  
վոր տեսնել:

— Ինքնաթի՛ռը, — ոռնաց Մարսըլենը:

Նա ուպեց վապել, բայց ուղքերը թաղվում էին ձյան մեջ,  
չնայած խզաններին: Նա կատաղի շարժումներով հերթով հա-  
նում էր ուղքերը, ընկնելով ու ելնելով առաջ գնում:

Իգային մնացել էր տեղում, կարծես միանգամից դատարկ-  
վել էին բոլոր պզացողություններն ու մուղքերը: Տխուր սուկունը  
ընկճում էր նրան: Նա ամաչում էր իր և եղբոր համար: Վերջա-  
պես նա դանդաղ քայլեց բեկորների կողմը:

Երբեք մոտիկից ինքնաթիռ չէր տեսել: Դա վիթխարի  
չափերի էր: Շատ մեծ էր մարդու համար: Շատ ծանր էր  
երկնքի համար: Բզկտված, կտորատված, բերանքսիվայր ըն-  
կած էր ձյան մեջ, ինչպես մահացու վիրավոր գապան: Ինք-  
նաթիռի քիթը տափակել էր ժայռի ցցվածքի վրա: Մի թևը  
պոկվել, սահել էր լեռնալանջն ի վար: Մյուսը մի արտառոց  
մնացորդ էր, անուծ կարկառված դեպի երկինք: Հոտած  
ձկան նման պոչն անշատվել էր մարմնից: Իրանի մեջ բաց-  
ված երկու լայն անցքեր քամուն էին տալիս սրկված թիթեղի  
կտորներ, պատատոտված կաշի, ծոռաված երկաթ: Բեկորների  
մակերեսին ձևափոշի էր նստել: Իսկ մերկ ու գորշ, յուղի մեջ  
կորած կողերը՝ ընդհակառակը, կեղտոտ էին թվում: Չունը  
խան էր պայթած դեպերվուարի հեղուկը: Արյունոտ բծերով էր  
ծածկված կնիքը: Սառույցը պրկում էր ջրափոստերի սև մաշ-  
կը: Նույնիսկ խորտակված միճակում ինքնաթիռը խորթ էր  
լեռներին: Ասես դարերի հաշվետվության սխալմունքով մշուշ-  
վել էր միտքը և երկնքից ընկել էր կուսական մենության մի  
աշխարհ: Նա ետ-ետ էր գնացել ժամանակի մեջ: Թեև ստեղծ-

վել էր Կալկաթայից Անգլիա գնալու համար, բայց հեռացել էր այսօրվա աշխարհից և հասել մոլորակի մի ուրիշ անկյուն, որ ապրում է ըստ հարյուր հազար տարի առաջ սահմանած հին կարգ ու կանոնի:

Ինքնաթիռից մի քանի քայլ հեռու կանգնած Իգային փորձում էր պատկերացնել վթարը: Ինչպե՞ս էր տեղի ունեցել. ի՞նչ խավար ուժեր էին մարդկային այս ճակատագրերն առաջնորդել իրենց համար նախատեսված աղետի վայրը: Ինչո՞ւ էր աստված կամեցել, որ Հնդկաստանից ելած այս տղամարդիկ ու կանայք կործանվեն իրենց անձանոթ երկրի ամենաբարձր գագաթին: Հավանաբար ինքնաթիռը արո՞րի խոփի նման խրվել է լեռան կուրծքը: Առանց շրջվելու, նա սողացել է փոթի վրա, փռելով թևերը, պտուտակները, իրանը և կողերի պատռվածքներից դուրս է նետել շախջախված անդամներով և արյունաշաղախ դեմքերով ուղևորներին: Մինչդեռ հենց այս երեկո, ինքը՝ Չային, մտածում էր իր ոչխարների մասին, որ արածում էին բարձրադիր արոտավայրերում: Ժողվե՛ք հորեղբայրդ հանգիստ խմիչք էր լցնում բաժակները: Մարի Լավայունը դուրս էր գալիս տանից՝ կողովը մեջքին: Շորորալով ծուխ էր բարձրանում գունաթափ տանիքներից: Կաթ էր եռում պղնձե կաթսաներում: Տեր հայրը երիցատուն էր վերադառնում՝ առանց բան նկատելու: Այս աներևակալի բաների մասին շատ մտածելուց քիչ էր մնում Իգային խելքը թոցներ: Նրա աչքերի առջև քամին կատաղորեն ծածանում էր մշուշի քողը: Տեսարանը կարծես երերում էր սպիտակ պտերով շղարջի ետեվում: Ինքնաթիռի բեկորներից բավական հեռու այս ու այնտեղ սևով երիված գորշ կույտերն ապարարում էին դիակների ներկայությունը, որ դուրս էին թռել ցնցումից: Մարսընը, այդ անձն կանգվածներից մեկի վրա կռացած, դժվարությամբ ետ էր տալիս ձյունը: Կծկված ձեռք: Ոտք: Դեմքի մի մաս: Ողջը խուլվարկում էր մեռածի հագուստները:

— Թո՛ղ,— գոռաց Իգային:

Մարսընը շակվեց: Մի բան էր փայլում նրա ձեռքի ափում: Ժամացո՞ւյց: Մառանի՞: Նա հեռացավ, վարանեց, կռացավ մի ուրիշ սպիտակ գերեզմանաթմբի վրա: Չյունը լի էր օտար պարզակներով, լուսանկարչական գործիքներ, ծխա-

խտի տուփեր, հեռադիտակներ, վկնոցներ, կաշվե պայտակներ: Մարսընը լավը վերցնում էր, վատը զցում: Նա սարսվ խիեց պահածոյի տուփերի մի կույտի: Հետո իր կողմը քաշե-լ ծալծված ու ծակված մի քաթանե պարկ, որտեղից անմիջապես հոսեց գունպզայն դրոշմանիշերով ծրարների առվակ: Քամին թշում էր վետևատարած նամակները:

— Թող,— կրկնեց Իգային, թուլացած ձայնով:

Իր ոտքերի մոտ մի նամակ էր կպել ձյանը: Հասցեի թանաքը թրջվել էր: Իգային չէր համարձակվում կռանալ, վերցնել գունաթափ ձեռագրով ծրարը: Անես մղձավանջային, կուպրագույն քողի ետևից նա տեսնում էր եղբոր սավերը, որ թափառում էր ցրտից կարկամած դիակների մեջ, փոսեր փորում, վեր առնում արձանիկի բեկորներ, ափար հափշտակում անտարբեր ու արնաշաղախ մարմինների բլկաված հագուստների՝ գրպաններից: Հավանաբար որոշ պիակներ չարուչար կերպով խեղանդամվել էին, որովհետև Մարսընը կրկին կերպով խեղանդամվել էին, որովհետև Մարսընը կրկին դուրս էր բերում երկարավուն կտորներ՝ թև կամ ոտք և սմմիջապես փայտի կտորի պես շարտում էր հեռու:

— Տեր աստված, թողութուն տուր նրա մեղքերին,— շշմջում էր Իգային:— Տեր աստված, թողութուն...

Չյան հորձանքը լցվեց բերանը: Օրորվելով տեղում նա գոչեց.

— Մարսըն՛ն, հեռացի՛ր այդտեղից: Այլևս չեմ կարող նայել քեզ: Եկ վերադառնանք:

Նա ուզում էր վազել եղբոր մոտ և չէր կարողանում շարժվել: Տեղում մեխված, մորմոցում էր:

— Դետք է վերադառնալ, հավատա:

— Ոչ,— ասաց Մարսընը:— Դեռ չեմ վերջացրել:

— Արդեն շատ ես վերցրել...

— Մանրուք միայն: Լավագույնը ներսում կլինի:

— Մի մտնի:

— Եթե իսկապես ոսկի էին տեղափոխում, պետք է որոնել...

— Դա մերը չէ: Դու իրավունք չունես: Եթե այդպիսի բան անես, երկինքը կպայրանա:

— Լռելո՞ւ ես, թե ոչ,— ճչաց Մարսընը:

Քամին տարավ ձայնը: Հողմից կծկվելով, նա ամբողջ

ուծով նետովեց ինքնաթիռի կողմը: Նրա կողքի ուռած տապրա-  
կը վկայում էր բերքի առատությունը: Ուսից կախված էին եր-  
կու լուսանկարչական ապարատ և մի գույզ հեռա-  
դիտակ: Քայելով նա տաքատի գրպանն էր խոթում  
էլի ինչ-որ բաներ: Նրա թիկունքում տաքածված էր  
անպատանք դիակների գաշտը: «Չյունը նորից կծածկի  
սրանց,— մտածեց Իգային:— Մեկսուկից հետո կվերգտնեն  
իրենց նիւջը: Գուցե սխալվում եմ, կարծելով, թե պղծում ենք  
նրանց»: Իգային խոսում էր ինքն իրեն՝ ասես ուզում էր մեզ-  
մեկ իրեն պաշարած սրբապան երկյուղը: Գողը բռնել էր նրան:  
Նա չէր կարողանում տիրապետել իրեն:

Մարսըլենը մտտեցել էր բեկորներին: Նա ոտքը զցեց մի  
պատռված ցանցի վրայով և չքաջավ հրեջի երախում: Իգա-  
յին մեքենայաբար հանրում էր.

— Մեկ, երկու, երեք, չորս, հինգ...

Մարսըլենը շուտով հայտնվեց և գոչեց.

— Անհնարին է որևէ բան բացել... ամեն ինչ խառնվել  
է... Իսկական շիլպիլավ...

— Բա որ ասում էի,— հեծեծաց Իգային: Անօգուտ է:  
Ուկի չկա... Երբվում եմ, ուկի չկա... Ինչո՞ւ պետք է ուկի  
լինի:

— Համենայն դեպս ուզում եմ ամեն տեղ ստուգել:

— Որտե՞ղ:

— Մի ուրիշ անցքում: Կենտրոնում... Այստեղ...

— Եթե նույնիսկ ուկի լինի, ինչպե՞ս պիտի գտնես: Չյունը  
ես տալու համար օրեր ու օրեր են հարկավոր: Իսկ մենք  
գործիք չունենք, մանավանդ ժամանակ էլ չունենք:

— Դե լավ, մեկ էլ նայեմ, գնանք...

Մարսըլենը ծնկները ձկած, մանր քայլերով ետ գնաց և  
անհետացավ կենտրոնական մասում, իրանի մեջտեղում:  
Երկրորդ անգամ մենակ մնալով, Իգային ավելի վախեցավ:  
Քամին հագուստի ծվենները ծածանում էր ձնակույտերի վրա:  
Ամբողջ ուռուցիկ տարածությունը տարտամ ծիում էր, անաչ-  
դու ալիքվում: Մի թիթեղ շարժվեց, կարծես անպրոպ ձայթեց:  
Հնչեղ տարտուռ անցավ ինքնաթիռի կոնսիքի վրայով: Իգայուն  
թվաց, թե հիմա-հիմա շարժիչը ընթացքի մեջ կընկնի: Այն ժամա-

նակ լեռան փեշին կշտկվեն ձյանից ելած ուղևորները դանդա-  
ղաքայլ կընթանան դեպի ինքնաթիռի ուրվականը: Ունանք ան-  
գլուխ, ունանք անթև, կտորված ձանկերով ագրավի նման կոս-  
տուսան, «Ո՛ւր է պայուսակս, ո՞ւր է ժամացույցս: Ո՞ւր է  
մատակիս»: Անձուկ ձիջ թռավ Իգայու կոկորդից.

— Ոչ, ոչ:

Նույն պահին, բեկորների միջից հայտնվեց Մարսըլենի  
կերպարանքը: Նա մի քանի քայլ փոխեց ձյան մեջ, երեքսց և  
կանգ առավ Իգայու առջև, կարծես պատի դեմ առավ: Մար-  
սըլենի աչքերը անասնական արտահայտություն ունեին: Ծնո-  
ւոր կախվել էր: Մարտակ էր կարծում դեմքից: Նա հնայ.

— Չայի... Չայի...

— Ի՞նչ:

— Ինքնաթիռի մեջ մի բան շարժվեց...

— Ի՞նչ շարժվեց:

— Չգիտեմ...

Իգային լսում էր նվաղան պարմանքով: Խուռքերը նրա  
սկանջին էին հասնում մի ուրիշ եպերքից, մի ուրիշ աշխար-  
հից, ձյան ջլացող շշուռների միջով: Նա ջանդեց ոտքի  
խլպանների կապերը: Մի խղճուկ լույս էր առկայծում ուղեղում:  
Նա ջլեցաց.

— Սպասիր այստեղ:

— Ի՞նչ ես անելու:

— Տեսնեմ ձի՞ջոտ ես ասում...

Այժմ էլ նա մտտեցավ բեկորներին: Խաչաձև կտրվածքը  
քարանձավի պես բացվեց նրա առջև: Ներս մտավ և, տիրող  
քառսից ապշած, քարացավ տեղում: Ինքնաթիռի լայն ձեղքից  
դժգույն լույս էր լցվում: Պոկված նստարանները փակել էին  
մուտքը: Առատադից կախվել էին արմնկաչափ ձողեր, ծայր-  
րին քաթանի ծվեններ: Միջնորմներին կեղտաբծեր էին կպել:  
Հալխանաբար ուղևորների մեծ մասը դուրս էր նետվել բախման  
ժամանակ: Սակայն դարակ ու մաքուր մի ձեռք կպած էր մնա-  
ցել մի սեղանիկի, որ դիմադրել էր ցնցումին: Կենտրոնական  
սրահի խորքում արկղերի կույտի միջից ցցվել էին երկու ոտք՝  
գորջ պոլավոր տաքատով: Անանուն դիակը ոտքերը դեմ էր  
տվել պատին: Մի փոքր այն կողմ ընկած էին գլխարկներ,



պայուսակներ, պատառոտված ճամպրուկներ, որ թափել էին իրենց պարունակությունը՝ սրվակներ ու սպիտակեղեն: Եղյամի նուրբ շերտը աղվամալի պես ծածկում էր ցիրուցան մնացորդները: Քայելով սպակու փշուրների վրայով, նա ուզում էր անցնել շուռ եկած բավկաթռների պատնեջի միջով, երբ ականջին հասավ մի թույլ հեծեծանք: Նա ընկնկեց, ասես ակամա մեկին էր դիպել: Միտը թարտում էր կրծքավանդակում: Պակասել էր թոքերի օդը: Մարդկային հեծեծյունը շարունակվում էր՝ միապաղաղ և աղիողորմ: Լսվում էր մոտիկից: Ծխի նման սողում էր զետնին: Բարձրանում էր ծնկներն ի վեր: Իգային պրկեց սրունքները և կուրծքն առջ հակեց: Երկու կաշվե թիկնակ, մեկը մյուսի վրա խոնարհված, խցիկ էին դարձել: Այդ բնի ներսում ընկած էր հագուստների և մորթիների մի կույտ, որ հեծեծում էր և խղճալի կերպով շարժվում: Աղետից փրկված միակ անձը երևի քարշ էր եկել մինչև այս անկյունը, որպեսզի պատասպարվի ցրտից: Չորս օր սառած, քաղցած, վիրավոր, նա անգիտակցաբար պարքարել է մահվան դեմ: Իգային երկարեց ձեռքերը, շոշափեց մարմինը, մոտեցրեց լույսին: Ապա հանեց նրա թաթալանները, հետո ձեռնոցները, քանդեց անծանոթի դեմքին փաթաթված բրդյա շալը...

— Կին է,— ասաց կամացուկ:

Նա երբեք այդպիսի կին չէր տեսել: Այտերի մաշկը կաթով սուրճի պղտոր գույնի էր: Փակ կուպերը երիված էին երկար, մետաքսե թարթիչներով: Չախ ոունգին անց էր կացված պստիկ, ոսկյա գինդ: Մի կնճիռ էր ակոսում հունքամեջը: Դրվարուպթամբ էր շնչում: Երթունքները կիսաբացվել էին սահափյա շերտի վրա: Նա գեղեցիկ էր: Նա եկել էր Հնդկաստանից: Գուցե մեռնում էր: Իգային չգիտեր ինչպես խոսի նրա հետ և հարցրեց.

— Դուք վիրավոր եք:

Կնոջ աչքերը փակ էին և թվում էր հարցը չի լսել: Իգային իջեցրեց ուղեպարկը, հանեց օդու շիջը, ձախ ձեռքը անցկացրեց կնոջ ուսերի տակ, զգույշ բարձրացրեց նրան, միաժամանակ մետաղյա տափաշիջը մոտեցնելով նրա կապույտ ու փափուկ շուրթերին: Խմիչքը հոսեց կզակին: Կինը ակամա կուլ տվեց մի ունայ հեղուկ: Կուպերը թրթռացին, բարձրացան

չպև ու սև բիբերի վրա, որոնք ուսուցիկ էին ու քնքուշ, ինչպես փոքրիկ մտրուկի բիբեր: Մի շողշողուն հայացք դիպավ Իգայու դեմքին: Նա մրմնջաց.

— Ես եմ... Չվախենաք... Ձեզ կապտենք այստեղից...

Իգային անհանգիստ ապտակում էր նրան: Աղաչում էր ապրել: Բայց նա դարձյալ փակեց աչքերը: Գլուխը ետ ընկավ և վերսկսեց հեծեծալ: Իգային կոշտ ու սառած մատներով շոյեց նրա այտերը: Հոնքամիջի ծալքը չէր հարթվում: Կարծես մաշկի մեջ մի խորունկ ակոս էր գծված: Իգային շփում էր կնոջ ձակատը, այտերը, աշխատելով նրան հանել մահվան թմբիրից: Տնցում էր նրան, բարձրաձայն կանչում.

— Լսում եք ինձ:

Նա լուռ էր: Նրա երկար, սև մապերը ծփում էին պարանոցին: Մի կաթիլ արյուն էր չորացել աջ քունքին: Արտաքին վերք: Քիթը դեռ փայլում էր: Լավ նշան էր: Որովհետև կինը անշարժ էր, Իգային նրան թեթևացրեց հագուստների կույտից. մորթե երեք մուշտակ, երկու բրդյա վերմակ, մի թիկնոց և բրդյա շալ: Հավանաբար այդ ամենը հավաքել էր ինքնաթիռում, ցրտից պաշտպանվելու համար: Այդ թանձր կույտից ապառվելով, կինը շատ փոքրիկ թվաց: Ռսկով բանված ռանուշակագույն շղարշ էր կախված սպիտակ, արյունոտ զգեստից: Արծաթյա նուրբ ապարանջաններ կային դաստակներին և ոտքերին: Նրա կուրծքը, որ Իգային շոշափեց թեթև հագուստի վրայից, պիրկ էր և համարյա անկենդան: Միտը տրոփում էր դանդաղ: Հրաջք է, որ նա այդքան դիմադրել է քաղցին ու ցրտին:

— Մի քիչ էլ համբերեք,— ասաց նա,— լավ կլինի:

Նրա առջև չոքած Իգային ձեռքը մեկնեց ինքնաթիռից դուրս, մի բուռ ձուռն վերցրեց և սկսեց շփել կնոջ թևերն ու շտաբերը: Կինը փշաքաղվեց, ոտքից գլուխ սարսուռ անցավ.

— Մենք այստեղ ենք,— գոչեց Իգային:

Ապա նորից կնոջը փաթաթեց մուշտակներով, շալերով ու վերնակներով և ձեռքն անցկացնելով ծածկոցների տակ, շարունակեց ուժեղ շփել թմբած անդամները:

— Ի՞նչ ես անում այդտեղ:

Նա շրջվեց: Մարսըներ կանգնած էր ինքնաթիռի լուսամտի մոտ:

— Փորձում եմ կենդանացնել, — ասաց Իգային:

— Կի՞ն է...

— Ինչպես տեսնում ես:

— Երևի այն ժամանակ դրա ձայնն եմ առել:

— Երևի:

— Ուրիշ փրկվող չկա՞:

— Ոչ:

Մարսըները վիպը ձգեց, որպեսզի ավելի լավ տեսնի հառապին փռված կնոջը:

— Չուր ժամանակ ես կորցնում, — մրթմրթաց նա:

— Ինչո՞ւ: Բավական է բժիշկը մի հաստ սրսկի:

— Ի՞նչ բժիշկ:

— Որևէ մեկը: Քաղաքում:

— Դու ուզում ես նրան քաղաք տանել, — գոռաց Մարսըները: — Այդպիսի բան չես անի:

— Ինչո՞ւ:

— Եթե մեզ տեսնեն նրա հետ, ամեն ինչ կհասկանան:

— Ի՞նչ կհասկանան:

— Որ մենք բարձրացել ենք ինքնաթիռի մոտ:

— Հետո՞:

— Հետո՞: Հորթի գլուխ: Ռ՞վ կհավատա, որ մենք այստեղ ենք եկել ոտքներս ցրտահարելու: Մեկ կկասկածեն ինքնաթիռը կողոպտելու մեջ: Ոստիկանությունը կհետևի մեզ: Կհարցաքննեն, կհուլարկեն: Կձերբակալեն մեզ: Ա՞յդ ես ցանկանում:

Իգային շտկվեց և տխուր վննեց եղբորը:

— Դու չեի՞ր ասում, որ մենք մեռածներից իրավունք ունենք վերցնելու ինչ-որ ուզում ենք և որ մենք ոչ ոքի վնաս չենք տալիս...

— Դու սխալ ես հասկացել, ինչպես միշտ: Ես քեզ կրկնում եմ, որ այսպիսի գործերը պետք է կատարել առանց վկայի: Եթե նրան քաղաք տանենք, պետք է ամեն ինչ հայտնենք:

— Լավ: Ամեն ինչ կհայտնենք, — ասաց Իգային: — Ավելի լավ:

Մարսըները սեղմեց բռունցքները: Դեմքն այլանդամվել էր կատաղությունից:

— Թող դրան, — կարճ կապեց Մարսըները:

— Չեմ կարող, — մրմնջաց Իգային, — եթե թողնեմ, կմեռնի:

— Ի՞նչ անենք: Ես քեզ չեմ բերել այստեղ փրկարարի դեր կատարելու: Դու երդվել ես ամեն ինչում աջակցել ինձ: Իսկ հիմա վիճում ես հետս, ինձ ուշացնում...

— Չե՞ որ արդեն վերջացրել ես:

— Ես կարող էի ավելին հավաքել: Բայց ժամանակ չունենք: Ինքդ էլ գիտես: Պետք է վերադառնալ...

Իգային նայեց երիտասարդ կնոջը: Քնած էր կարծես: Չէր շնչում, չէր մտածում: Իգային կարծես կախված էր սրանից, միայն թե ապրեր, սպառվեր մահվան ճիրաններից: Իգային ժպտաց: Իգային ասաց.

— Սա հնդկուհի է: Իսկական հնդկուհի...

— Գալի՞ս ես, թե ոչ, — գոռաց Մարսըները:

Իգային ուղեպարկը ուսովը գցեց, վկնոցը կապեց, հագավ ձեռնոցները:

— Վերադարձի ճանապարհը փոխում ենք: Կզնանք սառցադաշտով:

— Ինչո՞ւ: Չէ որ դա ավելի երկար է:

— Շատ կղժվարանանք իջնելիս: Երկաթե ձողերից սահնակ կսարքեմ, հնդկուհուն կբաշեմ ներքև...

Նրա խոսքը մնաց բերանում: Մարսըները կուպտորեն բռնեց թևից.

— Թող ինձ, — ասաց Իգային դանդաղ:

Բայց Մարսըները բաց չէր թողնում թևը: Վեր քշտած ջրթունքներից խպոց էր լսվում: Չարությունից ու ասելությունից աչքերը դուրս էին թռչում: Նա նման էր ոսկորը պաշտպանող շան:

— Հերիք է, — մրթմրթաց: — Առաջ ընկիր:

— Հապա հնդկուհի՞ն:

— Թող նրան:

— Եթե թողնենք, հավասար է սպանելուն: Դու ինչպե՞ս կարող ես թույլ տալ, Մարսըներ:

— Այո, ես կարող եմ թույլ տալ, — գոչեց Մարսըները: — Ես

չեն ճանաչում նրան: Ինձ համար մեկ է, եթե պետք լինի, մատնեղովս կխեղդեմ նրան, որպեսզի քեզ ստիպեմ հետևելու ինձ:

— Այդպես մի խոսիր, Մարսըլեն, — աղաչեց Իգային:

Եվ հանկարծ ասես մի ներքին փոթորկի ազդեցությամբ, նրա ողջ մարմինը լարվեց: Նրա թևը սեղմող ձեռքը քաշվեց կողմ ցատկեց: Նա լսեց Մարսըլենի փոխված ձայնը.

— Ինձ մի վախեցնի, Չայի: Կարգադրողը ես եմ:

— Ոչ այս դեպքում, — ասաց Իգային:

— Եվ այս դեպքում և հետո: Ես թույլ չեմ տա, որ ինձ ապուշի նման տանես գյուղ: Հո գործերս չես ձախողելու այս կապիկի պատճառով:

Իգային փոխանակ լսելու եղբորը, ծանր պնտում էր նրան: Հանկարծ նրան թվաց, թե Մարսըլենը անձանոթ է իրեն, թե իրենք ոչինչ չգիտեն միմյանց մասին, երբեք միասին չեն ապրել և առաջին անգամ են հանդիպում իրար:

— Ինչո՞ւ ես ասում, որ դու իմ եղբայրն ես, — հարցրեց Իգային:

Նա վերհիշեց Մարսըլենին, որ հրճվում էր ինքնաթիռի բեկորների մոտ, վազվում դիակների մեջ, ջուռ-մուռ տալիս, և վախից ու շտապելուց դողացող ձեռքերով կողոպտում նրանց:

— Իմ եղբայրը չէր կարող այդպիսի բան անել, — շարունակեց Իգային: — Նա չէր կարող հրաժարվել օգնելու լեռներում կորած մարդուն: Ես քեզ չեմ ճանաչում: Գուցե քո անունը Մարսըլեն է, բայց ես քեզ չեմ ճանաչում: Հեռացի՛ր իմ ճանապարհից:

— Արիկա՛, — ոռնաց Մարսըլենը: — Վերջին անգամ եմ ասում, գալի՛ս ես, թե ոչ:

— Ոչ քեզ հետ, — ասաց Իգային, — ոչ քո ուլածի պես...

— Ա՛հ, ո՞չ:

Բռունցքի մի հարված իջավ Իգայու շրթունքին: Նա բերանում այրան համ զգաց: Նրա հայացքը պղտորվեց:

— Դու ինձ խփեցիր, — ասաց նա կամացուկ, — որովհետև գիտես, որ ես իրավացի եմ: Գող և մարդասպան: Ահա թե ով ես դու: Չար է քո հոգին: Դու ապրելու արժանի չես...

Մարսըլենի ձեռքը մեկնվեց երկրորդ անգամ, բայց Իգային բռնեց օդում և ուժով ծռեց: Միաժամանակ Իգային ապատ ձեռքով խփում էր այդ ծամածռվող դեմքին, որ ցնցվելով խոնարհվում էր իր առջև: Բռունցքը սլաքի նման ճոճվելով անդադար գնում էր ու գալիս: Նա ձեռնոցի տակ զգում էր ձեռքի պրկումը: Լսում էր ատամների չոր կափկափյունը, որ կրկնվում էր ամեն վարկի հետ: Բայց այլևս չէր կարողանում դադարեցնել: Չայրույթը չէր նրան մղողը: Նրա միտքը հանգիստ էր, կարծես դա մի ծանր, անհրաժեշտ և անհետաձգելի գործ էր: Ծընկներիս ընկած Մարսըլենը թույլ դիմադրում էր և խռպոտ ատում.

— Դու խենթ ես... Չայի... Չայի... Թող, հերիք է...

Թանձր հեղուկ էր հոսում ռունգներից: Բերանը վերք էր դարձել և լցվել վարդագույն գեղիկներով: Աչքերը շաղվել էին: Իսկ Իգային անվրեպ ու համառորեն խփում էր, ու կրկնում.

— Դու Մարսըլենը չես... Դու Մարսըլենը չես...

Վերջապես Մարսըլենը դադարեց բողբոջելուց: Արյունոտ էր դեմքը: Նա կորցրել էր գիտակցությունը: Այլանդակված շուրթերից խոխոռոց էր լսվում: Իգային ժպտաց: Շունչը տեղը բերեց, շփեց հոգևած ձեռքերը.

— Հիմա հանգի՛ստ ես:

Այնուհետև նա լոք տվեց եղբոր մարմնի վրայով և խոնարհվեց կնոջ վրա:

— Եկեք տիկին, — խուլ շշնջաց նա: — Գնում ենք:

Նա կնոջը թևերին առավ: Կինն այնքան թեթև էր, որ Իգային ծիծաղեց.

— Այսքա՛ն: Սա կշիռ չունի:

Դուրս եկավ ինքնաթիռից: Քամին մտրակեց դեմքը: Թմրած, ձյունից շագած, նա որոնում էր մի բեկոր, որ կարելի լիներ օգտագործել իբրև սահնակ: Ինքնաթիռից երեսուն մետր այն կողմ, ընկած էր մի պոկված դռնակ:

— Սա կլինի:

Ծայրահեղ պուշույթամբ Իգային անձանոթուհուն տեղավորեց թիթեղյա դռնակի վրա, ծոծրակի տակ դրեց ոլորված շուրթեր, նրան փաթաթեց ինքնաթիռից բերված մուշտակներով: Կնոջն արդեն ամուր կապել էր սահնակին, երբ թիկունքում լսվեց Մարսըլենի ձայնը.

— Չայի՛, Չայի՛, սպասի՛ր...

Իվային չպատասխանեց այդ կանչին: Նա ոչ ոքի չէր թողել իր ետևում: Խիղճը հանգիստ էր: Թիթեղի վերին ծայրում մի ճեղք կար, նյութեղից պարսն կապեց, որպեսպի քաշի սահնակը: Հետո գտնելով և հագնելով խզանները, սահնակը հրեց ձյունոտ նախալեռները: Նա առաջ էր գնում մանր, կանոնավոր քայլերով: Իր առջև սահում էր կինը՝ մեջքին պռակած, արծաթափրփուր ձնափռուռ մեջ: Նա այնքան թեթև էր, որ սահնակը համարյա չէր դիպչում գետնի անարատ ձերմակությանը. Իվային դիտում էր այդ երազ դեմքը: Ռունգից կախված ոսկյա գինը դյուրում էր իրեն աստղի պես, որ մեկ երևում էր, մեկ կորչում տեսողությունից, մեկ նորից երևում և սիրույց ցցում ուրախությամբ: Մի պահ նրան թվաց, թե հեռվից լսում է ոտքերի թույլ քառքառոց և ահաբեկ ձիչ:

Նա գլուխը շրջեց: Մեկը գալիս էր իր հետքերով.

— Սպասի՛ր, Չայի՛... Ես էլ եմ գալիս... Հո մենակ չե՞ս թողնելու ինձ... Եւ ճանապարհը չեմ գտնի... Չայի՛... Չայի՛... Չայի՛...

Մարտիկներ մի կերպ ապավելով թորությունից շարժում էր ձեռքը և հարբածի նման օրորվում: Նրա ձայնը գնալով նվազում էր, դառնում ավելի ու ավելի աղերսագին:

— Չայի՛... Ես ոչինչ չեմ ուզում քեզանից... Օգնիր ինձ... Օգնիր ինձ, Չայի...

Քառու բերած ձայնին անտարբեր, Իվային հանդարտ քայլում էր: Ամեն դարավորս հանդիպելիս, նա ասում էր.

— Ներեցեք տիկին... ես մեղավոր չեմ... դուք հո շատ չե՞ք մրտում, տիկին... վատ չե՞ք պոում...

— Չայի՛... Չայի՛...

Արձագանքը տարածությանն էր հանձնում այդ միապաղատ հեծեծանքը: Սահնակի կապը մեկ պրկվում էր, մեկ թուլանում, նայած գետնի մակերևույթին: Իվային վիրավոր ձեռքով սեղմել էր պարանը: Ժպիտը ծամածռում էր շրթունքները: Հայացքը շարունակ Հնդկաստանից եկած կնոջ վրա էր, որ սահում էր ձյան վրայով, և ինքը նրան առաջ էր մղում:

Կիրճից հետո վառիթափը սքողված էր պղտոր ամպերով: Սառցադաշտը սկսվում էր այս լայն լեռնանցքի ստորին ծայրից, որտեղ քամին չարագույժ սուսելով կույ էր գնում: Սպիտակ փռուռ ալիքները հրաքեփ ծխի նման գալարվում էին գետնին: Վախենալով, թե ձյունը կարող է փխրուն լինել, Իվային քանդեց անծանոթուհուն տանող սահնակի կապերը, նորից շփեց նրան, ապա փաթաթեց լայն մուշտակով և շալակեց՝ ոտքերը մտցնելով իր ուղեգարկի փոկերի արանքը, իսկ ձեռքերը թաշկինակով կապելով իր վզի շուրջը: Ուշաթափ, աչքերը փակ, գլուխը թույլ ընկած ուսին, նա կարծես կշիռ չուներ: Իվային նորից ձանձառ էր ընկել, երբ Մարսըլենը հասավ.

— Չայի՛... ինձ ո՞ւր ես թողնում...

— Կորի՛ր,— գոռաց Իվային:

— Ես կօգնեմ, որ տանես դրան:

Իվային քրիչը վենքի պես ճոճեց:

— Ձեռք չտաս:

Սուվերը, կարծես քամուց հալածվելով, շեշտակի խուլյա տվեց:

— Կորի՛ր...— նորից գոռաց Իվային:

Վիզն ու մեջքը ճկած, նա սկսեց վայրեջքը: Խզանները ծանրացնում էին քայլերը: Սուր բյուրեղիկների մրրիկը խփում էր դեմքին: Այտերի մաշկը ծակծկում էին հազարավոր ասեղներ: Աչքերը կաթնագույն մշուշ էր ցզվում: Ականջին մղավում էր բլիպարը՝ լեռնափն քամին: Ամեն քայլափոխի նա քրիչով ռուպի կեղևը ձեղքվում էր մարմնի ծանրությունից և նա ռուպի կեղևը ձեղքվում էր մարմնի ծանրությունից և նա մինչև ծնկները խրվում էր փոսի մեջ: Կիրճից դուրս գալիս, Իվային իբրև տեղանիչ ընտրել էր մի ժայռաբեկոր, ուր ուրվագիծը փառ էր պանապանվում թափփող կարկտի պատճառով: Այդ սահմանաքարը միակ ամուր կետն էր տիեզերքում, որ փախչում էր և վերածվում ալաբաստրի փռուռ: Իվային գնում էր դեպի ցզված քարը, ինչպես բարեկամի մոտ, որ դառեր ի վեր մնացել էր այնտեղ իրեն ընդունելու համար: Մի

քանի անգամ պատրանախար եղավ, կարծելով, թե նպատակը արեքան մտփիկ է, որ ձեռքը մեկնի, կհասնի: Նա հավատացած էր, որ կհասնի: Նա պարզում էր ձեռքը: Իսկ սև վանգ-վածը չքվում էր, գործում ներքև և քսան մետրի վրա կանգ առնում՝ նույրք աղափոջու հորձանուտի մեջ: Նա մրթմրթաց..

— Լեռը խաղ է անում մեզ հետ, տիկին: Սովորությունն է: Մի բարկացեք:

Վերջապես ձյունոտ ու սառցապօծ գրանիտյա փարոսը խոշորացավ, անշարժացավ և դարձավ շոշափելի: Իգային ուսը հենեց խորդուբորդ վանգավածին, մի փոքր շունչ առնելու: Կարծես արձձե պսակ էր սեղմում քունքերը: Նրա մկանները հոգնածությունից թրթռում էին: Վանոցի և վզի արանքում սառույցի շերտ էր գոյացել: Դեմքը կարծես ծածկված էր ինչ-որ ազակիս նյութով, որ ճաքճքում էր, երբ նա բացում էր բերանը կամ բարձրացնում հոնքերը:

— Չայի՛, Չայի՛...

Լեռը նրա անունն էր տալիս:

— Տեսնո՞ւմ եք, տիկին,— շնչաց նա:— Այստեղ կարծես տունն փնի: Վահեճալու կարիք չկա: Մեր տրամադրության տակ ամբողջ երկու ժամ ունենք: Դա հերիք է ամենադժվարը անցնելու համար:

Իգային նրա հետ խոսում էր, ինչպես հաճախորդի հետ:

— Գնացինք:

Համառարած հարթ սառցադաշտը հոսում էր նրա ոտքերի տակ և հետպիտե կորչում սառը, անփայլ, պարող, ճչացող գողոջու մեջ: Իգային քննարկեց իր դիրքը և ծրագրեց երթուղին: Ուղեկցորդի բնապը գործում էր առաջվա վստահությանմբ. «Բայել ուղիղ դեպի հարավ, թեքվել արևելք, ապա նորից ուղիղ դեպի հարավ»: Ուժ հավաքելով՝ նա առաջ ընկավ: Չյունը պտտվում էր ջուրջը, կարծես նրան մեկուսացնելով բանտախցում, և նա քայլում էր, հետը տեղափոխելով իր մատախուղե բանուղ: Այդ մթամած վահանների ելում, իր կամքով, արագորեն փոխվում էր տեսարանը: Ինչ-որ բանվորներ ետ-ետ էին գնում և իր ոտքերի տակ բացում մի ապիտակ գորգ: Եվ եթե ինքը ուզենար հասնել նրանց, կընկներ անդունդը: Տարօրինակ էր: Կնոջ գլուխը կախված էր իր ուսին: Եր-

բեմն մարդկային մի հառաչանք էր դիպչում այտին: Եվ քամին: յուրովի պատասխանում էր: Իգայու ոտքը դեմ առավ մի ձևակույտի, և նա չոքեց: Անապատում ծունկի եկած նա կարծես աղաչում էր մեկին: Նա կորցնում էր արիությունը: Տեսարանը ճղճվում էր արցունքներից մշուշված աչքերի առջև: «Դիմա-նայ: Հասնել մինչև սառցադաշտը: Հետո կտեսնենք...»: Բայց ոտքի էլնելու համար պետք եղավ լարել բոլոր ուժերը:

— Ռչինչ, տիկին... Փոքրիկ կանգառ էր... Գնում ենք... մեկ, երկու...

Դանդաղ փոխում էր ոտքերը: Կոշտ հատիկների մի տարափ ճանկոեց դեմքը: Բերանը բաց էր: Նա դեմքին պզաց մի կտոր սառույց: «Կույ չտալ: Թքել»: Փորձեց թքել: Մի քիչ արյուն եկավ լեզվից: «Եթե անունն իմանայի, լավ կլիներ: Հնդկական անունները երևի ուրիշ տեսակ են: Մարսըլենը կիմանա»: Նա կանչեց.

— Մարսըլեն՛:

Հետո հիշեց, որ Մարսըլենը հետը չի: «Նա տանը մնաց: Բայց, ոչ, նա մտել է: Վաղուց»: Նա ծիծաղեց: Բայլում էր ավտոմատի նման: Ոտքն ու ձեռքը կարծես իրենը չէին: Կարծես քայլում էր ուրիշի ոտքերով: Այդ երկար տևեց: Թերևս երկու ժամ: Կամ մի քանի ժամ: Ժամանակ առ ժամանակ մի կորած ձայն կրկնում էր.

— Չայի, Չայի... Սպասիր... Այդքան արագ մի գնա...

Բայց Իգային համոզված էր, որ ինքը լեռներում մենակ է հնդկուհու հետ: Մտքերը ցրելու համար աշխատեց հիշել բառարանում տեսած պատկերները: Տաճարներ, ապարանքներ, սրբաված արձաններ, սրբապան փղեր, սրինգի հնչյունների տակ պարող օձեր... Լեռնալանջի միապաղաղ մակերևույթի աջ ու ձախ կողմերում հայտնվեցին հսկա գավակներ: Սպիտակ փղերի հոտ էր անցնում մատախուղի միջով: Քամին երգում էր: Ֆոսֆորափայլ փողի էր գալարվում օդում: Հարյուր մղոն այն կողմ երևում էր ձյունափայլ սյուներով մի շենք՝ ակոսաձև սառցե տանիքով:

— Ինչպիսի՞ն է Հնդկաստանը, տիկին: Պատմեցեք: Հետո անշուշտ: Ժամանակ ունենք... Ապօրանքներ... փղեր... օձեր... արեգակ...

Նա մի փոքր էլ բարձրացրեց բեռը:

— Եվս մի քիչ ջանք, տիկին:

Այդ խոսքերն արտասանելիս, կատաղի մորիկը ճոճեց նրան: Հավասարակշռությունը պահպանելու համար նա բրիչը խրեց ձյան մեջ: Ուռքերը փայտացած, կզակը կրծքին հակած, նա դիմադրում էր կատաղի հուսանքին: Կարծես ամբողջ աշխարհը փոթորկի շնչով կործանվում էր գլխին: Անհանգիստ, շնչասպառ կանգնել էր, թվում էր, հիմա կզոկվի գետնից և կքջվի անտակ անդունդները:

Հանկարծ կատաղի գոռում-գոչյունին հաջորդեց աստղային լռություն: Հենարանը կորցնողի պես Իվային երևազ գառաբկության մեջ: Երբ նորից բացեց աչքերը, տեսավ, որ ինքը ընկած է ձյան մեջ: Հաճեի ծուլությունը ընդարմացրել էր մարմինը: Շարժվելու ցանկություն չուներ: Երանություն էր պոռն: Անձնատուր էր եղել սպիտակության և ցրտի նուրբ ծփանքին, որ թափանցում էր նրա մարմինը: Քամին վերսկսվեց: Մառախուղի ալիքը շղարշյա առագաստներով նավի նման սահեց ձախ կողմում: Դրան հաջորդեց մի ուրիշը: Իվային հենվեց արմունկներին, վերցրեց բրիչը, որի ծայրը մի կորիկ, կապույտ վառիկ էր թողել ձյան մեջ: Նա մատների ծայրով քերծեց սառույցի կեղևը: Ի՞նչ էր արդյոք հեռվում, տեսանելի աշխարհի աստիճանագծում երևացույ այն զմրուխտյա ձեղքը:

— Սառցադաշտը, — գոռաց Իվային:

Թափով ուռքի կանգնեց: Փխրուն բռն օրորվում էր մեջքին:

— Տրկին, տիկին, մենք փրկված ենք:

Մի սավեր էր գալիս իր կողմը:

— Օղին քեզ մոտ է, Չայի... Տուր ինձ... Ես այլևս չեմ կարող, մեռնում եմ...

— Չմոտենա՛ս, — գոռաց Իվային:

— Մի կարթի օղի...

Մարդը կարծես պտտվում էր կառուելի մեջ և ուզում էր գտնել հավասարակշռությունը: Ուռքից գլուխ սպիտակ: Դենքը սառցակալած, աչքերն ապակիացած, մի արյունոտ ձեղք բերանի փոխարեն:

— Խղձա, Չայի...

— Ես քեզ չեմ ձանաչում:

— Ես Մարսըլենն եմ:

— Ոչ:

— Տուր, տուր:

— Խսելու քան չկա: Խմած վերջացված է: Կինն է խմել: Մարդն ընկավ ձյան մեջ: Մի կույտ բուրջ: Նա լաց էր փնտում: Մեկնում էր ձեռքերը:

— Մենք գնանք, տիկին, — ասաց Իվային:

Նա քայլեց դեպի ձեղքը: Բրիչի կտուցը շոշափում էր գեփերը, որը հարթ և կարծր էր թվում: Բայց փափուկ սփռոցով ծածկված սառցաբաշտում բազմաթիվ ձեղքեր կային: Չյունը կաչում էր խլաններին: Հողմը կուրացնում էր: Նա պոռչ առաջ էր շարժվում սպիտակ հեղեղի միջով: «Որտե՞ղ եմ ես: ոչ մի նշան: Ամեն ինչ հարթվել է: Գուցե ձյան կամուրջի վրա եմ: Երևի կոխմանա: Բրիչի կոթը հեշտությամբ խրվում է: Ահ, այստեղ կոչտ է: Պահում է: Կարեղի է անցնել: Անցնում ենք... Ուղիղ դեպի հարավ...»: Նրա շուրջը ասեն ինչ կեղծ էր: Չյան ալիքներ, իրար մոտեցած ժայռապուռնիներ, սփռված պանրի գլուխներ: Մարմարի փշրանքների քամում լաբիրինթոսներ էին բացվում:

Իվային կանգ առավ, ետ նայեց, որպեսզի չայի անցած տարածությունը: Այնտեղ, մառախուղի մեջ մի սև կետ էր շարժվում շաքարաջուրն ընկած ձանձի պես: Կյանքի այդ արտառոց մասնիկը համառորեն առաջ էր գալիս: Շուտով նրա վրա բուսեցին գլուխ, ձեռքեր և ուռքեր: Փոքրիկ մարդը անցնում էր անդունդի ելքով: Նա ոռնում էր.

— Չայի՛, որտեղի՞ց անցնեմ... առա՛... ասա... այստեղի՞ց...

Հանկարծ լսվեց պատովող մետաքսի ջրչյուն, ապա՝ հառաչանք ու հեծեծյուն: Չյան քիվը այնպես փափուկ պոկվեց, ինչպես թիվածքի եպր: Փոքրիկ մարդը ոտնատեղը կորցնելով, անատուհի նման բառաչեց, ձնափոխվեց և չքացավ անդունդում: Դա այնքան արագ կատարվեց, որ Իվային մի պահ չհավատաց աչքերին: Մի անգամ էլ նրա ականջին հասավ.

— Չայի՛... Չայի՛... օգնություն...

Ոչ, հավանաբար քամին էր խոսում այդպես և սառույցի կանգվածները կատակով կրկնում էին ձայնը՝ մերթ վայրագին.

մերթ աղեկտուր: Այստեղ տիրում էր կատարյալ մենություն և անշարժություն: Ոչ մի բան չէր խախտվել: Կորուստ չկար: Իգային շարունակեց ճանփան:

9

Ստոգալաշտից հետո ճանապարհը հեշտացավ: Մի սառած կածան էր ձգվում քարակոյտից և գալարվում ձյունոտ ժայռաբեկորների մեջ: Հեռվում, վերջալույսի մեջ երևում էր մի ննջարան՝ ալիք-ալիք վեր բջտած վարագույրներով: Հանկարծահաս խավարը աղավաղում էր հեռանկարը: Քամին հանդարտվել էր: Մոտենում էր գիշերը:

Իգային քայլում էր հոգնածությունից ամեն ինչ մոռացած: Հնդկուհուն առել էր թևերի մեջ, որ տաքացնի: Որքան թեթև է կրծքին լուռ ու հեղ սեղմված կինը: Գլուխն իջեցնելով ինքը կարող է մորթիների փափուկ բևուռ տեսնել նրա քնած դեմքը: Նա վստահում է իրեն: Նա ապավինել է իրեն: Թույլ գառնուկի պես, որ չի կարող սար բարձրանալ: Նրան թվում էր, թե իր բոլոր գառներին տարել է գուռ, բայց այս մեկը մոլորվել է լեռներում, և ինքը բարձրացել է որունկու նրան: Եվ այժմ տուն է տանում: Ամեն ինչ այնքան պարզ էր:

— Շուտով կհասնենք... Տանը տաք կլինի... Ես կրակ կվառնեմ... Կփուկեմ դուռը... Մուները սպասում է մեկ...

Նրա քայլվածքը ծանր էր: Եվ ամեն մի քայլը ականջում հնչում էր մուրճի հարվածի նման: Նա նույնիսկ չէր մղրտում: Չեռքերը ծվառված, դեմքը՝ մինչև ոսկորները պրկված, նա ուղիղ առաջ էր գնում, ուշադրությունը լարած, որ հանկարծ չընկնի իր բեռի հետ: «Գառնուկ, նուրբ գեղմով գառնուկ: Ոչ, սա գառնուկ չէ: Սա հնդկուհի է: Գառնուկի պես թեթև հնդկուհի...»:

— Ես ձեզ գառնուկի տեղ դրեցի,— ասաց Իգային:

Խոսելուց ցավ էր պոսում: Էնկուն կարծես գաջոտ լիներ:

— Ես ձեզ գառնուկի տեղ դրեցի, բայց ոչինչ: Ես ձեզ ցույց կտամ մեր գյուղը: Կուրախանաք մեր մեջ: Ճիշտ է, փիղ չկա, ինչպես Հնդկաստանում, բայց կա արջամուկ... ձրիղ... ցախաքլոր... Մի օր Մարսըրենը ցախաքլոր էր սպանել... Դուք

Մարսըրենի չե՞ք ճանաչում... Լավ եղբայր է... բարեկամ... Ես նրան ապատել եմ իմ ձեռքերով... Ես եմ մեծացրել... Հետո նա մեռավ... Հինա ես մենակ եմ ապրում Ծեր ամուսինների ավանում: Իսկ դուք Կալկաթայո՞ւմ եք ապրում: Կալկաթու, Կալկաթու... ապարանքներ... փղեր... օձ հմայողներ...

Նա սայթաքեց և կանգ առավ աչքերն արցունքներով լի: Հանկարծ, այլևս չկարողացավ շարժվել: Ուժ չկար ուղեբեռում: Երկինքն ու երկիրը շփոթում էին իրենց ուրվականները: Վերևից ընկած սուլերը սողում էր ներքևում: Մոռանալ, քնել: Նա վերստին նայեց այս գորշ խավարի շիվափափին, որ լուռ խառնում էր քամին: Եվ հանկարծ նրան թվաց, թե հեռվում լույս է տեսնում: Հովիտը: Առաջին տները: Հեռու են դեռևս: Բայց որոշակի: Նրա ձեռքերը սեղմեցին կնոջ մարմինը, որ պեսուկ նրան հաղորդեին հույսի ծուռնոցը: Նա գլուխն այնքան իջեցրեց, որ շունչը դիպավ այդ փոքրիկ, թանկագին էակին, որին պարուրել էր իր բազումների ջերմությամբ և ուժով: Անծանոթուհու ականջը սև, երկճյուղ վարսերի արանքում նման էր խեցու:

— Տիկին, մենք հիմա շատ մոտ ենք տանը,— ասաց նա:

Նրան թվաց, թե կինը ծպտում է: Շուրթերը բաց էին, կուպերը՝ կիսափակ: Նա այլևս չէր շնչում: Բայց ծպտում էր իրեն: Իգային հրճվում էր: Մարմնի բոլոր երակները երգում էին: Հոգին ցնծում էր: Նա վերսկսեց ճանփան, ուսերն ուղիղ, գլուխը բարձր, կրծքին սեղմած այս անտարբեր բեռը, որի անունն անգամ չգիտեր:

\*  
\* \*

Լեռնալանջը, անհարթ ասեղուղքներով տանում էր տների մոտ: Իգային իջավ, բարձրացավ, քայլեց, նորից իջավ, շքլուջանցեց բլրակը, որի կուրծքը կարծես կաթից ուռել էր, կտրեց լուսնագույն մի դաշտ: Ոտքի տակից սահում էին խճաքարերը: Քամին ածելու պես կտրում էր դեմքը: Ծնկները ծալվում էին: Իգային այլևս չէր քայլում, նա մի ոտքից մյուսն էր ընկնում: Սառույց և քար: Ուրիշ ոչինչ: Հետո հայտնվեցին մի քանի թիռտներ՝ մեկուսի, կծկտած, քարացած սպունգների նման:

Մի ջրվեժ երգեց մթայթյան մեջ: Չունը փափկեց: Խավարում երկչուտ հայտնվեց կուենու անտառակը: Երբեմն մի ճյուղ, ապամվելով ձնափոշուց, գնպանակի պես ցցվում էր և ճոճվում: Իգային հանեց խլանները: Անտառից հեռոտ, փոսի մեջ երևաց գյուղը՝ անթարթ լույսերով: Գյուղի ճանապարհը բռնելու փոխարեն, Իգային ընտրեց մի արահետ, որ ուղիղ տանում էր եկեղեցու մոտ և շարունակվում էր դեպի Ծեր ամուրիների ավանը: Լուսինը դուրս եկավ ամայի տակից: Չանգակատունը շաքարե գլխարկ էր դրել և քաջել աչքերին: Առանջնորդվելով այդ սպիտակ գլխարկով, Իգային հյուժված, ծալվող ծնկներով, ապթաքելով իջնում էր հովիտ: Կնոջ գլուխը օրորվում էր նրա արմունկի ծալվածքում: Իգային հնում էր:

— Ահա, ահա, հասնում ենք... Սա եկեղեցին է... Մի փոքր այն կողմ գերեզմանոցն է... Իմ ծնողներն այնտեղ են թաղված... Մարսըները նույնպես... Ես էլ տեղ ունեմ այնտեղ...

Բլուրից իջնելիս, նա կանգ առավ ջունչը տեղը բերելու: Գյուղի տները՝ ապիտակ տանիքներով և յուղաթղթի պես դեղին, պայծառ, քառակուսի լուսամուտներով, քնել էին: Ոլորմուտը ծուխ էր բարձրանում երկինք: Մի վանգակ դողանջեց: Մարի Լավալուի ջունը կատաղի հաչաց: Իգային սարսուռաց: Հանցանքի մեջ բռնվողի նման մեջքը դարձրեց տներին և ուղղվեց Ծեր ամուրիների ավանը:

— Այստեղ եմ ապրում... նայեք...

Ավերված, սև, դատարկ խրճիթները ծովել էին ձյան ծանրությունից: Քամին սուլում էր նրանց տձև խոռոչներում: Նրանց սուլերը փակում էր ճանապարհը: Իգային բապուկներով ավելի ամուր սեղմեց հնդկուհուն, ասես նրան պաշտպանելով անտեսանելի հիացողներից: Վերադառնալով այս սովորական վայրը, նա չգիտես ինչու, նեղարտեց: Ինքն արդեն գյուղի մարդկանց մեջ էր: Նա այնու մենակ չէր հնդկուհու հետ: Պետք էր պուշանալ ուրիշների հետաքրքրությունից:

— Շուտ մտնենք, — ասաց նա, — թող մեզ չտեսնեն...

Տան դուռը սառցակալել էր: Նա ոտքով կուտրեց կեղևը և փեղկը հրեց: Դեմքին դիպավ ծխի ու կաթի բույրերով լի մոռայ

գիշերը: Նա մտավ խոշոր, խավար սրահը: Ականջին հաստով զարթուցիչի տկտկոցը:

Նա ասաց.

— Սա իմ տունն է, տիկին:

## 10

Իգային կնոջը պառկեցրեց մահճակալին, վրայից հանեց մուշտակները: Ապա ճրագ վառեց: Բոցը ելավ ապակու մեջ: Պատառոտված, արյունոտված, ապիտակ պզեստով պառկած կինը կարծես հանգստանում էր: Մանուշակագույն շղարշը կպել էր ուտերին: Բոցկտում էին արծաթյա ապարանջանները: Ոսկեպօծ գուռին գրկում էր մեջքը: Իգային դյուրված նայում էր հնդկուհուն:

— Եթե իմանայի, ավելի լավ կհավաքեի սենյակը...

Հոգնածությունից շարդվել էր և պարսնանում էր, որ ինքը ողջ առողջ է և գտնվում է չորս պատերի մեջ: Մի մկան էր տրոփում որովայնում: Բեռին վարժված թեւորը կակդում էին և թուլանում: Եղյամը հալվել էր և խառնվելով ուրախության արցունքներին, հոսում էր դեմքն ի վար: Նա հանեց գլխանոցը, ձեռնոցները, որ սովաբաթղթի պես կոտրվում էին: Հագուստներից թանձր գոլորջի բարձրացավ: Մահճակալի վերնում, ջրջանակի մեջ փայլում էր Քրիստոսի կարմիր, սուրբ սիրտը: Իգային խաչակնքեց և հառաչեց.

— Փառք քեզ, տեր, որ օգնական եղար ինձ:

Կինը անշարժ էր: Չայն չկար: Նրա դեմքը մեղրամոմի պես դեղին էր և մաքուր: Նրա վարսերը կարծես գերել էին գիշերը: Փռքրիկ ոսկյա գինդը ճանճի նման նստել էր նուրբ քթի թևին: Ոչ մի վերք չէր երևում: Որտեղի՞ց էր թռել հոգին:

Իգային գիտեր, որ հնդկուհին մեռած է: Բայց նրա համար ոչ մի նշանակություն չունեք այդ: Նրա համար հնդկուհին ուրիշ եակների նման չէր: Եվ անհրաժեշտ չէր, որ Երազի և Իրականության կիսաճամփին նա շնչեր, ապրեր: Միևնույն է, նա տանն էր: Ամեն ինչ լավ էր, և ինքը գոհ էր: Իգային շնչաց.



— Հիմա վառարանը կվառեն, ընթրիք կպատրաստեն: Մի լավ ապուր կեփեն: Պանիր կա: Կտեսնեք մեր պանրի համը: Սարի հոտ ունի...

Գոմում լավեց մայուն և կճղակների հարված:

— Ներեցեք,— ասաց նա,— պետք է պալվեն անասուններով: Տերեկը չեմ կթել: Խեղճերը տանջվում են, կուրծքները լցվել են...

Նա մտավ գոմ: Ռջխարները սպասում էին իրեն: Իվային շոյեց նրանց, ջուրը փոխեց, խոտը թարմացրեց: Հետո պպեց կթելու: Նա ասում էր.

— Գիտեք, տանը նոր մարդ կա... էյուր ունենք... Հնդկաստանից եկած տիկին...

Շուրջը խմբված ոչխարները, ուշադիր լսում էին և ուտում չոր խոտը: Իվային դեմքին պզուկ էր ոչխարների պղտոր քիթերի նայվածքը: Նրանց հոտը բուժում էր իր հոգնածությունը.

— Մազերը սև են, արծաթյա ապարանջաններ ունի... Մի ոսկյա գինդ կա ունգին... Նա գեղեցիկ է... Նրա երկրում փղեր կան և պարող օձեր...

Մուկները եկավ և քնքուշ դունչը քսեց նրա ուսին:

— Ես նրան պատմել եմ քո մասին, Մուկեր... և մյուսների մասին...

Նրան պատասխանեց մի բարակ մայուն: Անասուններն իրեն հասկանում էին: Նա ծիծաղեց.

— Ո՞վ կհալատա... Սպասեք մի քիչ... Գնամ տեսնեմ ինչ է անում: Չեմ ուրում մեկակ թողնել...

Նա վերադարձավ սենյակ, աթոռ քաշեց և նստեց հնդկուհու դիմաց: Գլուխը ձեռքերի մեջ, արմուկները ծնկներին, Իվային կարծես սպասում էր, որ կինը արթնանա: Պահում էր շունչը: Հոգնած աչքերը մշուշվում էին: Մի գունդ էր ծանրանում գանգում: Մի պահ նրան թվաց, թե թեթև ալիք անցավ անձամոթուհու մարմնով: Հագուստները ծփացին: Դեմքը կենդանացավ:

Իվային բռունցքով տրորեց կուպերը, նորից նայեց և համոզվելով, որ սխալվել է, ժպտաց.

— Հանգստացեք, տիկին... Ժամանակ շատ կա...

Քամին սուլում էր դռան ետևում: Գերսնները ճռում էին:

Չունտո գիշերը կպել էր եղյամակալած ապակիներին: Գոմի դուռը բաց էր մնացել և ոչխարները լցվել էին սենյակ: Նրանք մանրիկ քայում էին, հոտոտում կարասիները, լիվում պատերի բորակը և գողոջ մայունով կանչում միմյանց: Նրանց առաջնորդում էր լույսը: Եվ տիրոջ հոտը: Նրանք խմբվեցին մահճակալի մոտ: Սենյակը լցվեց բրյուտ խրտոցով: Հնդկուհին կարծես լողում էր գորշ ու փափուկ բրյի ամպի վրա: Իվային շոյում էր ոչխարների մեջքը և ասում.

— Մի ազնկեք... Տեսնում եք քնած է:

ԱՆՐԻ ԹՐԱՅԻՅԱ  
ՍԳԱՎՈՐ ՁՅՈՒՆԸ

Խմբագիր՝ Գ. Պ. Սարգսյան  
Նկարիչ՝ Ա. Ի. Յարալյան  
Գեղ. խմբագիր՝ ԱՆ. Վ. Գասպարյան  
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Առնիանյան

АНРИ ТРУАИЯ

Снег  
в трауре  
Роман

(На армянском языке)  
Издательство «Айастан»  
Ереван, 1974

ՆԿԱՏՎԱԾ ՎԻՐՊԱԿՆԵՐ

- Էջ 32, վերևից 3-րդ տողը կարգալ՝ Ասոց. մարդասեր, շնորհրդ: Եթե  
երա տունը նորոգվի, կդառ.
- Էջ 91, ներքևից 9-րդ տողը կարգալ՝ ստուգում էր ձյունը: Եվ չնայած  
պայուսթյանը, երբևէն սա.

Հանձնված է շարվածքի 27/III 1974 թ.:  
Ստորագրված է տպագրության 14/IV 1974 թ.:  
Քուղթ տպագրական № 2 84 × 108 <sup>1</sup>/<sub>32</sub>, տպագ. 3,25 մամ.  
= 5,46 պայմ. տպ. մամ., հրատ. 4,7 մամ.  
Պատվեր 673: Տպարանակ 10 000: Գինը 24 կ.

«Հայաստան» հրատարակչություն, Տերյան—91, Երևան—9  
ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների,  
պոլիգրաֆիայի և զրքի անտարի գործերի պետական  
կոմիտեի № 6 տպարան, Քումանյան փողոց № 23/1:

